

2017 Թ. ԱՊՐԻԼԻ 2-Ի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ
ԶԵԿՈՒՅՑ

Պատրաստված

«Իրավունքի Եվրոպա միավորում»

իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից

«Քաղաքացի դիտորդ»

նախաձեռնության շրջանակներում

Ե Ր Ե Վ Ա Ն . 2018



Ծրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական
միության կողմից



**National Endowment
for Democracy**

Supporting freedom around the world



Kingdom of the Netherlands



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Սույն զեկույցը կազմվել է «Քաղաքացի դիպորդ» նախաձեռնության շրջանակներում «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից՝ վերջինիս, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված դիպորդական առաքելության արդյունքում:

Դիպորդական առաքելությունն իրականացվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության ազգային ինստիտուտի և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան համաֆինանսավորմամբ իրականացվող «2017 թ. խորհրդարանական ընտրությունների հանրային վերահսկողություն» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը:

Զեկույցը որևէ ձևով չի արտացոլում Եվրոպական միության, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության ազգային ինստիտուտի և Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան տեսակետերը:

«Քաղաքացի դիպորդ» նախաձեռնությունը ձևավորվել է 2013 թ.¹ նպատակ ունենալով վերահսկելու համապետական ու տեղական ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեները Հայաստանում և դրանց համապատասխանությունը ներպետական օրենսդրությանն ու Ժողովրդավարության միջազգային չափանիշներին: «Քաղաքացի դիպորդ» նախաձեռնության կայքէջն է. <https://www.citizenobserver.am/>

«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կայքէջն է. <http://ela.am>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	6
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	10
1. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ	13
1.1. Ընտրական նոր օրենսգրքի ընդունման գործընթացը	13
1.2. ԸՕ նորամուծությունները և խնդիրները	21
2. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	26
2.1. Դիտորդական առաքելությունները և դիտորդները	26
2.2. Դիտորդական առաքելության նպատակները	28
2.3. Դիտորդական առաքելությունը, մեթոդաբանությունը	29
2.4. Դիտորդական առաքելության արդյունքները	32
2.4.1. Նախընտրական քարոզչություն (քվեարկությանը նախորդող ժամանակահատվածում արձանագրված խնդիրներ և խախտումներ)	33
2.4.2. Քվեարկության նախապատրաստում	39
2.4.3. Քվեարկություն	41
2.4.4. Արդյունքների ամփոփում	47
2.4.5. Ընդհանուր բնույթի խախտումներ	45
2.4.6. Դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումներ	50
2.4.7. Քվեարկությանը հաջորդող ժամանակահատվածում դիտարկված խնդիրներ/խախտումներ	51
2.4.8. ՔԴՆ վերլուծական խմբի կողմից ընտրողների ցուցակների հիման վրա կատարված որոշ հետազոտությունների արդյունքում ստացված տվյալներ	54
2.4.9. ՏԸՀ աշխատանքների դիտարկում	55
3. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ	57
3.1. Բողոքարկման հետ կապված խոչընդոտների ամփոփ նկարագրություն	57
3.1.1. Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և դիտորդների իրավասուբյեկտության մասով	58
3.1.2. Դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ	61
3.1.3. Դիմում-բողոքների առաքումը ՏԸՀ-ներ և դրանց հանձնման-ընդունման գործընթացը	61
3.1.4. ՏԸՀ նիստերի վերաբերյալ ծանուցումներն ու դիմում-բողոքների քննության ժամկետները	63
3.1.5. Դիմում-բողոքումներով ՏԸՀ նիստերն ու որոշումները	65
3.1.6. Սեփական նախաձեռնությամբ դիմում-բողոքներով	

ներկայացված խախտման փաստերը (փաստերի մի մասը) որպես հաղորդում քննելու մասով	73
3.1.7. ՏԸՀ որոշումները բողոքարկելու իրավունքի իրացման խոչընդոտների մասով	74
3.1.8. ԿԸՀ մասնակցությունը և միջամտությունը ԸԸՀ և ՏԸՀ գործունեությանը. ՏԸՀ-ների անկախության բացակայությունը	76
3.1.9. ԿԸՀ ներկայացված բողոքների և դրանց քննության վերաբերյալ	77
3.1.10. Վարչական դատարան ներկայացված հայցերի մասով	82
3.1.11. Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի՝ որպես ՋԼՄ-ի իրավունքների պաշտպանության վերաբերյալ	82
3.1.12. Քրեական հետապնդման/ իրավապահ մարմինների կողմից կատարված գործողությունների վերաբերյալ	83
3.1.13. ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումի մասով	84
3.1.14. Ընտրությունների և ընտրությունների արդյունքների կապակցությամբ ընտրություններին մասնակցող կազմակերպությունների հարուցած ընտրական վեճերի մասով	86
3.1.15. Սահմանադրական դատարանի 28.04.2017 թ. որոշում	87
4. ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ	91
4.1. Ընտրական օրենսդրության փոփոխությունները, դրանց արդյունավետությունը և իրավակիրառ պրակտիկան	91
4.2. Պետական գործառույթների և կուսակցական շահերի միահյուսում (վարչական ռեսուրսի օգտագործում մեկ կուսակցության օգտին)	93
4.3. Ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման իրավունքի խախտումներ (քվեարկության մասնակցության և գործընթացի նկատմամբ հսկողություն)	94
4.4. Ընտրական օրենսգրքի նոր փոփոխությունների արդյունքում ներմուծված նորարարությունների մասով	99
4.5. Բողոքարկման ինստիտուտի մասով	101
4.6. Ընտրական վարչարարություն իրականացնող ընտրական հանձնաժողովների համակարգի և ԿԸՀ-ի դերակատարման մասով	102
4.7. Դիտորդական առաքելություններ	103
5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	107
5.1. Քաղաքական մրցակցության ապահովում	107
5.2. Ընտրական հանձնաժողովների և վարչարարության մասով	108
5.3. Ընտրողների ցուցակների ճշգրտում	109
5.4. Դիտորդների իրավունքների ընդլայնում	109
5.5. Բողոքարկման գործընթացների արդյունավետության երաշխավորում	110
5.6. Ընդհանուր միջոցներ	111

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԺ	Ազգային ժողով
ԲՀԿ	Բարգավաճ Հայաստան կուսակցություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸՕ	Ընտրական օրենսգիրք
ԹԻՀԿ	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
ԺԱԱ	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԻԵՄ	«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՀԱԿ	Հայ ազգային կոնգրես
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ	Հայաստանի հանրապետական կուսակցության
ՀՅԴ	Հայ Յեղափոխական դաշնակցություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄԴ	Սահմանադրական դատարան
ՏԸՀ	Տարածքային ընտրական հանձնաժողով
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ՔԴՆ	«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնություն
ՕԵԿ	Օրինակ Երկիր կուսակցություն

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2017 թ. ապրիլի 2-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել Ազգային ժողովի ընտրություններ: Հանրապետության տարածքը բաժանված է եղել 13 ընտրական տարածքի, որոնք իրենց հերթին՝ 38 տարածքային ընտրական հանձնաժողովների (ՏՀ) սպասարկման տարածքների, որոնցում ձևավորվել է թվով 2009 ընտրական տեղամաս: Ընտրություններին մասնակցել են չորս դաշինք և հինգ կուսակցություն: Ընդհանուր առմամբ, ընտրություններին մասնակցած կուսակցություններն ու դաշինքներն ունեցել են 22416 վստահված անձ: Դիտորդական առաքելություն է իրականացրել 49 դիտորդական կազմակերպություն, հավատարմագրված դիտորդների թիվը կազմել է 28021: Ընտրությունների արդյունքները վիճարկել է կուսակցությունների մեկ դաշինք՝ ՀԱԿ-ՀԺԿ: 28.04.2017 թ. հրապարակվել է ՀՀ սահմանադրական դատարանի (այսուհետ՝ ՍԴ) որոշումը, որով ընտրությունների արդյունքները համարվել են վավեր, սակայն, մինևույն ժամանակ, ՍԴ-ն ընտրական իրավունքի ապահովման և համակարգի զարգացման տեսանկյունից էական արձանագրումներ է կատարել:

2017 թ. ապրիլի 2-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ ԱԺ) ընտրությունները, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության (ՔԴՆ) շրջանակներում, դիտարկել են երեք կազմակերպություններ՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» (ԻԵՄ), «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ), «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) հասարակական կազմակերպությունները: Նախաձեռնության նպատակն է վերահսկել ՀՀ-ում համապետական և տեղական ընտրությունները և դրանց համապատասխանությունը ներպետական օրենսդրությանն ու միջազգային ժողովրդավարական չափանիշներին:

ԱԺ ընտրությունների վերահսկողության գործընթացում «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում ներգրավվել է 10 հասարակական կազմակերպություն և ժողովրդավարական չափանիշներին համապատասխան ընտրություններով շահագրգիռ ընդհանուր թվով 2972 անհատ, այդ թվում՝ ինչպես ՀՀ քաղաքացիներ, այնպես էլ սփյուռքահայեր:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում դիտորդական առաքելություն է իրականացվել ՀՀ բոլոր 13 ընտրական տարածքներում (4–ը՝ Երևանում, 9–ը՝ մարզերում): Մասնավորապես, դիտորդական առաքելությունն իրականացվել է բոլոր 38 տարածքային ընտրական հանձնաժողովներում և 37 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում ընդգրկված թվով 1522 ընտրական տեղամասերում (տեղամասերի մոտ 76% –ում):

Դիտորդական առաքելության ընթացքում դիտորդների կողմից ներկայացվել է ընտրախախտումների մասին 1718 հաղորդում, որոնցից 228–ը վերաբերել են քվեարկության նախապատրաստական փուլի գործընթացներին, 919–ը՝ բուն քվեարկության փուլին, 147–ը՝ արդյունքների ամփոփմանը, իսկ 425–ը եղել են ընդհանուր բնույթի խախտումներ: Դիտորդների դիտարկումներից միայն 718–ն է գրանցվել ընտրական տեղամասերի գրանցամատյաններում: Այդ հաղորդումները ներառել են ինչպես կրկնվող, այնպես էլ՝ շարունակական խախտումներ:

Դիտորդների կողմից արձանագրված՝ դիտորդի սուբյեկտիվ իրավունքի և ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և վերջիններիս դիտորդների կողմից ընդհանուր թվով 309 դիմում–բողոք է ներկայացվել տարածքային ընտրական 37 հանձնաժողով: Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ) ներկայացվել է 127 դիմում, իսկ Վարչական դատարան՝ 96 հայցադիմում: ԱԺ ընտրությունների արդյունքների վերաբերյալ դիմում է ներկայացվել նաև ՍԴ: Դիմում–բողոքներ չեն ներկայացվել միայն թիվ 6 տարածքային ընտրական հանձնաժողով:

Վերոնշյալ խախտումների բնույթը, շրթայական կապն ու տրամաբանությունը վկայում են դրանց համակարգված և համընդհանուր բնույթ ունենալու մասին, իսկ դրանց վերաբերյալ արձագանքը կամ, ավելի ճիշտ, դրանց կապակցությամբ արդյունավետ միջոցների ձեռնարկման բացակայությունը թե՛ ընտրական վարչարարություն իրականացնող մարմինների՝ ընտրական

¹ Թիվ 6 տարածքային հանձնաժողովի սպասարկման տարածքում ընդգրկված ընտրատեղամասերում դիտորդական առաքելությունն իրականացվել է Հայաստանի հելփինկյան կոմիտեի կողմից և դիտարկման արդյունքները գրանցվել են ՔԴԿ կայքում:

հանձնաժողովների, թե՛ իրավապահ մարմինների և թե՛ դատական համակարգի կողմից կարող են վկայել նշված պետական ինստիտուտների՝ իրենց օրինական գործառույթներն իրականացնելու անկարողության կամ ցանկության բացակայության (անկախության բացակայության) մասին:

Դիտորդական առաքելության շրջանակներում դիտարկվել են ընտրական գործընթացի համակարգային բնույթ ունեցող այնպիսի խնդիրներ և խախտումներ, որոնց ազդեցությունն ազատ և արդար ընտրական իրավունքի իրացման և այդ իրավունքի պաշտպանության վրա էական է: Այդ խնդիրները ներառում են ընտրողների կամքի ազատ ձևավորման և ազատ արտահայտման ապահովման, քվեարկության գաղտնիության ապահովման, վարչական ռեսուրսի օգտագործման (չարաշահման), ընտրական վարչարարություն իրականացնող ընտրական հանձնաժողովների համակարգի գործունեության արդյունավետության, դրանց հասանելիության, հանրային վերահսկողության ինստիտուտների և երաշխիքների, ինչպես նաև ընտրական վեճերի ոլորտում առկա խնդիրներ, այդ թվում՝ ընտրական վեճերով դատարանի մատչելիության և արդյունավետության խնդիրներ: Բացի դրանից՝ վերհանվել են ինչպես ընտրական օրենսդրության, այնպես էլ առկա օրենսդրության կիրառման խնդիրներ:

Վերոհիշյալ խնդիրները լուրջ խոչընդոտ են ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի իրագործման, ազատընտրությունների՝ սահմանված իրավունքի իրացման և ընտրական իրավունքի՝ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների ապահովման առումով, ինչը հարցականի տակ է դնում ժողովրդի իշխանության ազատ իրացումը 2017 թ. ԱԺ ընտրությունների միջոցով՝ որպես հետևանք ձևավորելով անվստահություն ընտրությունների և ընտրական համակարգի նկատմամբ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2017 թ. ապրիլի 2-ին տեղի ունեցած ԱԺ ընտրությունները պետության համար առանցքային նշանակություն ունեցող միջոցառում էին, քանի որ առաջին համապետական ընտրություններն էին 2015 թ. սահմանադրական փոփոխությունների ընդունումից հետո, որոնց արդյունքում կառավարման համակարգը կիսանախագահականից փոխվեց խորհրդարանականի: Ընտրություններն անցկացվում էին նոր ընտրական օրենսգրքով (այսուհետ՝ ԸՕ) սահմանված ընթացակարգերով՝ ընտրողների գրանցման տեխնիկական նորամուծությունների կիրառմամբ: 20.10.2016 թ. ընտրական օրենսգրքի փոփոխություններով սահմանվեց ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման պահանջ:

Սույն զեկույցը փաստական, անկողմնակալ և անկախ տեսանկյունից գնահատում է ԱԺ ընտրությունների գործընթացները՝ արտացոլելով դիտորդական առաքելության արձանագրած հիմնական արդյունքները, ընտրական գործընթացում դիտարկված և արձանագրված խախտումներն ու խնդիրները: Այս ամենի հիման վրա զեկույցում ներկայացվում է ԱԺ ընտրությունների վերաբերյալ ԻԵՄ-ի եզրակացությունը, ինչպես նաև առաջարկություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ իրավակիրառ պրակտիկան և ընտրական օրենսդրության իրավակարգավորումների թերությունները շտկելու և վերհանված խնդիրները հաղթահարելու համար:

Զեկույցի հիմնական թիրախ լսարանն են.

• Ընտրական իրավունքով օժտված քաղաքացին.

- **հանրությունը՝** ընդհանուր առմամբ, որն, ըստ էության, ցանկացած ընտրությունների դիտորդական առաքելության (հանրային հսկողության) հիմնական «պատվիրատուն» և դրա արդյունքների հիմնական շահառուն է.
- **հասարակական և քաղաքական միավորները,** որոնք շահագրգռված են Հայաստանի ընտրական համակարգի բարելավմամբ և նպատակ ունեն գործուն մասնակցություն ունենալու թե՛ իրավական կարգավորումների մշակման և թե՛ դրանց կիրառման փուլերում.

● **Պետական մարմինները.**

- **ընտրական վարչարարություն իրականացնող մարմինները**, որոնք պատասխանատու և կարևոր դեր ու նշանակություն ունեն ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման և ընտրական իրավունքների ապահովման, ընտրախախտումների դեպքերով արդյունավետ քննության իրականացման և, որպես դրա հետևանք, ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացման համար,
- **օրենսդիր և գործադիր իշխանությունն՝** ի դեմս ԱԺ-ի և կառավարության,
- **քրեական հետապնդում իրականացնող մարմինները**, որոնք ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում պատասխանատու են հնարավոր ընտրախախտումների կանխարգելման, հայտնաբերման և բացահայտման, ինչպես նաև դրանց արդյունավետ քննության և պատասխանատվության անխուսափելիության ապահովման համար.
- **դատական իշխանությունը**, որը պատասխանատու է արդարադատություն իրականացնելու համար՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան.

● **Միջազգային կազմակերպությունները**, որոնք աջակցում են ժողովրդավարական գործընթացների զարգացմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը և կարիք ունեն լիարժեք պատկերացում կազմելու հայաստանյան ընտրական գործընթացների, ինչպես նաև դրանց բարելավման հնարավոր ուղղությունների վերաբերյալ:

Ձեկույցը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- *Ընտրական օրենսդրություն* բաժինը համառոտ նկարագրում է ԱԺ ընտրությունների անցկացմանը նախորդած օրենսդրական փոփոխությունների ժամանակագրությունը՝ հիմնական երեք ենթաբաժիններով. ԱԺ ընտրակարգը

սահմանող սահմանադրական կարգավորման խնդիրները, ընտրական գործընթացը կարգավորող հիմնական փաստաթղթի՝ ՀՀ ԸՕ–ի ընդունման և հարակից օրենսդրական փոփոխությունների գործընթացը և ընտրական գործընթացը կարգավորող իրավական ակտերի հիմնական փոփոխությունների համառոտ նկարագրությունը.

- *Դիտորդական առաքելության նկարագրություն* բաժինը ներկայացնում է առաքելության մանրամասները՝ ներառյալ առաքելության նպատակները, կազմը և մեթոդաբանությունը, ինչպես նաև դրա կազմակերպման ընթացքում տեղ գտած խոչընդոտները.
- *Դիտորդական առաքելության արդյունքներ* բաժինն ըստ տեսակների և ենթատեսակների խմբավորված ներկայացնում է դիտորդական առաքելության ընթացքում վերհանված ընտրական խախտումները և բողոքարկման գործընթացը.
- *Եզրակացություններ* բաժինն ամփոփում է դիտորդական առաքելության արդյունքում ձևավորված՝ ընտրական գործընթացի ընդհանուր պատկերը և տալիս դրա գնահատականը.
- *Առաջարկություններ* բաժնում ուրվագծված են Հայաստան Հանրապետությունում քաղաքացիների ընտրական իրավունքի պատշաճ իրականացման համար առաջնահերթ և արմատական լուծում պահանջող հիմնախնդիրները և դրանց լուծումների հետ կապված հնարավոր քայլերը:

1. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1. ԸՆՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

2015 թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով նախատեսված էր մինչև 2016 թ. հունիսի 1-ն ընդունել ընտրական նոր օրենսգիրքը, որով կկարգավորվեին նոր ընտրակարգի մանրամասները:

«Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրով² հաստատվել է սահմանադրության փոփոխություններով անվանականորեն սահմանված համապատասխանեցման ենթակա օրենքների ցանկը՝ նախագծի մշակման և ներկայացման համար պատասխանատու մարմինների և ժամկետների սահմանմամբ:

Հիշյալ հրամանագրի համաձայն՝ ԸՕ-ի մշակմանը և ներկայացմանը մասնակցող պատասխանատու մարմիններ են նշանակվել «Արդարադատության նախարարությունը և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ նախագիծը ԱԺ ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 2016 թ. մարտի 1-ը, այսինքն՝ «Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհրդի ստեղծումից 18 օր անց: Սահմանված ժամկետում օրենքի նախագիծը ԱԺ չի ներկայացվել և չի հրապարակվել պատասխանատու պետական մարմինների պաշտոնական կայքերում: Ի հեճուկս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ խորհրդատվության³ նախագիծը մշակվել է ոչ մասնակցային եղանակով միայն աշխատանքային խմբի նեղ կազմով՝ առանց լայն հանրային իրազեկման և քննարկման: Հանրությանն այն հասանելի է դարձել 2016 թ. մարտի 2-ին՝ «Կառավարության 2016 թ. մարտի 3-ի նիստի օրակարգի շրջանակներում⁴

² «Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագիր՝ <http://www.president.am/hy/decrees/item/2566/>

³ ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ հանրաքվեի փորձագիտական խմբի վերջնական զեկույց: «Սահմանադրական հանրաքվե, 6-ը դեկտեմբերի, 2015 թ.» <http://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>

⁴ «Կառավարության նիստի 2016թ. մարտի 3-ի օրակարգ, <https://www.e-gov.am/sessions/archive/2016/03/03/>

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի խախտումով⁵, Վենետիկի հանձնաժողովի համացանցային կայքում դրա անգլերեն տարբերակը⁶ տեղադրվելուց գրեթե երկու շաբաթ անց: Հրապարակման պահից մինչև նախագիծն ԱԺ-ի կողմից ընդունելու ժամանակահատվածը եղել է խիստ սեղմ, իսկ նախագծի վերաբերյալ քաղաքացիական հասարակության կառույցների մտահոգությունները և առաջարկությունները ներկայացնելու և դրանք քննարկելու հնարավորությունները՝ սահմանափակ:

2016 թ. փետրվարի 29-ին քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում ԸՕ-ի նախագծի վերաբերյալ⁷, որի շրջանակներում վերհանվել են ընտրական օրենսդրության առաջնահերթ հիմնախնդիրները⁸: Հիշյալ քննարկման արդյունքում ձեռքբերված համաձայնության շրջանակներում որոշվել է կոնսենսուսի միջոցով ընտրական օրենսդրության հիմնախնդիրներից ձևակերպել առաջնահերթ խնդիրները և միասնական ու հետևողական աշխատանք տանել դրանց իրագործման ուղղությամբ:

2016 թ. մարտի 19-ին «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կողմից հրապարակվել է հայտարարություն, որով մտահոգություն է հայտնվել ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծում տեղական դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների գործունեության սահմանափակումների վերաբերյալ⁹:

Ընտրական օրենսդրության վերաբերյալ հանրային քննարկումները սահմանափակվել են ԵԱՀԿ կազմակերպած միջոցառմամբ¹⁰, որի ընթացքում մասնակիցներին տրվել է 5 րոպե տևողությամբ ելույթի հնարավորություն, ԱԺ-ում 2016 թ. մարտի 22-ին կազմակերպված հան-

⁵ ԹԻՀԿ-ի հայտարարությունը ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի մշակման գործընթացի անօրինականության վերաբերյալ, <https://transparency.am/hy/news/view/1318>

⁶ ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի անգլերեն տարբերակը՝ հրապարակված Վենետիկի հանձնաժողովի կայքում 2016 թ. փետրվարի 22-ին՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)018-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)018-e)

⁷ <https://www.youtube.com/watch?v=zLu6icGrIhw>

⁸ <http://www.civilnet.am/news/2016/02/15/armenia-new-electoral-code/286948>

⁹ 2016 թ. մարտի 19-ին «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կողմից արված հայտարարությունը <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-local-observers-and-mass-media-representatives-activity-limitations-in-draft-electoral-2016-03-19-10-11>

¹⁰ Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ հանրային քննարկում՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, <http://www.osce.org/hy/yerevan/228456>

րային լուսններով¹¹ յուրաքանչյուր մասնակցի 5 րոպե տևողությամբ մեկական ելույթի հնարավորությամբ, որոնց ընթացքում ներկայացվել են առաջնահերթության կարգով լուծման ենթակա խնդիրները¹²: Վերոհիշյալ միջոցառումներն ակնհայտորեն հեռու էին քննարկման ֆորմատից և անարդյունավետ և անբավարար էին նման էական օրենսդրական փոփոխությունների կապակցությամբ լայն հանրային քննարկում համարվելու համար: Մյուս հանրային քննարկման դրսևորումը, այսպես կոչված, «4+4+4» ձևաչափով կոնկրետ մի քանի հարցերի շրջանակ ներառող քննարկումներն էին¹³ իշխանության, ոչ իշխանական խորհրդարանական ուժերի և բազմաթիվ հասարակական կազմակերպությունների կողմից ընտրված ներկայացուցիչների մասնակցությամբ¹⁴, որոնք ավարտվեցին անարդյունք, քանի որ համաձայնեցված փոփոխություններն այդպես էլ կյանքի չկոչվեցին¹⁵: Այդ կապակցությամբ «4+4+4» ձևաչափով քննարկումների մասնակից քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հայտարարություն տարածեցին 2016 թ. մայիսի 25-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի և «Նոր ընտրական

¹¹ 2016 թ. մարտի 22-ին ԱԺ-ում տեղի են ունեցել հանրային լուսններ, որոնց ընթացքում ԻԵՄ ՀԿ-ի ներկայացուցիչներ Լուսինե Հակոբյանը և Տիգրան Եգորյանը խնդիրներ ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման անհրաժեշտության մասին՝ որպես ընտրական համակարգի և գործընթացի բարելավման և դրա նկատմամբ հանրային վստահության բարձրացման անկյունքարային նշանակության առաջին քայլ: <https://www.youtube.com/watch?v=f1QTSRB1K6w&t=2s>: <https://www.youtube.com/watch?v=kPQ34shWYw>

¹² <https://www.youtube.com/watch?v=usZncLw1b2o> Լևոն Բարսեղյան — 6:05:43 — 6:11:00 (խոսում է ստորագրած ցուցակների, տեսախցիկների և Գյումրու, Վանաձորի ընտրության առանձնահատկության մասին), Հերիքնազ Տիգրանյան — 6:11:10 — 6:16:35 (խոսում է նախագիծն ընթացակարգային խախտմամբ ԱԺ ուղարկելու, նաև դիտորդների իրավունքների սահմանափակումների մասին), Դանիել Իոաննիսյան — 5:17:12 — 5:23:03 (խոսում է ընտրողների ստորագրված ցուցակների, ռեյտինգային ցուցակների մասին)

¹³ Ընտրական օրենսգրքի վերաբերյալ առաջնային միասնական պահանջներ, <https://citizenobserver.am/hy/news/view/primary-joint-demands-related-to-the-electoral-code2016-03-22-10-20>

¹⁴ Հայտարարություն ընտրական օրենսգրքի նախագծի բարելավման աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ, <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-engagement-in-the-work-for-improvement-of-the-draft-electoral-code-of-armenia2016-03-24-10-23>

¹⁵ Առաջիկա համապետական ընտրություններում «4+4+4» ձևաչափով համաձայնեցված փոփոխությունները չեն գործի, <https://www.azatutyun.am/a/27952602.html>, ԿԸՀ արտահերթ նիստը՝ ՀՀ 2016 թ. հունիսի 30-ի ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-120-Ն օրենքի ուժի մեջ մտնելու մասին

օրենսգրքում ընտրական գործընթացի օրինականության վերահսկման կազմակերպական-տեխնիկական մեխանիզմների» վերաբերյալ իշխանական և ոչ իշխանական կուսակցությունների միջև համաձայնությամբ սահմանված առաջարկությունների մասին¹⁶: Հայտարարության հեղինակներն ընտրական համակարգի (օրենսդրության և գործընթացի) առողջացման տեսանկյունից դրա առանձին բաղադրիչների նկատմամբ տարբերակված և հակասական անդրադարձը ոչ պիտանի էին գնահատել ընտրությունների նկատմամբ վստահության բարձրացման համար՝ պահանջելով անհապաղ վերացնել հանրային վերահսկողության սահմանափակումները դիտորդների և ՁԼՄ-ների իրավունքների մասով և պատշաճ կերպով կիրառել ԵԱՀԿ/ԺՄԻՀԳ հանձնարարականները¹⁷ վերացնելով դիտորդների ստուգարքները և դիտորդական կազմակերպություններին ընձեռելով հնարավորություն բողոքարկելու ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումները, իսկ շահագրգիռ անձանց՝ քվեարկության արդյունքները բողոքարկելու առավել ընդգրկուն երաշխիքներ և արդյունավետ միջոցներ:

Նախագծի հեղինակները հաճախ խուսափել են քաղաքացիական հասարակության կողմից կազմակերպվող այլ քննարկումներին մասնակցելուց: Արդյունքում, չնայած նախագծի բազմաթիվ դրույթների վերաբերյալ եղել է հասարակական կազմակերպությունների և ոլորտի փորձագետների քննադատություն և փաստաթղթի բարելավման ուղղությամբ ներկայացված են եղել որոշակի առաջարկներ, 2016 թ. մայիս 25-ին ընդունված ԸՕ-ով դրանք հաշվի չեն առնվել: Այս առնչությամբ ՔԳՆ անդամ հասարակական կազմակերպությունները մի քանի անգամ հանդես են եկել համապատասխան հայտարարություններով¹⁸:

¹⁶ <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-organizational-technical-mechanisms-of-the-control-over-the-legitimacy-of-electoral-pro2016-06-16-10-45>

¹⁷ <http://www.osce.org/odihr/elections/armenia/246566?download=true>

¹⁸ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նախագծի դրույթների՝ միջազգային ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ կարծիք, <https://citizenobserver.am/hy/news/view/opinion-on-the-compliance-of-the-provisions-of-draft-electoral-code-of-the-republic-of-armenia-with-2016-05-10-10-36>

«Հայտարարություն ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծում տեղական դիտորդների և ՁԼՄ ներկայացուցիչների գործունեության սահմանափակումների վերաբերյալ», 31 մայիս, 2016 թ. <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-local-observers-and-mass-media-representatives-activity-limitations-in-draft-electoral2016-03-19-10-11>

2016 թ. մայիս 25–ին ընդունվեց նոր ԸՕ–ն՝ հարակից օրենքներում փոփոխությունների փաթեթով (ՀՀ քրեական օրենսգիրք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, Վարչական դատավարության ՀՀ օրենսգիրք և այլն) :

ԸՕ–ի առանձին դրույթների շուրջ պետությունը շարունակեց քննարկումները քաղաքական ուժերի, ինչպես նաև միջազգային կառույցների և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների միջև քաղաքացիական հասարակության փորձագիտական կարողությունների ներդրմամբ՝ կենտրոնանալով, մասնավորապես, քվեարկության գործընթացի օրինականության վերահսկման կազմակերպատեխնիկական մեխանիզմների վրա՝ ակնկալելով արտասահմանյան և միջազգային ֆինանսական աջակցություն¹⁹:

Հիշյալ գործընթացների շրջանակներում քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչներ, մասնավորապես ՔԴԼ–ն, հանդես են եկել հայտարարություններով²⁰:

Սեպտեմբերի 13–ին Ազգային ժողովում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների կազմակերպման և անցկացման մասին փաստաթղթի վերջնական կազմման և ստորագրման աշխատանքային նիստ²¹, որի ընթացքում Աժ ՀՀԿ, ԲՀԿ, ՀԱԿ, ՕԵԿ և ՀՅԴ խմբակցությունների ներկայացուցիչները ստորագրել են հայտարարություն²²:

Հիշյալ գործընթացի արդյունքում ձեռք բերված համաձայնության

«Հայտարարություն նոր ընտրական օրենսգրքում ընտրական գործընթացի օրինականության վերահսկման կազմակերպական–տեխնիկական մեխանիզմների վերաբերյալ», 23 հունիս, 2017 թ., <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-organizational-technical-mechanisms-of-the-control-over-the-legitimacy-of-electoral-pro2016-06-16-10-45>

¹⁹ http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=8538&year=2016&month=06&day=16, http://www.ela.am/index.php?route=news/article&news_id=135

²⁰ Հայտարարություն նոր ընտրական օրենսգրքի կազմակերպական–տեխնիկական մեխանիզմների վերաբերյալ, <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-organizational-technical-mechanisms-of-the-control-over-the-legitimacy-of-electoral-pro2016-06-16-10-45>

²¹ Իշխանությունը ներկայացնում էր այդ գործընթացը «4+4+4» ձևաչափի շրջանակներում, սակայն դրա ձևաչափն այլ էր:

²² «4+4+4» բանակցային ձևաչափով մասնակիցները ստորագրել են հայտարարություն, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=8657&year=2016&month=09&day=13&lang=arm

համապատասխան՝ ՀՀ ընտրական օրենսգրքում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքում 2016 թ. հոկտեմբերի 20–ին կատարվեցին նոր փոփոխություններ: Քաղաքական ուժերը համաձայնություն ձեռք բերեցին քվեարկության օրը ընտրական տեղամասերի տեսաձայնագրման և առցանց հասանելիության՝ հեռարձակման, քվեարկությունից հետո ստորագրված ընտրական ցուցակների հրապարակման, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ²³: Սակայն դրա հետ մեկտեղ, փոփոխություններ նախատեսվեցին նաև քրեական օրենսգրքում՝ ընտրական հանցագործությունների համար նախատեսված պատիժների խստացման տեսքով, ինչպես նաև ներմուծվեց նոր հանցակազմ (ՀՀ ՔՕ հոդված 154.8), որով քրեականացվում էր այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալը կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելը, որի կապակցությամբ սուր քննադատությամբ հանդես եկան քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչներ, այդ թվում՝ մասնագիտական շրջանակներ²⁴:

Հիշյալ համաձայնագրով որոշվեց ստեղծել նաև եռակողմ հանձնաժողով՝ բաղկացած իշխանական և ընդդիմադիր կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Համատեղ հանձնաժողովի վերաբերյալ ընդունվեց ՀՀ կառավարության որոշում²⁵, սակայն հասարակական կազմակերպությունները չմասնակցեցին հանձնաժողովի աշխատանքներին²⁶: Վերոհիշյալ փոփոխություններն ամրագրվեցին 2016 թ. հոկտեմբերի 20–ին «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունները հանդես եկան հայտարարություններով՝ ընդգծելով, որ օրենսդրական փոփոխություններն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են ապահովում ազատ և արդար ընտրություններ կազմակերպելու և ընտրական իրավունքը ՀՀ Սահմանադրությանը և մի-

²³ <http://www.a1plus.am/1485857.html>

²⁴ ՀԿ–ների հայտարարությունը ՀՀ կառավարության ներկայացրած «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագծի մասին, 22 հոկտեմբեր, 2016 թ., <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-making-amendments-and-supplements-to-the-criminal-code-of-the-republic-of-armen2016-10-22-11-02>, http://www.ela.am/index.php?route=news/article&news_id=113

²⁵ <https://www.e-gov.am/gov-decrees/item/27883/>, հավելվածը՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/16_1158.pdf

²⁶ <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-rejection-to-enter-the-joint-commission-for-technical-provision-of-the-voting-process2016-12-12-11-12>

ջազգային չափանիշներին համապատասխան ապահովելու համար՝ հատկապես հաշվի առնելով ԸՕ–ի բացերը՝ ներառյալ ընտրությունների ֆինանսավորման, ընտրական իրավունքի պաշտպանության (քողքարկման ինստիտուտի և ընթացակարգերի արդյունավետություն), դիտորդական առաքելությունների և ՉԼՄ ներկայացուցիչների իրավունքների սահմանափակումների և կարգավորումների թերություններն ու բացերը^{27 28}:

Հանձնաժողովի առանցքային գործառույթներից՝ ընտրողների նույնականացման քարտերի և անձնագրերի շտեմարանի աուդիտը չիրականացվեց²⁹, ինչը չափազանց էական էր էլեկտրոնային սարքավորումների ներմուծման կապակցությամբ հանրային վստահության ապահովման տեսանկյունից:

Ինչ վերաբերում է տեսախցիկների տեղադրմանը, ապա թեև նախատեսվում էր դրանցով կահավորել բոլոր տեղամասերը, տեսախցիկներ տեղադրվեցին միայն թվով 1500 տեղամասերում: Բացի դրանից՝ որոշվեց տեղամասերում տեղադրվող տեսախցիկների միջոցով ձայնագրառում և ձայնի հեռարձակում չիրականացնել, ինչը հիմնավոր և համոզիչ կերպով չպատճառաբանվեց: Տեսախցիկների տեսանյութերի մատչելիությունը ևս առանձին խնդիր էր, որն էապես նվազեցնում էր այդ գործիքի արդյունավետությունը, ընտրությունների նկատմամբ հանրային վստահության բարձրացման հնարավորությունը: Տեսանյութերի հեռարձակումը քվեարկության արդյունքների ամփոփումից հետո դադարեցվել է և դրանք լայն հանրությանն այլևս հասանելի չեն: Դրանց մատչելիությունն այն սուբյեկտների համար, որոնց ըստ օրենքի դրանք տրամադրվում են, ևս բավարար չէ³⁰: Հաշվի առնելով արտասահմա-

²⁷ ՀԿ–ների հայտարարությունը ընտրական օրենսգրքի և դրա շուրջ վերջին զարգացումների վերաբերյալ, 9 –ը սեպտեմբերի, 2016 թ., <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-the-electoral-code-of-armenia-and-the-recent-developments-related-to-it2017-09-09-10-49>

²⁸ Հասարակական կազմակերպությունների համատեղ հայտարարությունը, 12-ը սեպտեմբերի, 2016 թ., <https://citizenobserver.am/hy/news/view/joint-statement-of-ngos2016-09-12-10-53>

²⁹ <http://hayastan24.com/?p=14518&l=am>

³⁰ 1500 տեղամասերում քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացների տեսանյութերի տրամադրման համար սպասարկող կազմակերպության կողմից պահանջվում է առնվազն 120 տերաբայթ հիշողության ծավալ ունեցող նյութական կրիչ (այնինչ ըստ ԻԵՄ հաշվարկների՝ 1500 տեղամասերում կատարված տեսանկարահանված նյութի ծավալը կազմում է մոտ 10–16 տերաբայթ) և տրամադրման աշխատանքների համար 372 000 ՀՀ դրամ: 120 տերաբայթ հիշողության ծավալի

նյան երկրների փորձը (ուր ևս գործում է ընտրական գործընթացի տեսանկարահանման կարգավորում)՝ չափազանց էական է տեսանյութերի հետ ընտրական վերլուծությունը ընտրական գործընթացի հետագա բա-
րելավման տեսանկյունից:

2016 թ. հոկտեմբերի 6-ին ԱԺ-ի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) նոր կազմ ընտրելու (ԿԸՀ-ի գործող կազմի վերարտադրության) մասին հասարակական կազմակերպությունները լուրջ մտահոգություն են արտահայտել ընտրական համակարգի բարեփոխման գործընթացի և նախատեսվող ընտրությունների օրինակա-
նության ապահովման առումով՝ ընտրական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացման համար ընդգծելով արմատա-
կան փոփոխությունների, այդ թվում՝ որպես անկյունաքարային միջոց՝ ԿԸՀ-ի նոր կազմ ձևավորելու անհրաժեշտությունը, որը կլինի անկախ և ի վիճակի կազմակերպելու օրինական և վստահելի ընտրություններ, ապահովելու ընտրական իրավունքի պատշաճ պաշտպանություն և արատավորված չի լինի ընտրակեղծարարությանը մասնակից լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածներով³¹: Այս կապակցությամբ քննադատական դիրքորոշում է արտահայտել նաև Հայաստանում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին³²:

Նոր ընտրական օրենսգրքի և դրանում կատարված փոփոխությունների կապակցությամբ ՔԴՆ-ն 2016 թ. նոյեմբերի 11-ին կազմակերպեց նաև համաժողով³³, որին հրավիրված էին ԱԺ պատգամավորներ, պետական մարմինների ներկայացուցիչներ (ԿԸՀ, ՍԴ, Կառավարություն, ՄԻՊ) և քա-
ղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և փորձագետներ³⁴:

համար անհրաժեշտ է 12 հատ 10 տերաբայթ հիշողության ծավալ ունեցող կրիչ, որոնցից յուրաքանչյուրի արժեքը շուկայում առկա ամենամատչելի գների հաշվարկով կազմում է մոտ 600 ԱՄՆ դոլարին համարժեք 288 000 ՀՀ դրամ, ընդհանուր առմամբ տեսանյութերի կրկնօրինակը ձեռք բերելու համար, ըստ սպասարկող կազմակերպության պահանջի, անհրաժեշտ է 3 828 000 ՀՀ դրամ (3 456 000 + 372 000): Ինչը լուրջ սահմանափակում է հատկապես հասարակական կազմակերպությունների համար և լուրջ անհնարիություն է ստեղծում տեսանյութերի վերլուծության համար:

³¹ <https://citizenobserver.am/hy/news/view/statement-on-the-formation-of-the-central-electoral-commission2016-10-07-10-58>

³² <https://www.azatutyun.am/a/28554999.html>

³³ <http://yerevan.today/all/politics/10399/yntrakan-nor-orensgrqi-vichaharuyc-normery-pordzagetneri-meknabanmamb>

³⁴ <http://yerevan.today/all/politics/10399/yntrakan-nor-orensgrqi-vichaharuyc-normery-pordzagetneri-meknabanmamb>

1.2. ԸՕ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նոր ընտրական օրենսդրության (ԸՕ և հարակից օրենսդրություն) հիմնական փոփոխություններն են՝

- «կայուն մեծամասնության» համակարգի ներդնումը և դրա շրջանակներում ԱԺ ընտրությունների երկրորդ փուլի կառուցակարգն ու բռնուսային համակարգը,
- համամասնական ընտրակարգի շրջանակներում տարածքային ընտրական ցուցակների ներմուծումը (ռեյտինգային ցուցակներ),
- քաղաքական ուժերի՝ կոալիցիա կազմելու սահմանափակ հնարավորությունը (դրանում կարող է ներառվել ոչ ավելի, քան 3 կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք),
- քաղաքական գործիչներ և որոշ հանրային ծառայողների համար նախընտրական քարոզարշավին մասնակցելու սահմանափակումների փոփոխությունը (վերացումը),
- դիտորդների որակավորման ստուգարքների վերացումը և հավատարմագրման պարզեցված ընթացակարգը,
- դիտորդների և ԶԼՄ-ների իրավունքների սահմանափակումները,
- ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակումը,
- տեղամասերի տեսանկարահանումը և առցանց հեռարձակումը,
- ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքավորումների ներմուծումը,
- ընտրական հանձնաժողովներ բողոքների ներկայացման ժամկետների երկարաձգումը.
- ընտրական իրավունքի պաշտպանության նպատակով բողոքարկման ընթացակարգերի բարդացումը և դիմում-բողոքներին առաջադրվող ձևական պահանջների, ինչպես նաև դիմում-բողոքների հանձնման-ընդունման եղանակը, դիմում-բողոքների վերահասցեագրման սահմանափակումը, ընտրական հանձնաժողովների կողմից նիստերի նշանակման և վարչական վարույթների հարուցման և դրանցով որոշումների հրապարակման, այդ մասին ծանուցման պահանջի վերացման, դրանց ուժի մեջ մտնելու պահի և շահագրգիռ անձանց համար մատչելիության ապահովման փոփոխությունն ի վնաս իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի,
- ընտրական վեճերով դատական պաշտպանության դիմելու ըն-

թացակարգերի և ժամկետների (դատարանի մատչելիության իրավունքի) սահմանափակումները:

Ի լրումն ԸՕ-ի՝ ՀՀ քրեական օրենսգրքով խստացվել է ընտրախախտումների համար սահմանված պատասխանատվությունը՝ նախատեսելով նաև լրացուցիչ պատասխանատվություն: Ընտրակաշառքի համար պատասխանատվություն սահմանող հոդվածով նախատեսվել է խրախուսական նորմ³⁵:

Բարձրացվել են նաև ընտրական գրավի չափերը և ընտրությունների ֆինանսավորման համար նախընտրական հիմնադրամների և դրանց համալրման առավելագույն թույլատրելի սահմանաչափերը³⁶: Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներին ֆիզիկական անձանց կողմից կատարված մուծումների թույլատրելի առավելագույն չափը սահմանվել է մինչև նվազագույն աշխատավարձի 500–ապատիկը, իսկ նախընտրական քարոզչության օրենքով սահմանված ծախսերի ֆինանսավորման նպատակով ծախսերի առավելագույն չափը սահմանվել է նվազագույն աշխատավարձի 500000–ապատիկի չափով (նշված սահմանաչափերը 2011 թ. Օրենսգրքով սահմանված սահմանաչափերի հնգապատիկն են):

Այդուհանդերձ, նոր ԸՕ–ում մնացին լրջագույն խնդիրներ, և չնայած դրանց մասին բարձրաձայնում էին հասարակական կազմակերպությունները, մասնագիտական համայնքը և ընդդիմադիր քաղաքական ուժերը, առաջարկելով լուծումներ, դրանք համապատասխան արձագանք չստացան օրինագծի հեղինակների և օրենսդիր մարմնի կողմից: Այդ խնդիրների թվում էին.

- Ընտրական օրենսգրքով նախընտրական ժամանակահատվածում վարչական ռեսուրսի օգտագործման (չարաշահման) դրսևորումների դեմ արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը:
- Ընտրողների ստորագրած ցուցակների՝ առանց որոնման համակարգի հրապարակման հանգամանքը, որն այդ ցուցակների արդյունավետ վերլուծության և խախտումների բացահայտման տեսանկյուն

³⁵ Ընտրակաշառք ստացող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե վերջինս մինչև իրավապահ մարմիններին կատարված հանցանքի մասին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ, քան ետոյա ժամկետում կաշառք ստանալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն (ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 154.2):

³⁶ ՀՀ ԸՕ հոդված 92:

նից այն աստիճան ռեսուրսատար էր, որ ըստ էության անհնարին է դարձնում դրանց՝ ժամանակին և արդյունավետ օգտագործումը:

- Բնակչության ռեգիստրի հետ ընտրողների ցուցակի համադրության և փոխադարձ ստուգման հնարավորության բացակայությունը:
- Ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքավորումների էլեկտրոնային ցուցակների և քվեարկության ընթացքում մուտքագրված տվյալների ստուգման հնարավորության բացակայությունը:
- Ընտրողների ցուցակներում ընտրողի փոխարեն ստորագրություն հայտնաբերելու դեպքում այլ նշումներ սյունակում ստորագրելու հնարավորության օրենսդրական սահմանումը և այդ կապակցությամբ որևէ գործողության (հաշվառում, արձանագրում գրանցամատյանում, այդ դեպքերի կապակցությամբ քննություն) կատարման անհրաժեշտության օրենսդրական պահանջի բացակայությունը:
- Քվեարկությունից հետո տեսախցիկների տեսանյութերի անմատչելիությունը (դրանց սահմանափակ ժամկետում, միայն ամբողջական տրամադրման և չափազանց թանկ արժեքը):
- Ձևավորված «կայուն մեծամասնության» համակարգը, ըստ որի՝ առավել քանակով ձայներ հավաքած կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին տրվում է խորհրդարանական տեղերի 54 տոկոսը՝ անհրաժեշտության դեպքում նաև բոնուսային լրացուցիչ տեղերի միջոցով, ինչը լրջագույն խնդիր է քաղաքական մրցակցության տեսանկյունից:
- Ազգային փոքրամասնությունների առաջադրման և մանդատների բաշխման այն մեխանիզմը, որը լրացուցիչ մանդատներ ստանալու հնարավորություն է ստեղծում:
- Սահմանափակ թվով քաղաքական ուժերի՝ կոալիցիա կազմելու հնարավորությունը. Դրանում կարող է ներառվել ոչ ավելի, քան 3 կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք: Մեծամասնություն ձևավորելու անհնարինության դեպքում առավելագույն ձայներ ստացած երկու կուսակցությունների կամ դաշինքների մասնակցությամբ քվեարկության երկրորդ փուլի նախատեսում ԸՕ–ում:
- Համամասնական ընտրակարգի շրջանակներում տարածքային ընտրական ցուցակների ներմուծումը (ռեյտինգային ցուցակների ներդրումը), որն էապես խթանեց վարչական և ֆինանսական ռեսուրսի չարաշահման արատավոր պրակտիկան և ըստ էության բացառեց քաղաքական մրցակցությունն ու, որպես հետևանք, ճախողեց համամասնական ընտրակարգի հիմքում ընկած քաղաքական նպատակը:

Չորամասերի ցուցակներով քվեարկող ընտրողների տեղամասերի և ցուցակների գաղտնիացումը, ինչով էապես սահմանափակվել է զինծառայողների ընտրության նկատմամբ հանրային վերահսկողությունը³⁷:

- Դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի սահմանափակում՝ կանոնադրությունում ընտրությունների նշանակման մասին որոշմանը նախորդող առնվազն մեկ տարի ժողովրդավարության և մարդու իրավունքներով զբաղվելու կանոնադրական նպատակի առկայությամբ:
- ՉԼՄ-ների իրավունքների սահմանափակումները՝ ԿԸՀ-ում հավատարմագրվող ՉԼՄ-ների համար ընտրությունների նշանակման մասին որոշմանը նախորդող առնվազն մեկ տարի իրապարակման պահանջի սահմանումը, մեկ իրավաբանական անձի կողմից իրապարակվող միայն մեկ ՉԼՄ-ի և ՉԼՄ ներկայացուցիչների թվի 50-ով սահմանափակումը՝ ԱԺ ընտրությունների կապակցությամբ կազմավորվող 2009 ընտրական տեղամասի պարագայում, անհավասար, արտոնյալ պայմանների ստեղծումը վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող լրատվամիջոցների համար:
- Քվեարկության սենյակում միաժամանակ ներկա դիտորդների կամ ՉԼՄ ներկայացուցիչների թվի (բայց ոչ պակաս, քան 15 դիտորդ կամ լրագրող) տեղամասային հանձնաժողովների 2/3-ի քվեարկությամբ սահմանափակման իրավունքի նախատեսումը, որը, սակայն, չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա, ինչը ևս խտրական կարգավորում է:
- Դիտորդին, վստահված անձին և ՉԼՄ ներկայացուցչին ընտրական հանձնաժողովների ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակից հեռացնելու իրավունքի սահմանումը.
- Քվեարկության կամ ընտրությունների արդյունքների վիճարկման իրավունքի և սուբյեկտների չափազանց նեղ շրջանակը, չնայած ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի առաջարկներին³⁸՝ դիտորդական կազմակերպություններին չի տրվել քվեարկության կամ ընտրությունների արդյունքները վիճարկելու իրավունք:

³⁷ Նախկին՝ 2011 թ. խմբագրության, ընտրական օրենսգրքով գաղտնի էին միայն զինծառայողների ցուցակները:

³⁸ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի միացյալ կարծիքը (18.01.2016 թ.)՝ ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ՝ <http://www.osce.org/odihr/elections/armenia/246566?download=true>

- Բողոքներն ընդունելու ներմուծված ժամային սահմանափակումները՝ քվեարկության օրը՝ մինչև 22:00, քվեարկության հաջորդ օրը՝ 12:00–18:00 և երկրորդ օրը՝ 09:00–11:00: Բացի դրանից՝ ստեղծվել են տեխնիկական խոչընդոտներ, ինչպես, օրինակ՝ մինչև վերջնաժամկետը համապատասխան ընտրական հանձնաժողով դիմումներ և բողոքներ մուտքագրելու և լիազորագրերի բնօրինակներն ու դիտորդի վկայականի պատճենը դիմումին կցելու պահանջները:
- Հանձնաժողովների նիստերի և ընդունվող որոշումների մասին պատշաճ և ժամանակին ծանուցելու պարտականության բացակայությունը և ընդունված որոշումների մատչելիության հարցը:
- Ոչ աշխատանքային օրերին ԿԸՀ դիմում–բողոքներ ներկայացնելու անհնարինությունը:
- Ընտրական վարչարարության միատեսակության (երկակի ստանդարտների բացառման) ապահովման հարցը:
- Բոլոր մակարդակի ընտրական հանձնաժողովների նկատմամբ իրական և արդյունավետ հանրային վերահսկողության հնարավորության բացակայությունը:
- Ընտրական իրավունք ունեցող՝ ՀՀ–ից դուրս գտնվող անձանց այդ իրավունքի իրացման խտրական կարգավորումները³⁹:

ԸՕ–ի՝ վերոնշյալ խնդիրներից բացի՝ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվել է պատասխանատվություն այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելու համար, ընդ որում՝ինչպես դիտավորյալ, այնպես էլ անփութությամբ գործելիս: Վերջին դեպքում սահմանվել է տուգանք 200000–800000 ՀՀ դրամ կամ ազատազրկում՝ մինչև երկու տարի ժամկետով (ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 154.8): Այս պատժամիջոցն ակնհայտորեն սահմանափակում է ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման արդյունքում բացահայտված տվյալ տեսակի ընտրակեղծիքի վերաբերյալ հաղորդումների ներկայացման հնարավորությունը՝ ըստ էության չեզոքացնելով ցուցակների հրապարակման դրական ազդեցությունը հանրային վերահսկողության տեսանկյունից:

³⁹ Քվեարկելու իրավունք ունեն միայն արտերկրում դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն իրականացնող ընտրողները և նրանց՝ արտերկրում բնակվող ընտանիքի անդամները, արտերկրում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողները, ինչպես նաև ՀՀ–ում գրանցված իրավաբանական անձանց՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների աշխատակիցներն ու նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամները կարող են քվեարկել էլեկտրոնային եղանակով:

2. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

● Միջազգային դիտորդական առաքելություններ

ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և ՀՀ ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն է իրականացրել թվով 6 միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ կարճաժամկետ դիտորդներ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ հիմնական թիմ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդներ) ընդհանուր թվով 650 դիտորդ:

ՀՀ ԱԺ ընտրությունների դիտարկման համար հրավեր ստանալու խնդրանքով ՀՀ արտաքին գործերի նախարարություն և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ի թիվս հինգ այլ միջազգային կազմակերպությունների, դիմում են ներկայացրել նաև Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմ (EPDE) և Ընտրությունների մոնիթորինգի կազմակերպությունների եվրոպական ցանց (ENEMO) միջազգային դիտորդական կազմակերպությունները, սակայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժել է նրանց հրավերի տրամադրումը՝ պատճառաբանելով, որ հավատարմագրված դիտորդների թիվն արդեն իսկ բարձր է⁴⁰:

● Տեղական դիտորդական առաքելություններ

Ազգային ժողովի 2017 թ. ապրիլի 2-ի ընտրությունները դիտարկել են 49 կազմակերպության կողմից հավատարմագրված դիտորդներ, որոնց ընդհանուր թիվը հասել է 28 021-ի:

⁴⁰ ԺԸԵՊ-ը դատապարտում է ՀՀ կառավարության մերժումը՝ ընտրություններին միջազգային քաղաքացի դիտորդներ հրավիրելու առնչությամբ, մարտ, 2017, <http://hcav.am/events/22-03-2017-03-en/>

ENEMO Concerned over Armenian CEC's Decision to Reject Invitation for Election Observation, մարտ, 2017, <http://www.enemo.eu/en/news/236-enemo-concerned-over-armenian-cecs-decision-to>

ԿԸՀ-ն պարզաբանում է , մարտ 2017, <http://www.elections.am/news/id-427/>

Թեև առաջին հայացքից վերը բերված թվերը տպավորիչ են, իրականությունը փոքր-ինչ այլ է: Մասնավորապես՝ դիտարկված խախտումների բաժնում նշվում են դեպքեր, երբ տարբեր դիտորդական առաքելությունների դիտորդներ դրսևորել են անկողմնակալության և չեզոքության՝ օրենքով առաջադրվող պահանջը խախտող վարքագիծ: Ի սկզբանե իրավապաշտպան գործունեությամբ նախկինում աչքի չընկնող և հասարակությանն անհայտ դիտորդական կազմակերպությունների և դրանց դիտորդների նկատմամբ կար անվստահության մթնոլորտ, որը հետագայում էլ ավելի խորացավ, երբ պարզվեց նրանց իրական գործառույթը ինչպես դիտորդների դիտարկումների արդյունքում, այնպես էլ Հովհաննես Հովսեփյանի⁴¹ հարցազրույցից⁴², որով նա բացահայտում էր այդ դիտորդական կազմակերպությունների և դիտորդների իրական առաքելությունը, դրանց կառավարման և ենթակայության համակարգը՝ բուրգը, այդ կեղծ դիտորդական համակարգի միջոցով ընտրությունների նկատմամբ իրականացված տոտալ վերահսկողությունը և այդ ամբողջ համակարգի անվերապահ ենթակայությունը և հաշվետվողականությունը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին:

⁴¹ 1996–2002 թթ. — աշխատել է ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական բաժնում որպես առաջին կարգի մասնագետ, առաջատար մասնագետ, պետաիրավական վարչության գլխավոր մասնագետ, խորհրդատու:

2002–2006 թթ. — ՀՀ նախագահի աշխատակազմի կադրերի վարչության պետ

2003–2004 թթ. — դասավանդել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում:

2006 թ. մարտ – 2007 թ. փետրվար — «Ալյանս» խորհրդատվական կենտրոնի նախագահ:

2007 թ. փետրվար–դեկտեմբեր — ՀՀ տարածքային կառավարման նախարարի խորհրդական:

2007 թ. դեկտեմբերի 22–ին ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ[2]:

2008 թ. մայիսի 26–ին ՀՀ վարչապետի որոշմամբ ազատվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի տեղակալի պաշտոնից[3]:

2008 թ. մայիսի 26–ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար[4]:

2016 թ. մարտի 3–ին ՀՀ նախագահի հրամանագրով ազատվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի պաշտոնից[5]:

2016 թ. մարտի 3–ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ[6]:

2017 թ. մայիսի 23–ից ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարն է:

⁴² <http://armlur.am/681377/>

Դիտորդական առաքելությունների և դիտորդների, ինչպես նաև վստահված անձանց գործունեության և արդյունավետության հարցերին անդրադարձել է նաև ՍԴ–ն իր 28.04.2017 թ. որոշմամբ⁴³ (ՍԴՈ–13642, պարբերություններ 11, 12)՝ առանձնացնելով «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դերակատարումը:

2.2. ՔՂՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՔՂՆ–ն իրականացրել է դիտորդական առաքելություն 2017 թ. ապրիլի 2–ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: ՔՂՆ–ի դիտորդական առաքելության նպատակն էր վերահսկել ԱԺ ընտրությունների օրինականությունը, այդ թվում՝

- բացահայտել ընտրական գործընթացում տեղ գտած՝ ընտրական իրավունքի խախտումները՝ կապված այդ իրավունքի իրացման, ապահովման և պաշտպանության հետ՝ հանրայնացնելով դրանք.
- արձանագրած խախտումների կապակցությամբ հանդես գալ հանրային գանգատով՝ ապահովելու դրանց արդյունավետ քննությունը,
- իրականացնել սուբյեկտիվ և օբյեկտիվ ընտրական իրավունքների պաշտպանություն ընտրախախտումների կապակցությամբ՝ բողոքարկման գործընթաց հարուցելով ընտրական վարչարարություն իրականացնող մարմիններում ու դատական ատյաններում և, ըստ անհրաժեշտության, իրավապահ մարմիններին ներկայացնելով հաղորդումներ.
- ընտրական գործընթացի, ընտրական իրավունքի իրացման և դրա պաշտպանության արդյունավետության վերաբերյալ ձևավորել տեղեկացված, անկախ և անկողմնակալ տեսակետ.
- վերլուծել ընտրական գործընթացում առկա խնդիրները, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից, ձևակերպել և ներկայացնել ու առաջարկություններ օրենսդրության և ընտրական գործընթացի բարեփոխման համար.
- գնահատել ընտրությունների համապատասխանությունը ներպետական օրենսդրությանն ու միջազգային չափանիշներին:

⁴³ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1364.pdf> (ՍԴՈ–1364, 12–րդ պարբերություն)

2.3. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՔԴՆ-ն կազմել և հրապարակել է ձեռնարկ ԱԺ ընտրությունների վերաբերյալ⁴⁴, ուղեցույց՝ դիտորդների համար⁴⁵ և դիտորդի վարքագծի կանոններ⁴⁶, տեսադասընթացներ և տեսահոլովակներ ընտրական օրենսդրության վերաբերյալ⁴⁷, Հայաստանի բոլոր մարզերում անցկացրել է մոտ 160 դասընթաց և վերապատրաստել մոտ 4000 քաղաքացի: Վերապատրաստումներն իրականացվել են ընտրական իրավունքի ոլորտում համապատասխան վերապատրաստում անցած իրավաբանների կողմից երկու փուլով: Դրանք ներառել են ընտրական օրենսդրությունը, ընտրական գործընթացները, դիտորդների և քվեարկության մյուս մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Երկրորդ փուլի վերապատրաստումը եղել է գործնական բնույթի, որի ընթացքում քննարկվել են ընտրախախտման տեսակները և գործնական իրավիճակներ և խնդիրներ, վարքագծի կանոններն ու դիտորդների գործունեությանն առնչվող մյուս հարցերը:

Հավաքագրվել և վերապատրաստվել է ՔԴՆ իրավաբանական թիմը՝ բաղկացած 36 իրավաբանից, որը դիտորդական առաքելության ամբողջ ընթացքում իրականացրել է խորհրդատվական գործառույթ, ինչպես նաև ներգրավված է եղել բողոքարկման գործընթացում:

ՔԴՆ-ի շրջանակներում գործել է նաև վերլուծական խումբ, որն իրականացրել է ստացված տվյալների վերլուծություն՝ վեր հանելով հնարավոր ընտրակեղծիքներն ու դրանց ռիսկերը: Բացի դրանից՝ ՔԴՆ-ի վերլուծական խումբը կատարել է նաև ուսումնասիրություններ և հետազոտություններ ինչպես քվեարկությանը նախորդող, այնպես էլ հաջորդող ժամանակահատվածում տարբեր հարցերի վերաբերյալ: Տեղեկատվու-

⁴⁴ Ձեռնարկ վստահված անձանց, դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների համար՝ https://citizenobserver.am/viewGuide?file_name=book%20dzernark%202017%20aj%20small.pdf

⁴⁵ Ուղեցույց դիտորդների համար՝ https://citizenobserver.am/viewGuide?file_name=%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf

⁴⁶ Դիտորդի վարքագծի կանոններ (դիտորդների համար նախատեսված ուղեցույցում)՝ https://citizenobserver.am/viewGuide?file_name=%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf

⁴⁷ Դիտորդների, ՋԼՄ ներկայացուցիչների և վստահված անձանց համար նախատեսված տեսադասընթացներ՝ <https://citizenobserver.am/hy/observers/videoTraining>

թյունը ստացվել է, ի թիվս այլ աղբյուրների, ՁԼՄ-ներից, վարչական վարույթների նյութերից, ԸԸՀ, ԿԸՀ և դատական ակտերից, ՍԴ՝ պետական մարմինների ներկայացրած տեղեկանքներից և այլն:

ՔԴՆ-ն ներգրավել է 3010 դիտորդ, որից Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 1326-ը հավատարմագրվել է ԻԵՄ-ի կողմից, 1480-ը՝ ԹԻՀԿ-ի և 204-ը՝ ԺԱԱ-ի կողմից: Նրանցից քվեարկության օրը դիտորդական առաքելության մեջ ներգրավված է եղել 2972-ը: Խորհրդարանական ընտրություններին ՔԴՆ-ի շրջանակում, ի լրումն նախաձեռնության անդամների, մասնակցել են հետևյալ հասարակական կազմակերպությունները.

1. «ԽորանԱրդ» ՀԿ, Գյումրի
2. «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի մասնաճյուղ» ՀԿ, Գյումրի
3. «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ, Ալավերդի
4. «Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ, Գորիս
5. «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, Արմավիր
6. «Համայնքի զարկերակ» ԵՀԿ, Վարդենիկ
7. «Աստղացոյք» ՀԿ, Ճամբարակ

ՔԴՆ-ն ներգրավել է ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ 22 երկրներում բնակվող 147 սփյուռքահայերի և ժողովրդավարության հաստատմամբ շահագրգիռ մոտ 100 այլազգի քաղաքացիների: Դիտորդական առաքելություն իրականացվել է 1522 ընտրական տեղամասում, որոնք գտնվել են թվով 37 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում և թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողովներում: Տեղամասերի ընտրությունը կատարվել է դրանցում գրանցված ընտրողների թվի հիման վրա. ընտրվել են հնարավորինս մեծ տեղամասեր: ՔԴՆ-ն ունեցել է նաև շրջիկ դիտորդների 38 խումբ, որոնք արագ արձագանքման եղանակով սպասարկել են տեղամասերում դիտորդություն իրականացնող դիտորդներին: Ստորև ներկայացված է ըստ մարզերի և ընտրատարածքների դիտարկված տեղամասերի քանակը.

Վարչական շրջան	Ընտրական տարածք	Տարածքային հանձնաժողով	Դիտարկված տեղամասերի քանակ
Երևան	1-4	1-5, 7-10	342
Արագածոտն	7	17-18	100
Արարատ	5	11-13	118
Արմավիր	6	14-16	116
Գեղարքունիք	8	19-21	136
Լոռի	9	22-25	190
Կոտայք	10	26-29	116
Շիրակ	11	30-33	145
Սյունիք	12	34-35	129
Վայոց Ձոր	12	36	46
Տավուշ	13	37-38	82
Ընդամենը			1522

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդներն ընտրատեղամասերում աշխատել են զույգերով՝ որպես նախաձեռնության շրջանակներում առաքելություն իրականացնող տարբեր կազմակերպությունների հավատարմագրված դիտորդներ: Ընտրական օրենսդրության խախտումներ դիտարկելիս դիտորդները պահանջել են, որպեսզի դրանց վերաբերյալ համապատասխան գրանցում կատարվի տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում: Ընտրախախտման և դրան տրված արձագանքի վերաբերյալ դիտորդները կարճ հաղորդագրություններով (հեռախոսային հաղորդագրության հատուկ ծրագրի միջոցով) ահազանգ են ուղարկել ՔԴՆ-ի համակարգող կենտրոն: Դիտորդների կողմից ներկայացված ահազանգերը (1718) արտացոլվել են ՔԴՆ-ի ահազանգերի առցանց քարտեզում: Այնուհետև համակարգող կենտրոնի աշխատակիցները (օպերատորները) հեռախոսային կապի միջոցով ստուգել են ահազանգերի ճշգրտությունը և, անհրաժեշտության դեպքում, մանրամասնել ընտրախախտումների նկարագրությունը: Արդյունքում ճշգրտվել է 1618 խախտում 624 տեղամասերից:

Դիտորդների կողմից ներկայացված ահազանգերի հիման վրա կազմվել են բողոքներ՝ ուղղված համապատասխան ընտրական հանձնաժողովներին:

2.4. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՔԴՆ-ի դիտորդական առաքելության արդյունքում վերհանված խախտումները և թերությունները ներկայացված են՝ ըստ խախտումների տեսակների և ժամանակային փուլերի՝ քվեարկության նախապատրաստումից մինչև բողոքարկում: Զեկույցում ներկայացված են միայն ՔԴՆ-ի դիտորդների և վերլուծական խմբի կողմից վերհանված խախտումները, դրանց ընդհանուր բնույթը և վիճակագրությունը:

• Պետական գործառույթների և կուսակցական շահերի միահյուսում/վարչական ռեսուրսի օգտագործում մեկ կուսակցության օգտին

Հայաստանի հանրապետական կուսակցությունն իր կողմից պետական իշխանական լծակների տնօրինման բերումով դրանք Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ ծառայեցրել է կուսակցության շահերին և նպատակներին: Հանրապետական կուսակցության ձեռքում է կենտրոնացված գրեթե ողջ գործադիր (սկսած Հանրապետության նախագահից) և օրենսդիր (պարզ մեծամասնություն) իշխանությունը: Կուսակցական և պետական գործառույթների միաձուլումը/միահյուսումն առավել ակնհայտորեն և բացահայտ այս ծավալով է դրսևորվել այս ընտրությունների ընթացքում:

Նշվածը դրսևորվել է նրանով, որ ՀՀԿ խոսնակ, ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը նախընտրական շրջանում պարբերաբար հայտարարել է, որ Հայաստանի հանրապետական կուսակցությունը գալիք տասնամյակի ամենաազդեցիկ կուսակցությունն է լինելու, և եթե գալիք տասնամյակում որևէ քաղաքական և պետական գործիչ ցանկանում է հավակնել բարձրագույն պետական պաշտոնների, ապա դրա գլխավոր ճանապարհը, եթե ոչ միակ, Հայաստանի հանրապետական կուսակցությունն է:⁴⁸

⁴⁸ <https://armenpress.am/arm/news/760338/apaga-tasnamyakum-hhk-n-linelu-e-hayastani-qaxaqakan.html>
<http://www.azatutyun.am/a/26884985.html>
<http://www.azatutyun.am/a/25387042.htm>

2.4.1. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ⁴⁹

(ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ)

Վարչական ռեսուրսի օգտագործում առավելապես մեկ կուսակցության օգտին

Պետական պաշտոնատար անձանց ներգրավումը և պետական ու համայնքային միջոցների օգտագործումը նախընտրական քարոզչության մեջ էականորեն ազդել է ընտրողների կամքի ձևավորման և արտահայտման վրա՝ հաշվի առնելով քարոզչությանը մասնակից անձանց զբաղեցրած բարձրաստիճան դիրքը, ինչպես նաև հանրային ոլորտի ծառայողների ուղղակի ազդեցության հնարավորությունը որոշակի ընտրողների և /կամ նրանց հետ փոխկապակցված անձանց վրա: Այդուհանդերձ, այս հարցը պատշաճ քննության և գնահատման չի ենթարկվել ընտրական վարչարարություն իրականացնող մարմինների, մասնավորապես՝ ԿԸՀ-ի կողմից:

Ըստ հայտարարագրված տվյալների՝ ՀՀԿ-ի հայտարարագրած նախընտրական հիմնադրամը ամենամեծն է եղել՝ հասնելով մոտ 400 000 000 ՀՀ դրամի, այսինքն՝ գրեթե եռապատիկ գերազանցելով մյուս կուսակցություններինը (դաշինքներինը)⁵⁰:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությունը նախընտրական քարոզարշավին՝ հոգուր առավելապես Հայաստանի Հանրապետական կուսակցության

ՀՀԿ-ի ընտրական ցուցակը գլխավորող երեք թեկնածուներ բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ՀՀ արդարադատության նախարար Արփիինե Հովհաննիսյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը և բոլորովին վերջերս ՀՀԿ-ին անդամակցած և ՀՀԿ-ի օգտին քարոզարշավին մաս-

⁴⁹ Հաշվի առնելով ընտրական օրենսդրության նոր կարգավորումն առ այն, որ նախընտրական քարոզչություն կարող է իրականացվել նաև մինչև օրենքով սահմանված ժամանակահատվածը, սույն բաժնում ներկայացվում են ԱԺ ընտրությունների կապակցությամբ բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ քարոզչության բացահայտված դեպքերը նաև մինչև նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը:

⁵⁰ <http://res.elections.am/images/audit/02.04.17m.pdf>

նակցող վարչապետ Կարեն Կարապետյանը⁵¹ հանրապետության ողջ տարածքով մեկ մասնակցել են նախընտրական քարոզարշավին:

ՀՀ և ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանը 2017 թ. մարտի 25-ին Արցախի Հանրապետություն կատարած աշխատանքային այցի ժամանակ ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարների ու բարձրաստիճան զինվորականների ուղեկցությամբ եղել է ՊԲ զորամասերից մեկում, ծանոթացել զինված ուժերի մարտական պատրաստականությանը, կազմակերպված միջոցառմանը մասնակցել են նաև զինվորականների ազգականները: Այնուհետև Սերժ Սարգսյանը հանդես է եկել խոսքով, որն ըստ էության եղել է նախընտրական քարոզչություն գործող իշխանության (ՀՀԿ-ի) օգտին և հակաքարոզչություն Ազգային ժողովի ընտրությունների որոշ մյուս մասնակիցների հասցեին: Հիշյալ ելույթը լայնորեն լուսաբանվել է ՋԼՄ-ներով^{52 53}:

⁵¹ <http://armmlur.am/672328>

⁵² <http://news.1tv.am/hy/2017/03/25/%D5%86%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B0-%D4%B1%D5%B9%D6%84-%D5%B9%D5%A5%D5%B6%D6%84-%D5%A9%D5%A1%D6%80%D5%A9%D5%AB%D5%9D-%D5%B0%D5%A1%D6%80%D5%AF-%D5%A5%D5%B2%D5%A1%D5%AE-%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84%D5%B8%D6%82%D5%B4/54594>
<http://www.president.am/hy/press-release/item/2017/03/25/President-Serzh-Sargsyan-awarded-Soldiers-in-Artsakh/>
<http://galatv.am/hy/your-voice/184763/>,
<https://zham.am/?p=6577&l=am>,
<http://www.irates.am/hy/1490530576>,
<http://www.chi.am/index.cfm?objectid=A8EA05A0-1375-11E7-B75EDA96B1BA47AC>,
<http://araratnews.am/serzh-sargsyaneh-koch-e-anum-chehtrel-nikol-phashinyanin/>,
<https://www.azatutyun.am/a/28390759.html>,
<http://www.civilnet.am/news/2017/03/25/%D5%8D%D5%A5%D6%80%D5%AA-%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6%D5%B6-%D5%A1%D5%BD%D5%A5%D5%AC-%D5%A7%D5%9D-%D5%B8%D6%80%D5%BF%D5%A5%D5%B2-%D5%A7-%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%AB%D6%80%D5%A5%D5%B6-2018-%D5%AB%D6%81-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%B8/311324>

⁵³ Ս. Սարգսյանը մասնավորապես ասել է. «Մենք պիտի հասկանանք, որ ապրիլի 2-ը խաղ չէ, սուտ շուտասելուկների մրցույթ չէ, մենք պիտի հասկանանք, որ ապրիլի 2-ին մենք տանիքների վրա լավ ցատկողներ չենք ընտրում, մենք մեր ժողովրդի գոյության իրավունքը պաշտպանողներ ենք ընտրում, մենք համազարկի, հարձակման և հարկ եղած դեպքում հետ քաշվելու հրաման տվողներ ենք ընտրում, դա անելու համար բավարար ներքին ուժ ունեցողներ ենք ընտրում: Ընտրում ենք, թե ում հրամանատարության ներքո են այս տղաներն ավարտելու իրենց ծառայությունը, հաջորդները ծառայելու, ովքեր են պաշտպանելու մեր մանուկների անհոգ ուսման իրավունքն ու մեր մեծերի մայրամուտը: Հասկանում եմ նաև արդյոք մենք սա, թե ոչ,

Ընտրակաշառք. զանգվածային բաժանում, դրա նկատմամբ պաշտոնաբար անձանց և մասնավորապես իրավապահ մարմինների արձագանքը:

Արձանագրվել են ընտրակաշառքի բաժանման, դրա խոստման և/կամ փորձի դեպքերի տարբեր դրսևորումներ, ինչպես նաև ընտրակաշառքի բաժանման մասին ԶԼՄ-ների ընդհանուր առմամբ 65 հաղորդումներ, որոնք վերաբերել են Հանրապետության մոտ 28 տարածքների (1, 2, 3, 4, 9, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 31, 33, 34, 37, 38) 189 տեղամասերում (9 մարզի 12 քաղաքային և 6 գյուղական համայնքների) ընդգրկված ընտրողների:

Նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում տարբեր աղբյուրների (ԶԼՄ հրապարակումներ, նախընտրական հանրահավաքների մասնակիցներև հանրահավաքների դիտարկումներ) համաձայն՝ ընտրակաշառքի բաժանումը կրել է համատարած և կազմակերպված բնույթ: Ըստ ԶԼՄ որոշ հրապարակումների՝ ընտրակաշառքի չափը, ընտրակաշառք բաժանող կուսակցությունների և դաշինքների փոխադարձ պայմանավորվածության համաձայն, հիմնականում կազմել է 10000 դրամ⁵⁴:

Պետական պաշտոնյաները, իրավապահ մարմինները դրսևորել են այնպիսի պահվածք, որն, ըստ էության, խրախուսել է ընտրակաշառքի լայն կիրառումը և ստեղծել անպատժելիության մթնոլորտ: Ստորև կարելի է ծանոթանալ որոշ բարձրաստիճան պաշտոնյաների և քաղաքական գործիչների՝ վերոհիշյալի կապակցությամբ արտահայտած հրապարակային դիրքորոշումներին.

Աժ փոխխոսնակ, ՀՀԿ անդամ Հերմինե Նաղդալյանը մասնավորապես հայտարարել է, դիմելով կուսակցությունների ներկայացուցիչներին, որ տարածեն իր հայտարարությունը, թե անկախ նրանից, թե

բայց քվեատուփին մոտենալիս ուղղակի պարտավոր ենք հասկանալ: Հասարակության յուրաքանչյուր անդամ կարող է վստահ լինել: Չենք խնայել ու չենք խնայելու որևէ ջանք ու միջոց և նաև հնարավորություն՝ ավելի ամրապնդելու մեր անվտանգությունը, համալրելու այն նոր բաղադրիչներով: Մեր երկրի զարգացմանն ուղղված արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանն ուղղված ջանքերին զուգահեռ մենք շարունակելու ենք մեր զինված ուժերի արդիականացման, մարտունակության էլ ավելի բարձրացման, նորագույն ու համարժեք սպառազինություններով համալրման մեր, ըստ էության, այլընտրանք էլ չունեցող քաղաքականությունը:

⁵⁴ <https://www.radioaurora.am/article/1489547969/yntrakasharqi-chapy-10000-dram.html>, <http://hraparok.am/?p=140397&l=am/yntrakasharq+baganelu+harcum+xaxi+miasnakan+kanoner+en+sahmanel+https://www.azatutyun.am/a/28407083.html>

որ կուսակցության ներկայացուցիչներն են ցանկանում ընտրակաշառք բաժանել, նրանք ուղղակի բարեգործություն են անում, նրանք մարդիկ են, որոնք պարզապես զբաղված են նվիրատվությամբ, պարզապես նվերներ են տալիս՝ առանց որևէ հույս ունենալու, որ այդ կերպ կգնեն քվե, որ չկա ոչ մի մեխանիզմ, ոչ մի միջոց ընտրական օրենսգրքում, որով հնարավոր լինի ընտրակաշառքը տալուց հետո ինչ-որ կերպ ստուգել կամ վերահսկել, որ կաշառք վերցնող մարդիկ քվեարկում են հենց իրենց օգտին⁵⁵:

Ուշագրավ է այն, որ, օրինակ, ԱԺ փոխխոսնակ, ՀՀԿ անդամ Հերմինե Նաղդալյանը խոսում է հենց այն մեխանիզմի մասին (քվեարկության նկատմամբ հսկողություն), որի կիրառման դեպքում է կաշառքը կամ այդպիսի խոստումը արդյունավետ և արդարացված ու փորձում է հերքել այդպիսի մեխանիզմի գոյությունը:

Ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը հայտարարել է, որ ընտրակաշառքը դժվար ապացուցվող երևույթ է՝⁵⁶:

ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը հայտարարել է, որ չի կարծում, որ ընտրակաշառքն ունեցել է որևէ էական նշանակություն ընտրությունների վրա: Այնուհետև հղում կատարելով ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի հայտարարությանը՝ նշում է, որ հենց ընտրության օրը ընտրակաշառքը ոչ թե գնահատելն, այլ հայտնաբերելն ինքնին շատ բարդ է⁵⁷:

Ընտրակաշառքի համատարած բաժանման և այդ տեղեկությունների առերևույթ արժանահավատության մասին են խոսում ինչպես վերը մեջբերված պաշտոնյաների և քաղաքական գործիչների արձագանքները, այնպես էլ ԿԸՀ նախագգուշական հայտարարությունը «Ծառուկյան» դաշինքի ցուցակը գլխավորող թեկնածուի (Գագիկ Ծառուկյանի) կողմից նախընտրական քարոզչության խախտումներ թույլ տալու մասին, ի պատասխան որի՝ Գագիկ Ծառուկյանը հայտարարություն էր արել, որ այդ խոստումները կկատարվեն ապրիլի 2-ից հետո⁵⁸, ինչն արդեն անարձագանք էր մնացել պետական մարմինների կողմից: Ընտրակաշառքի խոստումի հիմքով ՀՀԿ պատգամավորության թեկնածու Առաքել Մով-

⁵⁵ <https://news.am/arm/news/381992.html>

⁵⁶ <https://news.am/arm/news/374917.html>

⁵⁷ <https://www.azatutyun.am/a/28412112.html>

⁵⁸ <http://www.azatutyun.am/a/28360208.html>, <http://www.aravot.am/2017/03/13/865181/http://yerkirmedia.am/1political/carukyan-tigran-mukuchyan-nakhazgushacum/>

սիսյանի գրանցումն անվավեր ճանաչելու հայցով դատարան դիմելու մասին «Ելք» դաշինքի դիմումը ԿԸՀ-ն մերժեց:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության համակարգող Իգնասիո Սանչես Ամորը ապրիլի 3-ին հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարություն էր⁵⁹ կատարել այն մասին, որ չնայած իրավական համակարգի բարեփոխումներին, ընտրական անճշտությունների վերացմանն ու ընտրությունների ազատությանն ուղղված տեխնոլոգիաների ներդրմանը, ընտրությունների վրա հետք են թողել ընտակաշառքների վերաբերյալ վստահության արժանի տեղեկությունները և քաղաքացիական ծառայողների ու մասնավոր ընկերությունների աշխատակիցների վրա ճնշումների մասին տեղեկությունները: Դրա հետևանքով նկատվել է հանրային վստահության պակաս ընտրությունների նկատմամբ:

Դպրոցների և մանկապարտեզների տնօրենների՝ որպես հանրային ոլորտի ծառայողների կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման միջոցով հոգույր Հանրապետական կուսակցության իրակառնացված գործողությունները

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, դեռևս 2012 թ. Ապրիլին հետազոտություն էր կատարել Հայաստանի ամենախոշոր 20 քաղաքների բոլոր ըբյուջետային հանրակրթական դպրոցների տնօրենների շրջանում (Հայաստանի մոտ 1500 դպրոցներից մոտավորապես 800-ում)⁶⁰: Պարզվել էր, որ հարցված դպրոցների տնօրենների 70 տոկոսը հանրապետական կուսակցության անդամներ են և որ նրանց մոտ 50 տոկոսը հանրապետական էին դարձել վերջին 6 ամսվա ընթացքում:

2017 թ. ապրիլի 2-ին կայանալիք ԱԺ VI գումարման ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մամուլում տեղեկություններ շրջանառվեցին, որ տեղական ինքնակառավարման և պետական մարմինների պաշտոնատար անձինք հանրապետության ողջ տարածքի մանկապարտեզների և դպրոցների աշխատակազմերի միջոցով պարտադրում են վերջիններիս աշխատակիցներին, նրանց ընտանիքների անդամների, հարազատների և աշակերտների ու սաների ծնողներին քվեարկել ՀՀԿ-ի օգտին: Այդ պարտադրանքը զուգակցվել է դպրոցների և մանկապարտեզների աշխատակիցների և աշակերտների

⁵⁹ <http://www.iragir.am/index/arm/0/country/view/150953>

⁶⁰ <http://www.asparez.am/levon-barseghyan-politicized-educational-system-2/#.WPTLnfmg001>

ու սաների ծնողների տվյալների, այդ թվում՝ անձնագրային, հավաքմամբ և ցուցակագրմամբ: Այդ մասին հրապարակային ահազանգերով հանդես են եկել ընտրական գործընթացի մասնակից բազում սուբյեկտներ:

Ընտրությունների կազմակերպման, անցկացման համար պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման մարմինները միջոցներ չեն ձեռնարկել հիշյալ հանգամանքները բացահայտելու և կանխելու ուղղությամբ:

Նման պայմաններում «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը նախաձեռնել և ձայնագրել է 84 դպրոցների և 30 մանկապարտեզների տնօրենների հետ հեռախոսային խոսակցություններ, որոնցում վերջիններս մանրամասներ են բացահայտել իրենց կողմից իրականացվող ցուցակագրումների ու դրանց հետ կապված հանգամանքների մասին⁶¹:

Ձայնագրությունների համաձայն՝ վերոհիշյալ տնօրեններն օգտագործել են իրենց պաշտոնական դիրքը հոգուտ ՀՀԿ-ի քվեարկող քաղաքացիների ցուցակների ձևավորման նպատակով և այդ ցուցակները հանձնել են մարզպետարաններին և տեղական ինքնակառավարման մարմիններին, Երևան քաղաքի վարչական շրջանների համապատասխան մարմիններին, Հանրապետական կուսակցության կենտրոնական ընտրական շտաբին, ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորների թեկնածուների ընտրական շտաբներին: Վերջիններս քարոզչություն կատարելիս ներգրավել են իրենց ղեկավարած ուսումնական հաստատության աշխատողներին՝ ուսուցիչներին և դաստիարակներին:

25.03.2017 թ. «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինքը (հետայսու՝ ՕՐՕ դաշինք) դիմում է ներկայացրել ԿԸՀ՝ ՀՀԿ-ի ընտրական ցուցակի գրանցումը ուժը կորցրած ճանաչելու հայցով ՀՀ վարչական դատարան (հետայսու՝ Վարչական դատարան) դիմելու պահանջով՝ դիմումի հիմքում դնելով հասարակական կազմակերպության կողմից հրապարակված փաստերը:

Նույն պահանջով դիմել է նաև «Ելք» կուսակցությունների դաշինքը: Դիմումի քննության ընթացքում, որպես վարչական վարույթի նյութ, ու-

⁶¹ Հասարակական կազմակերպության (<http://uicarmenia.org/>) կողմից հրապարակվել է «Դպրոցների և մանկապարտեզների տնօրենների հետ խոսակցությունների ձայնագրությունները» (հետայսու՝ Ձայնագրություններ) (Տե՛ս <http://www.civilnet.am/> էլեկտրոնային կայքում՝ «Դպրոցների ու մանկապարտեզների տնօրենները ձայներ են հավաքագրում ՀՀԿ-ի համար» վերտառությամբ հոդվածը):

սումնասիրվել են ԿԸՀ-ին տրամադրված տնօրենների բացատրությունները⁶² (հետայսու՝ Բացատրություններ):

Տնօրենների՝ ուսուցիչների, աշակերտների ծնողների վրա ազդեցության 2 դեպք ԿԸՀ-ն ընդունել է (հոգնավար և Գյումրի):

ԿԸՀ-ն, 28.03.2017 թ. թիվ N-145Ա որոշմամբ, մերժել է «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» դաշինքի դիմումը, իսկ 30.03.2017 թ. № 146-Ա որոշմամբ՝ «Ելք» կուսակցությունների դաշինքի դիմումը:

Արդյունավետ միջոցներ և քննություն չեն իրականացրել նաև Գլխավոր դատախազությունն ու նախաքննության մարմինները⁶³:

2.4.2. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Քվեարկության նախապատրաստման փուլի գործընթացների առնչությամբ արձանագրվել է ընդհանուր առմամբ 228 խախտում (դիտարկված բոլոր խախտումների 13,2%-ը)⁶⁴՝ 190 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 12,4%-ը):

Քվեարկության սենյակի կահավորում

Քվեարկության նախապատրաստման փուլում ամենից հաճախ հանդիպող խախտումները կապված են եղել քվեարկության սենյակի սխալ

⁶² ԿԸՀ-ն ձեռք է բերել «բացատրություններ» վերնագրված փաստաթղթեր, որոնք վերագրում է վիճահարույց ձայնագրությունների մասնակից տնօրեններին: Վարչական վարույթի նյութերում բացակայում է որևէ ապացույց առ այն, որ ստուգվել է Բացատրությունների հեղինակների ինքնությունը: Չկա որևէ փաստաթուղթ բացատրությունների հեղինակների կարգավիճակի վերաբերյալ, չկա որևէ բացատրություն, թե ով, որտեղ և որ օրն է բացատրություններ վերցնելու որոշում կայացրել, ինչպես է այն ծանուցվել բացատրությունների հեղինակներին, ինչպես են դրանք հայտնվել ՕՐՕ Դաշինքի դիմումի հիման վրա հարուցված վարույթի նյութերում, ինչու նույն փաստաթղթերը՝ բնօրինակներով հանդիսանում են երկու տարբեր վարչական վարույթների նյութեր և գտնվում 2-րդ վարչական գործի թղթապանակում:

⁶³ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծված աշխատանքային խումբն ուսումնասիրում է «Իրազեկ քաղաքացիների միավորման» կայքի կողմից հրապարակված «ՀՀ-ն չարաշահում է վարչական ռեսուրսը դպրոցներում ու մանկապարտեզներում. ձայնագրություններ» նյութը: Այս մասին այսօր՝ մարտի 26-ին, NEWS.am-ին հայտնեցին գլխավոր դատախազությունից: <https://news.am/arm/news/380997.html> Գյումրիի թիվ 37 դպրոցի տնօրենին առնչվող նյութերով քրեական գործ չի հարուցվի, նախապատրաստված նյութերն ուսումնասիրելուց հետո դատախազությունը քրգործի հիմքեր չի գտել: Այս մասին «Ազատությանը» տեղեկացրեց Շիրակի մարզի դատախազ Կարեն Գաբրիելյանը: <http://www.azatutyun.am/a/28434875.html>

կահավորման հետ: Ընդհանուր առմամբ, գրանցվել է 146 նման խախտում 130 տեղամասում, որոնցից 89-ը վերաբերել է քվեարկության սենյակի մատչելիությանը, մասնավորապես՝ թեքահարթակի բացակայությանը, ինչը կարող էր դժվարամատչելի դարձնել սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: 35 դեպք է գրանցվել՝ կապված քվեարկության սենյակի ոչ պատշաճ կահավորման հետ, ինչը հնարավորություն չի տվել կամ դժվարացրել է դիտորդների կողմից քվեարկության գործընթացին և հանձնաժողովի աշխատանքներին հետևելը՝ արդյունավետ դիտարկելը: Քվեախցիկների քանակի և դասավորության հետ կապված խնդիրներ արձանագրվել են 22 տեղամասերում: Դրանց ճնշող մեծամասնության պարագայում քվեախցիկներից առնվազն մեկը տեղադրված է եղել այնպես, որ հնարավոր է եղել վերահսկել/դիտարկել քվեախցիկում քվեարկություն կատարող ընտրողին: Դրանցից 10-ի դեպքում դիտորդի՝ հանձնաժողովին տեղեկացնելուց հետո խախտումը վերացվել է: Ընդհանուր առմամբ գրանցված 146 խախտումներից միայն 25-ն է վերացվել և 59-ը գրանցվել տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:

Տեղամասային հանձնաժողովի աշխատակարգ

Քվեարկության նախապատրաստման փուլում խախտումների հաջորդ խումբն առնչվում է տեղամասային հանձնաժողովի աշխատակարգին: Ընդհանուր առմամբ գրանցվել է 45 նման խախտում՝ 43 տեղամասում, որոնցից 19 դեպքը կապված է եղել տեխնիկական սարքի ոչ պատշաճ նախապատրաստման, 17-ը՝ հանձնաժողովի նիստը սահմանվածից ուշ սկսելու, իսկ մնացած 9 դեպքերը՝ վիճակահանության կարգի խախտումների հետ: Ընդհանուր առմամբ, գրանցված 45 խախտումներից միայն 11-ն է վերացվել և 20-ը գրանցվել տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:

Քարոզչական նյութերի առկայություն տեղամասում

Քվեարկության սենյակում կամ տեղամասի տարածքում քարոզչական նյութերի առկայության հետ կապված գրանցվել է 18 խախտում՝ 17 տեղամասում, որոնցից միայն կեսի դեպքում է խախտումը վերացվել այն բացահայտելուց հետո և 7 դեպքն էլ արձանագրվել է տեղամասի գրանցամատյանում:

Քվեարկության պարագաների հետ կապված խնդիրներ

Քվեարկությունը սկսելուց առաջ 6 տեղամասերում արձանագրվել է 6 դեպք, որոնցից 4–ը կապված է եղել քվեատուփերի պատշաճ կերպով փակված կամ կնքված չլինելու հետ, իսկ 2–ը՝ չիրկիզվող պահարանի հետ: Բոլոր 6 դեպքերը գրանցվել են գրանցամատյանում, 4 տեղամասերում դիտարկված խնդիրները վերացվել են:

2.4.3. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Դիտորդական առաքելության ընթացքում վերհանված խախտումների մեծամասնությունն արձանագրվել է բուն քվեարկության ընթացքում: Այս փուլի խախտումների վերաբերյալ արձանագրվել է ընդհանուր առմամբ 919 խախտում (դիտարկված բոլոր խախտումների 53,4%–ը)՝ 498 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 32,7%–ը):

Ընտրակաշառքի բաժանում և/կամ խոսպում

ՔԴՆ–ի դիտորդներին քվեարկության ընթացքում հաջողվել է նաև արձանագրել ընտրակաշառքի բաժանման և խոստումների տրամադրման 6 դեպք՝ 5 տեղամասում, որոնցից 4–ն արտացոլվել է տեղամասի գրանցամատյանում:

Ընտրողների ուղղորդում

ՔԴՆ–ի դիտորդների կողմից արձանագրվել է ընտրողների ուղեկցման և ուղղորդման 169 դեպք 131 տեղամասերից՝ ընդհանուր թվով 31 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 12, 14, 16, 17, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 31, 32, 33, 34, 35, 36, 37 տարածքներ), որոնցից 84–ի դեպքում ուղղորդումներն իրականացվել են տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց՝ հանձնաժողովի անդամների, վստահված անձանց և տարբեր դիտորդների կողմից, իսկ 87–ի դեպքում կարգավիճակ չունեցող կամ չպարզված կարգավիճակով անձանց կողմից: Հիշյալ դեպքերից 68–ում արձանագրվել է, թե ում օգտին է իրականացվել ուղղորդումը. 43–ի պարագայում ուղղորդումները կատարվել են ՀՀԿ–ի և նրա տարածքային ցուցակներով թեկնածուների օգտին (**63,23%** այն դեպքերի, երբ հնարավոր է եղել բացահայտել խախտման շահառուին), իսկ 13–ի պարագայում՝ «Ծառուկյան» դաշինքի օգտին (**19,11%** այն դեպքերի երբ հնարավոր է եղել բացահայտել խախտման շահառուին): Նշված դեպքերից միայն 48–ն է գրանցվել տեղամասի գրանցամատյանում:

Տեղամասում քարոզչություն կամ հակաքարոզչություն

Դիտորդների կողմից դիտարկվել է տեղամասում քարոզչություն կամ հակաքարոզչություն իրականացնելու, տեղամասերում քարոզչական նյութերի առկայության 169 ահազանգ թվով 131 տեղամասերում՝ 33 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 16, 17, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 31, 32, 33, 34, 35, 36 տարածքներ), որոնցից 3-ի դեպքում քարոզչությունն իրականացվել է տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց՝ հանձնաժողովի անդամների, վստահված անձանց, իսկ 4-ի դեպքում՝ կարգավիճակ չունեցող կամ չպարզված կարգավիճակով անձանց կողմից: Հիշյալ դեպքերից 22-ում արձանագրվել է, թե ում օգտին է իրականացվել քարոզչությունը. 18-ի պարագայում քարոզչությունը և քարոզչական նյութերը վերաբերելի էին ՀՀԿ-ին և նրա տարածքային ցուցակների թեկնածուներին, 2-ի պարագայում՝ «Ծառուկյան» դաշինքի, 1 դեպքում՝ «Ելք» դաշինքի, 1 դեպքում՝ «ՕՐՕ» դաշինքի օգտին: Այս դեպքերից միայն մեկն է գրանցվել տեղամասի գրանցամատյանում:

Քվեարկության գաղտնիության խախտում, քվեարկության նկատմամբ հսկողություն

Քվեարկության գաղտնիության խախտման վերաբերյալ ստացվել է 194 հաղորդում 143 տեղամասերում՝ 36 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38 տարածքներ): Նշված հաղորդումները ներառել են տեղեկություններ թվով 242 խախտման մասին: Դեպքերի զգալի մասը՝ 124-ը, կապված է եղել հենց ընտրողի կողմից քվեարկության գաղտնիության խախտման հետ և դրանցից 50-ը արտացոլվել է տեղամասի գրանցամատյանում: Մնացած դեպքերն առնչվել են այլ անձի կողմից ընտրողի քվեարկության նկատմամբ հսկողությանը և դրանցից միայն 28-ն են գրանցվել տեղամասերի գրանցամատյաններում:

Քվեարկության պարագաների հետ կապված խնդիրներ

Դիտարկվել է 58 դեպք՝ 51 տեղամասերում, որոնցից 30-ն արտացոլվել է տեղամասի գրանցամատյանում: Գրանցված դեպքերի բացարձակ մեծամասնությունը՝ 55 դեպք, կապված է եղել քվեաթերթիկ դուրս հանե-

լու կամ ներս բերելու հետ, 1 դեպքում տեղամասի կնիքը հայտնվել է տեղամասի աղբամանում, մեկ այլ դեպքում տեղամասի կնիքն անհետացել է երկու ժամով (20.00–22.00), իսկ 27/6 տեղամասում հանձնաժողովի անդամներից մեկը ծխելու պատրվակով դուրս է եկել տեղամասից՝ իր հետ վերցնելով անհատական կնիքը:

Քազմակի քվեարկության կամ այլ անձի փոխարեն քվեարկության, այլ անձի փոխարեն ստորագրություն դնելու, ինչպես նաև կրկնաքվեարկության դեպքեր

Դիտարկվել է բազմակի քվեարկության կամ այլ անձի փոխարեն քվեարկության, այլ անձի փոխարեն ստորագրություն դնելու, ինչպես նաև կրկնաքվեարկության փորձերի՝ ընդհանուր թվով 61 դեպք 58 տեղամասում՝ թվով 30 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 31, 32, 35, 36, 37, 38 տարածքներ). դրանցից 50–ն արտացոլվել է տեղամասի գրանցամատյանում: Դիտարկված խախտումների մեծամասնությունը՝ 31 դեպք, կապված է եղել ընտրողի կողմից իր անձը հաստատող այլ փաստաթղթով կրկնակի գրանցման հետ: Եղել է նաև այլ անձի փոխարեն գրանցման 11 դեպք և այլ անձի փոխարեն ընտրողների ցուցակում ստորագրման դեպքեր:

Ընտրելու իրավունքի խախտում

ՔԳՆ–ի դիտորդների կողմից ստացվել է ընտրողներին քվեարկության իրավունքից զրկելու 15 ահազանգ ընդհանուր թվով 15 տեղամասից՝ 11 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 1, 4, 7, 8, 13, 23, 25, 26, 36, 37, 38 տարածքներ): Նշված դեպքերից միայն 10–ն է արտացոլվել գրանցամատյաններում:

Տեղամասային հանձնաժողովի աշխատակարգ

Քվեարկության ընթացքում գրանցվել է ՏՀՀ աշխատակարգի 37 խախտման դեպք՝ 34 տարբեր տեղամասերում, որոնց մեծամասնությունը՝ 29–ը, առնչվել է վիճակահանությամբ նախատեսված հերթափոխի (ոռտացիա) խախտմանը, իսկ մնացած 8 դեպքերը՝ քվեարկությունը՝ օրենքով նախատեսված ժամանակից ուշ կամ շուտ սկսելուն: Նշված 37 խախտումներից միայն 12–ն են արձանագրվել գրանցամատյանում:

Օգնության կարգի խախտում

Ընտրողին քվեարկել օգնելու կարգի խախտման հետ կապված՝ դիտարկվել է 77 խախտման դեպք 65 տեղամասերում՝ թվով 27 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 23, 25, 27, 32, 33, 35, 36 տարածքներ): Խախտումների մոտ կեսը՝ 39-ը, գրանցվել է տեղամասի գրանցամատյանում: Այս տեսակի խախտումների հիմնական էությունն այն է, որ քվեարկության նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով (գաղտնիության խախտում կամ այդպիսի պատրանքի ստեղծում, կամ հենց օգնություն ստացող անձի փոխարեն քվեարկություն) օգնության կարիք չունեցող ընտրողների նկատմամբ, ինչպես նաև առանց այդպիսի օգնության անհրաժեշտության առերևույթ առկայության պարզման (ինչն օրենքը չի նախատեսում) կիրառվում է օգնողի ինստիտուտը: Հատկանշական է նաև այն, որ «օգնություն» ցուցաբերվում է ինչպես ընտրողի խնդրանքով, այնպես էլ՝ առանց խնդրանքի կամ առաջարկության: Եղել են դեպքեր, երբ, այսպես կոչված, «օգնողները» ավելի շուտ են եկել տեղամաս՝ կանխավ իմանալով, որ ինչ-որ անձանց պետք է օգնեն: Ընտրողին օգնելու դեպքերն ուղեկցվել են հետևյալ խախտումներով՝ օգնելու իրավունք չունեցող անձի կողմից ընտրողին օգնելը, նույն անձի կողմից մեկից ավելի ընտրողի օգնելը և օգնող անձի տվյալները գրանցամատյանում չգրանցելը, օգնության կարիք չունեցող ընտրողին օգնելը:

Այս ինստիտուտի կիրառման ծավալներն, ինչպես հետագայում պարզվեց «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կողմից կատարված հարցման արդյունքում, ըստ ԿԸՀ տրամադրած տվյալների՝ հետևյալն են եղել. խորհրդարանական ընտրությունների օրը օգնությամբ քվեարկել է 70488 ընտրող (քվեարկության մասնակցած ընտրողների ընդհանուր թվի 4,5 տոկոսը), ընդ որում՝ 23 տեղամասում՝ ընտրողների 20 տոկոսից ավելին, իսկ 4 տեղամասում 30 տոկոսից ավելին է օգնությամբ քվեարկել⁶⁴:

Կողմնակի անձանց ներկայություն տեղամասում

Ինչպես և նախկինում դիտարկված ընտրությունների ընթացքում, այս անգամ ևս թե՛ քվեարկության ընթացքում և թե՛ առանձին դեպքերում

⁶⁴ <http://hcav.am/wp-content/uploads/2017/07/NA-report.pdf>

քերում անգամ քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ կողմնակի անձանց ներկայությունը տեղամասերում լայն տարածում է ունեցել: Միայն ՔԴԼ-ի դիտորդներն արձանագրել են 96 դեպք 80 տարբեր տեղամասերում (դիտարկված բոլոր տեղամասերի մոտ 5,5%-ը): Հանձնաժողովի նախագահը և ոստիկանությունը բավարար միջոցներ չեն ձեռնարկել կողմնակի անձանց ներկայության հետ կապված խախտումները շտկելու համար: Նշված դեպքերից միայն 29-ն են արձանագրվել տեղամասային գրանցամատյաններում:

Մարդկանց և մեքենաների կուրակումներ

ՔԴԼ-ի դիտորդների կողմից արձանագրվել է տեղամասերում և դրանց հարակից (50 մետր շառավղով) տարածքներում մարդկանց և մեքենաների կուտակումների (ինչը ԸՕ պահանջի խախտում է) մասին 111 ահագանգ ընդհանուր թվով 94 տեղամասում՝ 27 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 2, 4, 5, 7, 8, 9, 10, 12, 14, 16, 17, 18, 19, 21, 22, 23, 25, 26, 27, 28, 29, 32, 33, 35, 36, 37, 38 տարածքներ): Ինչպես և կողմնակի անձանց քվեարկության սենյակում գտնվելու պարագայում, հանձնաժողովի նախագահը և ոստիկանությունը բավարար միջոցներ չեն ձեռնարկել կողմնակի անձանց ներկայության հետ կապված խախտումները վերացնելու համար: Նշված դեպքերից միայն 25-ն են արձանագրվել տեղամասային գրանցամատյաններում:

Այս դեպքերի կարևորությունն այն է, որ դրանք փոխկապակցված են ընտրողներին քվեարկելու նպատակով համակարգված տեղափոխումների և ուղղորդման հետ:

Իրական ժամանակում տեղամասերի տեսանկարահանման հեռարձակման բացակայություն

Քվեարկության օրը՝ առավոտյան ժամը 7-ից սկսած, խափանվել է գրեթե բոլոր՝ 1500 տեղամասերում դրված տեսախցիկներով առցանց հեռարձակումը⁶⁵: Խափանումը տևել է մինչև ժամը 13:00-ի սահմանները, իսկ դրանից հետո վերականգնվել է մասնակի: Տեսախցիկներով հեռարձակման խափանումը համընկել է քվեարկության օրվա հենց այն ժամանակահատվածի հետ, երբ տեղամասերում առավել մեծ ծավալի են եղել ընտրողների ակնհայտ կազմակերպված գերակտիվ հոսքերը, կու-

⁶⁵ <https://www.azatutyun.am/a/28407083.html>

տակումները, բաց ու վերահսկվող քվեարկությունները և քվեարկության բնականոն ընթացքի խախտումները՝ անվերահսկելի իրավիճակները: Խափանման, դրա պատճառների կապակցությամբ որևէ պաշտոնական պարզաբանում չի տրվել, և այդ խափանումները ողջամիտ կասկած են առաջացնում առ այն, որ դրանք եղել են համակարգված և կազմակերպված՝ տեղամասերում իրականացված ընտրախախտումների այդպիսի ծավալի տեսանելիությունը և դրա նկատմամբ ավելի լայն հանրային հսկողությունը հնարավորինս սահմանափակելու նպատակով:

Այլ

Ի լրումն ներկայացված խախտումների՝ 152 տարբեր տեղամասերից 204 տարբեր խախտումներ են հաղորդվել քվեարկության ընթացքի հետ կապված: Դրանք ներառել են ՏԸՀ անդամների կողմից ճաշկերույթների կազմակերպում քվեասենյակում՝ ընտրողների ներկայությամբ և երբեմն մասնակցությամբ, գունավոր գրիչներով նշումների կատարում, էլեկտրականության անջատում, դիտորդական առաքելություն իրականացնող այլ կազմակերպության դիտորդի կողմից ընտրությանը մասնակցող կուսակցություններից մեկին աջակցություն, չկնքված քվեարկության կտրոններ, թեկնածուի ներկայություն քվեարկության սենյակում, ընտրողների կտրոնների հերթական համարների անհամապատասխանություն ցուցակի համարներին, հանձնաժողովի անդամի կողմից պարտականությունների իրականացում ավտոմատ ազդեցության տակ և այլն:

Ընտրողների էլեկտրոնային գրանցման սարքավորումների հետ կապված խնդիրներ

Մինչև քվեարկության օրը ԿԸՀ-ի կողմից կազմակերպվել է ընտրողների էլեկտրոնային գրանցման սարքավորումների երկու փորձարկում՝ 2017 թ. փետրվարի 12-ին՝ ՏԻՄ ընտրությունների ժամանակ և մարտի 25-ին, որոնցից առաջինի ընթացքում արձանագրվել են մատնահետքի ընթերցման խնդիրներ, որոնք հիմնականում շտկվել են մարտի 25-ին կազմակերպված փորձարկման ժամանակ: Չնայած դրան՝ քվեարկության օրն արձանագրվեցին տեխնիկական սարքավորումների հետ կապված մի շարք խնդիրներ, այդ թվում՝ խափանումներ, սակայն դրանց կապակցությամբ սպառիչ և հիմնավոր պաշտոնական պարզաբանում չտրվեց, չկատարվեց նաև դրանց պատճառների և ազդեցության արդյունավետ քննություն:

- **Բավական մեծ է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով գրանցված ընտրողների թիվը՝ 229 757 (ըստ ԿԸՀ պաշտոնական տվյալների⁶⁶):**

Տեխնիկական սարքավորման խափանում

ՔԴՆ-ի դիտորդների կողմից արձանագրվել է տեխնիկական սարքավորումների ժամանակավոր խափանման 155 դեպք 136 տեղամասերում՝ թվով 35 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 31, 32, 33, 34, 35, 36, 38 տարածքներում):

- **Տեխնիկական սարքավորումների էլեկտրոնային ցուցակների և ընտրողների ստորագրվող ցուցակների անհամապատասխանություն**

ՔԴՆ-ի դիտորդների կողմից արձանագրվել է տեխնիկական սարքավորումների էլեկտրոնային ցուցակների և ընտրողների ստորագրվող ցուցակների անհամապատասխանության 22 դեպք 17 տեղամասերում՝ թվով 13 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 16, 17, 26, 27, 33, 35 տարածքներում):

ՔԴՆ-ի դիտորդների կողմից արձանագրվել է տեխնիկական սարքավորումների տեղեկանքում նշված մասնակցության ընդհանուր թվի և ընտրողների ստորագրված ցուցակներում ստորագրությունների թվի անհամապատասխանության 12 դեպք 10 տեղամասերում՝ թվով 8 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 3, 4, 5, 7, 9, 22, 23, 34 տարածքներում):

2.4.4. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄՈՒՄ

Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում գործընթացների առնչությամբ արձանագրվել է ընդհանուր առմամբ 170 խախտում/խնդիր (դիտարկված բոլոր խախտումների մոտ 9,8%-ը)՝ 126 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 8,2%-ը):

⁶⁶ <http://res.elections.am/images/doc/VAD.results02.04.17.pdf>

Տեղամասային հանձնաժողովի աշխատակարգի խախտում

Ամփոփման փուլում արձանագրվել է տեղամասային հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփման կարգի խախտման 23 դեպք թվով 17 տեղամասերում (9/42, 9/7, 27/9, 3/20, 31/15, 31/55, 20/34, 7/13, 32/31, 4/22, 32/27, 3/17, 9/37, 28/2, 23/42, 3/14, 16/9) . բոլորը ներկայացվել են տարածքային ընտրական հանձնաժողովներ դիմում–բողոքների տեսքով: Դրանցից միայն 13–ն են գրանցվել տեղամասի գրանցամատյանում:

Քվեարկության արդյունքների ամփոփման կարգի խախտումներ

Ստացվել է քվեարկության արդյունքների ամփոփման և հաշվարկի կարգի խախտման 46 ահազանգ թվով 35 տեղամասում՝ 17 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներից (թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 13, 17, 22, 23, 24, 27, 28, 29, 31 տարածքներ), որոնցից միայն 15–ն են գրանցվել գրանցամատյաններում: Այս խմբի խախտումները ներառել են արդյունքների հաշվարկի գործողությունների հերթականության խախտման 5 դեպք, քվեաթերթիկների հանման, ընթերցման և ցուցադրման կարգի խախտման 5 դեպք, քվեաթերթիկն անհիմն անվավեր ճանաչելու 1 դեպք, ծրարի մեջ ավելորդ պարագաների առկայության 7 դեպք, սարքի միջոցով տեղեկանք չտպելու կամ ներկաներին չտրամադրելու 2 դեպք, սխալ հաշվարկի 9 դեպք, գրանցամատյանում ելակետային տվյալների և արդյունքների պատշաճ չարձանագրման 2 դեպք, ներկաներին արձանագրության քաղվածք չտրամադրելու կամ լուսանկարել չթույլատրելու 13 դեպք և քվեարկության պարագաների փաթեթավորման կարգի խախտման 2 դեպք:

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ գրեթե համատարած է եղել ընտրական օրենսգրքով սահմանված գործողությունների հաջորդականության խախտումը, մասնավորապես՝ նախ տպվել են ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքավորումների տեղեկանքները, որից հետո միայն հաշվարկվել են ընտրողների ցուցակներում ստորագրությունները (քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը ելակետային տվյալ է), այնինչ Ընտրական օրենսգրքը նախատեսում է նախ ընտրողների ցուցակներում ստորագրությունների հաշվարկ, ստացված թվի արձանագրում, այնուհետև նոր էլեկտրոնային սարքերի տեղեկանքների տպում:

Քվեարկության արդյունքների կեղծում

ՔԴԼ–ի դիտորդների կողմից արձանագրվել է քվեարկության արդյունքների կեղծման 3 դեպք. երկուսը՝ թիվ 2/11 տեղամասում, մեկը՝ թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովում:

Տարբեր տեղամասերի ամփոփիչ արձանագրությունների ուսումնասիրությունը բացահայտել է, որ թիվ 5/2, 5/3, 5/6, 8/16, 8/26 տեղամասերում Հանրապետական կուսակցությունը (6–րդ համար) հավաքել է 633 ձայն, իսկ թիվ 1/13, 2/27, 3/13, 3/14, 3/18, 10/52 տեղամասերում՝ 596: Այս օրինաչափությունները խոսում են այն մասին, որ ամենայն հավանականությամբ այս քվեների ձևավորումը որոշակի միջամտության հետևանք է:

- **Տեխնիկական սարքավորումների տեղեկանքում նշված մասնակցության ընդհանուր թվի և ըստ ընտրողների ստորագրված ցուցակների ընտրությանը մասնակցած անձանց ստորագրությունների թվի անհամապատասխանություն**

Արձանագրվել է տեխնիկական սարքավորումների էլեկտրոնային ցուցակների և ընտրողների ստորագրած ցուցակների անհամապատասխանության 22 դեպք 17 տեղամասում: Դեպքերից 20–ը ներկայացվել են տարածքային ընտրական հանձնաժողովներ դիմում–բողոքների տեսքով, ինչպես նաև արտացոլվել 07.04.2017 թ. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովներ կայացված դիմում–բողոքում:

2.4.5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ

Արդյունքների ամփոփման փուլում գրանցվել են 76 այլ տեսակի խախտումներ և/կամ խնդիրներ 66 տարբեր տեղամասերում, որոնց թվում՝ տեղամասի տարածքում էլեկտրաէներգիայի անջատում, այլ կազմակերպություններ ներկայացնող դիտորդներին նախքան արձանագրությունը կազմելը քաղվածքի տրամադրում, հանձնաժողովի անդամների՝ նախքան ամփոփիչ նիստի ավարտը տեղամասի լքում, արձանագրության քաղվածքի հրնթացս լրացում՝ նախքան արձանագրության կազմման ավարտը, գրանցամատյանից քաղվածքներ իրականացնելու կամ լուսանկարահանելու արգելք, անհայտ անձի կողմից ուժի գործադրմամբ

ընտրատեղամաս մտնելու փորձ, ծրարներում քվեաթերթիկից բացի այլ թղթիկների և տարբերակող նշումներ պարունակող քվեաթերթիկների առկայություն և հանձնաժողովի կողմից դրանց վավեր համարում, ծրարները քվեատուփից հանելու կարգի խախտում, ելակետային տվյալների՝ մատիտով գրանցում գրանցամատյանում, վստահված անձի կողմից ակտիվ միջամտություն հանձնաժողովի աշխատանքներին, տեսախցիկի աշխատանքի խափանում և այլն: Նշված դեպքերից միայն 20-ն է արձանագրվել տեղամասերի գրանցամատյաններում:

2.4.6. ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՈՎ

Դիտորդների իրավունքների խախտումներ

Արձանագրվել են դիտորդների իրավունքների տարբեր խախտումներ, որոնցից 45 դեպքը՝ 43 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 2,8%-ը), վերաբերել է դիտարկման իրավունքին: Մի քանի տեղամասում խախտվել է նախապատրաստական նիստին մասնակցելու դիտորդի իրավունքը, եղել են սահմանափակումներ ընտրական փաստաթղթերին ծանոթանալու և տեղամասում ազատ տեղաշարժվելու առումներով և այլն: Ընդ որում՝ այս խախտումներից միայն 4-ն (10%) են գրանցվել տեղամասերի գրանցամատյաններում:

Ճնշումներ և բռնություն դիտորդների նկատմամբ

Դիտորդների կողմից արձանագրվել է դիտորդների նկատմամբ ճնշումների և բռնության 13 ահազանգ թվով 11 տարբեր տեղամասերում (թիվ 15/32, 2/1, 9/55, 8/1, 5/17, 5/14, 10/4, 4/44, 10/53, 32/34, 32/4 տեղամասեր)՝ ներառյալ սառը զենքով (դանակ) սպառնալիք, ֆիզիկական բռնության, հոգեբանական ճնշման և սպառնալիքների կիրառում դիտորդների նկատմամբ: Հատկանշական է, որ նշված դեպքերից միայն մեկն է արձանագրվել տեղամասի գրանցամատյանում:

Մեկ տեղամասում արձանագրվել է ՔԴՆ-ի դիտորդներին հեռացնելու դեպք, որի մասին որոշումը վերացվել է:

Դիտորդի գնահատականի արձանագրման մերժում

ՔԴՆ-ի դիտորդների կողմից արձանագրվել է տեղամասերի դիտորդների դիտարկած խախտումները գրանցամատյաններում չգրանցելու ընդհանուր առմամբ 1023 դեպք, որոնցից հաստատվել է 1001 դեպք թվով 485 տեղամասերում՝ բոլոր 38 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում:

Դիտորդների լուսանկարահանման և/կամ տեսանկարահանման իրավունքի խախտում

Դիտորդների կողմից արձանագրվել է դիտորդների լուսանկարահանման և/կամ տեսանկարահանման իրավունքի խոչընդոտման 4 ահագանգ թվով 4 տեղամասերում՝ 4 տարբեր տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 3, 10, 15, 33 տարածքներ):

Դիտորդներին օրենքով սահմանված փաստաթղթերի չտրամադրում

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդների կողմից արձանագրվել է դիտորդներին օրենքով սահմանված փաստաթղթերի չտրամադրման 2 ահագանգ 2 տեղամասում՝ 2 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ 4, 29 տարածքներ):

2.4.7. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԴԻՏԱՐԿՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ /ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորված տարբերակների հրապարակման և դրանց մատչելիության հետ կապված խնդիրներ

2017 թ. ապրիլի 4-ին ՔԴՆ-ն հայտարարություն է տարածել առ այն, որ ապրիլի 4-ի ժամը 19:00-ի դրությամբ ընտրողների կողմից ստորագրված ցուցակների ԿԸՀ կայքէջում տեղադրված հղումները հիմնականում չեն աշխատել⁶⁷: 2017 թ. ապրիլի 6-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզաբանում է տարածել, ըստ որի՝ ցուցակների ներբեռնման դժվարությունները կապված են եղել կայքի ծանրաբեռնվածության հետ, և ցուցակները հրապարակվել են նաև այլընտրանքային տարբերակներով⁶⁸:

⁶⁷ <https://www.citizenobserver.am/hy/news/view/zzdv2017-04-04-19-18>

⁶⁸ <http://res.elections.am/images/doc/mamul33.pdf>

Ուշագրավ է, որ այդ այլընտրանքային հղումը տեղակայված է «google drive» սերվերում, որը պատկանում է «Google»-ին, իսկ այն հաշվը, որով հրապարակվել է վերոհիշյալ այլընտրանքային հղումը, պատկանում է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին⁶⁹: Այսինքն՝ ընտրողների ստորագրած ցուցակները նախ հասանելի են դարձել Դավիթ Հարությունյանին, ապա նրա կողմից վերբեռնվել են հիշյալ սերվեր և արդեն այդտեղից հրապարակվել:

Ըստ ԿԸՀ 2017 թ. ապրիլի 9-ի թիվ 163-Ա որոշման՝ ընտրված պատգամավորներից 23-ն ինքնաբացարկ է հայտնել, այսինքն՝ ԱԺ պատգամավորների գրեթե ¼-ը⁷⁰: Մինչև ԿԸՀ որոշումը ՁԼՄ հրապարակումների համաձայն՝ ինքնաբացարկի դիմում է ներկայացրած եղել 35 պատգամավոր⁷¹: Այնուհետև մեկ այլ հրապարակման համաձայն՝ 12 պատգամավոր հայտարարել է, որ ինքնաբացարկի դիմում չի ներկայացրել⁷²: Ընդ որում, լրատվամիջոցներում տարածվել էր «Ծառուկյան» դաշինքի առավել մեծ թվով (23) թեկնածուների ինքնաբացարկի վերաբերյալ տեղեկատվություն, ինչին հաջորդել էր նրանցից 12-ի հայտարարությունը, որ իրենք ինքնաբացարկ չեն հայտնել: Այսինքն՝ կամ այս անձանց անունից կեղծ դիմումներ են ներկայացվել, կամ նրանցից նախապես ստացվել են ինքնաբացարկի դիմումներ, որոնք օգտագործվել են ըստ նպատակահարմարության: Այս հարցին անդրադարձ է կատարել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր 28. 04.2017 թ. ՍԴՈ-1364 որոշմամբ (13-րդ պարբերություն):

ՔԴԼ-ն դեռևս 2015 թվականի սահմանադրական հանրաքվեին ընդառաջ ստեղծել էր «Վերահսկիր հանրաքվեն» կայքէջն ու համակարգը,

⁶⁹ 02.04.2017 թ. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

⁷⁰ http://res.elections.am/images/dec/17.201_A.pdf

⁷¹ <http://armlur.am/685760/>

⁷² <http://www.panorama.am/am/news/2017/05/03/%D5%84%D5%B8%D6%82%D5%AF%D5%B8%D6%82%D5%B9%D5%B5%D5%A1%D5%B6-%D4%BE%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6/1771302>, <http://yerkirmedia.am/1political/carukyan-dashingq-inqnacabark-hrajjarvel/>

«Ծառուկյան» կուսակցությունների դաշինքից ինքնաբացարկներ կայացրած 23 պատգամավորներից 12-ը պահանջում են չեղյալ համարել դիմումները, «Ազատություն» ռադիոկայան, մայիսի 3, 2017, <https://www.azatutyun.am/a/28465916.html> tert.am, մայիսի 3, 2017, <http://www.tert.am/am/news/2017/05/03/saqunc/2359976>

որը հնարավորություն էր տալիս Հայաստանից բացակայող ընտրողներին այդ կայքում նախագրանցելու միջոցով բացահայտելու իրենց փոխարեն քվեարկությունը:

20.10.2017 թ. ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման օրենսդրական փոփոխության կապակցությամբ ՔԴՆ-ն կատարելագործել է վերոհիշյալ համակարգը՝ ստեղծելով ԱԺ ընտրություններին չմասնակցող և նախապես համակարգում գրանցված ընտրողների փոխարեն քվեարկության ավտոմատ ստուգման համակարգչային ծրագիր: Այդ ծրագրի գործարկման արդյունքում ստացվել են նախնական տվյալներ, որոնք, մեխանիկական ստուգման արդյունքում պարզվել է, ստույգ չեն, իսկ հետագայում պարզվել է, որ սխալը պայմանավորված է ընտրողների էլեկտրոնային ցուցակների (որոնք ներբեռնված էին ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքավորումների մեջ) և ընտրողների կողմից ստորագրված թղթային ցուցակների միջև տարբերություններով՝ ընտրողների հերթական համարները որոշ դեպքերում չեն համապատասխանել:

Մեծ սխալի տոկոսով է աշխատել նաև ՔԴՆ-ի ստեղծած համակարգչային այն ծրագիրը, որը պետք է ավտոմատացված եղանակով ապահովեր ընտրողների ստորագրած ցուցակների սկանավորած տարբերակների թվայնացումը դրանք որոնելի դարձնելու նպատակով:

Արդյունքում ՔԴՆ-ն որոշում կայացրեց իրականացնել ընտրողների ստորագրված ցուցակների մեխանիկական թվայնացում, որը հնարավորություն կընձեռի այդ ցուցակների բազմաբաղադրիչ և առավել լիարժեք ստուգում իրականացնելու և հնարավորություն կտա էապես փարատելու այլ անձանց փոխարեն քվեարկությունների, ինչպես նաև ընտրողների ցուցակների և դրանց հետ կապված հնարավոր ընտրակեղծիքների ու խախտումների վերաբերյալ կասկածները: Քանի որ հիշյալ թվայնացման գործընթացը կատարվում է մեխանիկական եղանակով, բավականին ժամանակատար է: Թվայնացման աշխատանքներն ավարտելուն պես, տվյալները կվերլուծվեն և կիրապարակվեն կատարված հետազոտության արդյունքները:

2.4.8. ՔՂՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՐՈՇ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ

- Զորամասերի ցուցակներում ընդգրկված զինծառայողների՝ քվեարկությանը մասնակցությունը կազմում է 86,2 %⁷³:
- Քրեակատարողական հիմնարկներում ձևավորված տեղամասերում քվեարկողների թիվը կազմել է 1533, իսկ քվեարկությանը մասնակցել է 1360 ընտրող, մասնակցությունը՝ 88,8 %:
- Հոգեբուժական հաստատություններում քվեարկելու իրավունք ունեցող 751 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 734 ընտրող, արդյունքում մասնակցությունը կազմել է 97,7 %:
- **Քվեարկությանը նախորդող 40-րդ և 4-րդ օրը ոստիկանության կայքում հրապարակված ցուցակների վերլուծության արդյունքում արձանագրված ուշագրավ և/կամ հնարավոր խախտումներ կամ կեղծիքներ**
 - Կատարված ուսումնասիրության արդյունքում ցուցակներից դուրս են բերվել 208017 հազար անուն, ազգանուն, հայրանուն, որոնցից յուրաքանչյուրը կրկնվում է 2-ից մինչև առավելագույնը 51 անգամ:
 - Այս դիտարկման կապակցությամբ, որը տեղ էր գտել նաև ՀԱԿ-ՀԺԿ դաշինքի բողոքում, ԿԸՀ-ն նիստի ընթացքում որպես հերքում ներկայացրել է նույն անուն, ազգանուն, հայրանուն ունեցող ընդամենը մի քանի հոգու լուսանկար և անձնագրային տվյալ:
 - 06.12.2015 թ. Սահմանադրական հանրաքվեի ՀՀ ոստիկանության հրապարակած ընտրողների վերջնական ցուցակների և 02.04.2017 թ. Ազգային ժողովի ընտրությունների՝ ՀՀ ոստիկանության հրապարակած ընտրողների վերջնական ցուցակների համեմատություն, որի արդյունքում ցուցակներից դուրս է բեր-

⁷³ ՔՂՆ-ն համապատասխան մեթոդաբանությամբ հաշվարկել է զորամասերի ցուցակներում ընդգրկված զինծառայողների թիվը և քվեարկությանը մասնակցածների թիվը: Այս մեթոդաբանությունը, ինչպես նաև թվային տվյալները չեն հրապարակվում ազգային անվտանգության նկատառումներից ելնելով:

վել 106084 անձ՝ գրանցված հասցեներում, որոնք գոյություն չեն ունեցել 06.12.2015 թ. Սահմանադրական հանրաքվեի ժամանակ հրապարակված ընտրողների ցուցակներում⁷⁴:

2.4.9. ՏԸՀ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ

ՔԴԼ-ի նոր մարտավարության շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները դիտորդներ են ունեցել բոլոր տարածքային ընտրական հանձնաժողովներում ապրիլի 2-ից մինչև 7-ն ընկած ժամանակահատվածում: Հիշյալ մարտավարությունը հնարավորություն տվեց բացահայտելու ՏԸՀ-ների բացարձակ կախվածությունը ԿԸՀ-ից և վերջինից անկախ, ինքնուրույն գործելու անկարողությունը և անկախ և ինքնուրույն օղակ լինելու պատրանքը: Դիտորդների օգնությամբ հնարավոր եղավ նաև բացահայտել, որ ՏԸՀ-ներն, ըստ էության, հանդես են գալիս որպես ԿԸՀ-ի կատարող ստորաբաժիններ, ինչը չի բխում ՀՀ ընտրական օրենսդրության պահանջներից:

ՏԸՀ-ները տարբեր պատրվակներով և պատճառաբանություններով խոչընդոտել են դիտորդների դիտարկման իրավունքի իրականացմանը (պահանջել, որ դիտորդներն ազատեն ՏԸՀ տարածքները՝ պատճառաբանելով, որ նիստեր չլինելու դեպքում դիտորդներն այնտեղ գտնվելու իրավունք չունեն և այլն)⁷⁵:

Բոլոր ՏԸՀ-ները դիտորդական առաքելություն իրականացնող դիտորդներին ապրիլի 4-ից 7-ը հաղորդել են, որ ընտրողների ստորագրած ցուցակների սկանավորումից, դիտորդների, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների, վստահված անձանց բողոքները, ինչպես նաև կուսակցությունների/դաշինքների դիմումները տվյալ տեղամասում ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու կամ վերահաշվարկի դիմումները ստանալուց հետո հանձնաժողովներն այլևս որևէ այլ գործառույթ չեն ունեցել անելու: Նույնը պնդել են նաև տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերը տարբեր օրերին ընդհուպ մինչև

⁷⁴ Նոր հասցեների կապակցությամբ ԿԸՀ-ի միակ փաստարկն այն էր, որ հնարավոր է, որ այդ նոր հասցեները գրանցվել են 06.12.2015 թ. Սահմանադրական հանրաքվեից մինչև 02.04.2017 թ. Ազգային ժողովի ընտրություններն ընկած ժամանակահատվածում:

⁷⁵ Նման միջադեպեր արձանագրվել են թիվ 3, 11, 12 և 14 տարածքային ընտրական հանձնաժողովներում:

ապրիլի 7-ը ԿԸՀ ուղարկելուց հետո՝ անդելով, որ իրենց մնացել է միայն հոգալ հանձնաժողովների անդամների աշխատավարձերի խնդիրները: Սա տեղի է ունեցել ի հեճուկս այն փաստի, որ միայն ՔԴՆ-ի շրջանակներում գործող կազմակերպությունների և դիտորդների կողմից 300-ից ավելի դիմում-բողոք է ներկայցվել տարբեր ՏԸՀ-ների:

Արձանագրվել են դեպքեր, երբ ՏԸՀ-ներից դիտորդներին հեռացրել են ճնշումների միջոցով⁷⁶: Որոշ դեպքերում ՏԸՀ-ների անդամները փակել են հանձնաժողովի սենյակների դռները ներսից և չեն թույլատրել դիտորդներին գտնվել հանձնաժողովների զբաղեցրած սենյակ(ներ)ում և դիտարկել իրենց աշխատանքները⁷⁷: Որոշ դեպքերում ՏԸՀ անդամները պատճառաբանել են, որ հանձնաժողովն այդ պահին նիստ չի գումարում, որևէ գործառույթ չի իրականացնում, և դիտորդներն իրավունք չունեն դիտարկելու, կամ հայտարարել են, որ իրենց աշխատանքային օրն ավարտվել է, և հեռացել են⁷⁸, սակայն դիտորդները, հերթապահելով վարչական շենքերի մոտ, մի քանի ժամ անց արձանագրել են, որ հանձնաժողովի անդամները վերադարձել են աշխատավայր:

Դիտորդներն արձանագրել են նաև, որ ՏԸՀ-ների կողմից դիմում-բողոքների քննարկման համար նախատեսված ժամանակահատվածում այդ ուղղությամբ որևէ գործառույթ կամ այլ գործողություն փաստացի չի իրականացվել:

Դիտորդների կողմից արձանագրվել են նաև փաստեր առ այն, որ ՏԸՀ-ների ստացած դիմում-բողոքներն ուղարկվել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով որոշումների վերաբերյալ դիրքորոշումներ ստանալու նպատակով:

⁷⁶ Թիվ 3 և 14 տարածքային ընտրական հանձնաժողովներ

⁷⁷ Թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողով

⁷⁸ Թիվ 11 և 27 տարածքային ընտրական հանձնաժողով

3. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

3.1. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՔԴՆ-ի առանձնահատկություններից մեկն ընտրությունների շրջանակներում դիտարկված խախտումների վերաբերյալ ինչպես դիտորդների սուբյեկտիվ իրավունքների, այնպես էլ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի պաշտպանության նպատակով ընտրական իրավունքի խախտման դեպքերով բողոքարկման գործընթացի և ռազմավարական դատավարությունների նախաձեռնումն է:

Դիտորդական առաքելության իրավաբանական թիմը դիտորդների դիտարկած և հաղորդած ընտրախախտումների առնչությամբ նախաձեռնել է բողոքարկման գործընթաց: 2017թ. ապրիլի 3-ին և 4-ին ինչպես դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների այնպես էլ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ ՔԴՆ-ի շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին վերջիններիս դիտորդների կողմից 309 դիմում-բողոքներ են ներկայացվել 37 տարածքային ընտրական հանձնաժողովներ (ՏԸՀ), որոնցից կեսից քիչ ավելին՝ 160 բողոք, կապված է եղել օբյեկտիվ ընդհանուր, ընտրական իրավունքի խախտումների հետ, իսկ 149-ը՝ սուբյեկտիվ իրավունքի: Դիմում-բողոքներ չեն ներկայացվել միայն թիվ 6 տարածքային ընտրական հանձնաժողով, քանի որ համապատասխան հանձնաժողովի սպասարկման տարածքում ընդգրկված տեղամասերում վերոնշյալ երեք կազմակերպությունները դիտորդներ չեն ունեցել⁷⁹:

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ ներկայացված դիմում-բողոքների ճնշող մեծամասնության հիման վրա վարչական վարույթների հարուցումը մերժվել է հանձնաժողովների կողմից (99 որոշումներ), ինչը պատճառաբանվել է կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի **դիմումատու դիտորդների և կազմակերպությունների՝ դի-**

⁷⁹ Թիվ 6 տարածքային հանձնաժողովի սպասարկման տարածքում ընդգրկված ընտրատեղամասերում դիտորդական առաքելություն իրականացվել է այլ դիտորդական կազմակերպության կողմից:

մումներում վկայակոչվող իրավունքների պաշտպանության հարցով դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտներ չհանդիսանալու (իրավասուբյեկտության բացակայության) հիմքով՝ հղում կատարելով 48-րդ հոդվածի 3-րդ մասին և 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությանը: Ըստ այդմ՝ ներկայացված փաստերի կապակցությամբ արդյունավետ քննություն չի իրականացվել: Այնփոքրաթիվ դեպքերում, երբ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից իրականացվել է ներկայացված դիմում-բողոքների քննություն (ընդ որում, այս դեպքերում քննությունն իրականացվել է միայն դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման մասով), այն չի եղել բազմակողմանի և օբյեկտիվ և կրել է բացառապես ձևական բնույթ:

3.1.1. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ

- **Դիտորդների և դիտորդական կազմակերպությունների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու հարցով իրավասուբյեկտության մասով.**

Դիտորդին և դիտորդականառաքելություն իրականացնող կազմակերպությանը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների/անգործության բողոքարկման համար ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով (օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների մասով) վարույթների հարուցման մերժումը, իրավունքին և օրենքին տրված սահմանափակ և կամայական մեկնաբանությունը ուղղակիորեն հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության 48-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի դրույթների հետ, քանի որ օրենսդիր մարմին ընտրելու իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Այս իրավունքը ներառում է յուրա-

քանցյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը, քանի որ ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումներն իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի վրա (հասցեականություն, արդյունավետություն): Հետևաբար ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ենթակա են քննության: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը:

• **Դիմող կազմակերպությունների մասով վարույթի հարուցման մերժման վերաբերյալ. հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության մասով.**

Համաձայն ՏՀՀ որոշումների՝ դիմումատու հասարակական կազմակերպությունները դիմում-բողոք ներկայացնելու իրավասու սուբյեկտ չեն հանդիսանում, քանի որ հասարակական կազմակերպությունների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված իրավունքներն ամրագրված են նույն օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով և վերաբերում են դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելուն: **Որոշումներով արձանագրվել է նաև, որ որևէ այլ իրավունք ՀՀ ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված չէ:**

Վերոգրյալ պատճառաբանությամբ վարչական վարույթների հարուցման մերժումը ուղղակիորեն հակասել է ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթներին: ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի ուժով ՀՀ հասարակական կազմակերպություններին վերապահված է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք⁸⁰, որը համապատասխան կազմակերպությունն իրականացնում է իր կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով: Դիտորդի բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտության վերաբերյալ ներկայացված հիմնավորում-

⁸⁰ Այն կազմակերպություններին, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին

ները հավասարապես կիրառելի են դիտորդական կազմակերպությունների նկատմամբ, քանի որ վերջիններս հանդիսանում են ընտրական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ: Նրանց դիտորդական առաքելությունը հանդիսանում է հանրային գործառույթ, որի նպատակն է ապահովել ընտրությունների թափանցիկությունը և նպաստել ընտրական գործընթացների պատշաճ իրականացմանը: Վերոնշյալ հանրային իրավական գործառույթի արդյունավետ իրականացումը, ի թիվս այլնի, պայմանավորված է դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու հնարավորությամբ (իրավասուբյեկտությամբ) (թե դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման և թե օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ), հատկապես, երբ դիտորդների իրավունքների խախտման պարագայում անմիջականորեն խախտվում է նաև կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ և Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված տեղեկություններ փնտրելու և ստանալու իրավունքը, քանի որ կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքի իրացումն ուղղակիորեն փոխկապակցված է դիտորդի գործունեության հետ:

Իրենց կանոնադրական նպատակների շրջանակներում⁸¹ կոլեկտիվ կամ համայնքային իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հասարակական կազմակերպությունների հանդեսգալու իրավասությամբ (իրավասուբյեկտությամբ) («actio popularis» հանրային գանգատի ինստիտուտ) օժտված լինելու մասին են խոսում նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշումը, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004) 20 հանձնարարականը, որպիսի դիրքորոշումները կիրառելի են նաև ընտրական իրավունքի ոլորտում խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունքի, իրավասուբյեկտության պարագայում:

⁸¹ Դիտորդական կազմակերպությունների կանոնադրական նպատակներից են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությունը, կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը, ինչպես նաև ընտրությունների և հանրաքվեի օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումը, այլոց իրավունքների, որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությունը:

3.1.2. ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների գերակշիռ մեծամասնությունը դրսևորվել է խախտման վերաբերյալ դիտորդի գնահատականը տեղամասի գրանցամատյանում չարձանագրելու միջոցով, ինչի կապակցությամբ ՏԸՀ-ներն արտահայտում էին ուղղակի անհավանական ենթադրություններ/դիտորոշումներ:

- **Դիտորդների դիտարկումներն ու գնահատականները տեղամասերի գրանցամատյաններում չարձանագրելու վերաբերյալ.**

Կայացված որոշումների մեծ մասով ՏԸՀ-ները գտել են, որ դիմումատու դիտորդներն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման որևէ փաստ դիմումներում չեն վկայակոչել, այլ, դիմումներ ներկայացնելով, նկարագրել են ՀՀ ընտրական օրենսգրքի կանոնակարգումների ենթադրյալ խախտումներ, որոնք չեն առնչվում իրենց՝ որպես դիտորդների պատկանող իրավունքին: Այնինչ ներկայացված դիմում-բողոքներով տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունները (անգործությունը) վիճարկվել են նաև դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով, քանի որ դիտորդների կողմից արձանագրած խախտումները/խախտման վերաբերյալ գնահատականները չեն գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում, ինչը հանգեցրել է դիտորդի՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված սուբյեկտիվ իրավունքների խախտման:

3.1.3. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ ՏԸՀ-ՆԵՐ ԵՎ ԴԻԱՆՑ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Հաշվի առնելով դիմում-բողոքները համապատասխան հանձնաժողով սահմանված ժամկետում մուտքագրելու պահանջը՝ ՔԴՆ-ն քվեարկությանը հաջորդող օրերին (ապրիլի 3-ին և 4-ին) սկսել է դիմում-բողոքներն առաքել ՏԸՀ-ներ: Այդ աշխատանքը, պայմանավորված դիտորդական առաքելության նյութական ռեսուրսի սահմանափակությամբ, կատարվել է հետևյալ կերպ. մեկ անձը կազմակերպել է մի քանի ՏԸՀ-ներ

դիմում-բողոքների առաքում սկսած ապրիլի 3-ից, այնուհետև ապրիլի 4-ից առավոտյան ժամը 9:00-ից մինչև 11:00: Որոշ տեխնիկական խնչընդոտների պատճառով որոշ բողոքներ հնարավոր չի եղել ժամանակին ներկայացնել (ուշացումները կազմել են 30-40 րոպե): Երեք տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից (թիվ 4, 11 /դիմումների մի մասով/, 13) ներկայացված դիմում-բողոքները գրությամբ վերադարձվել են՝ առանց քննարկման՝ սահմանված վերջնաժամկետից 30-40 րոպե ուշ ներկայացված լինելու պատճառաբանությամբ այն դեպքում, երբ ուշացումը պայմանավորված է եղել այլ տարածքային ընտրական հանձնաժողովների կամ նույն հանձնաժողովի կողմից դիմում-բողոքներն ընդունելու հարցում արհեստական խոչընդոտների ստեղծմամբ:

Հանձնաժողովները բողոքներն ընդունելու համար դրանք առաքած անձանցից պահանջել են բողոքին կից փաստաթղթեր և դրանով պայմանավորել բողոքի ընդունելությունը:

Որոշ ՏԸՀ-ներ հրաժարվել են ընդունել բողոքները՝ պատճառաբանելով, որ բողոքները ֆիզիկապես ներկայացնող անձինք պետք է տրամադրեին բողոքաբերի կողմից տրված լիազորագրեր, իսկ որոշ հանձնաժողովներ բողոքն առաքող անձանցից պահանջել են անձնագրեր՝ պատճառաբանելով, որ պետք է գրանցեն նրանց տվյալները, ինչը սակայն նախատեսված չի եղել օրենքով: Միայն տևական բացատրություններից և հիմնավորումներից հետո են դրանք ընդունվել:

Որոշ ՏԸՀ-ներ հրաժարվել են տրամադրել բողոքներն ընդունելու մասին ապացույց՝ ստացական:

Շատ դեպքերում ներկայացված դիմում-բողոքներն անմիջապես ընդունելու փոխարեն հանձնաժողովի ներկայացուցիչներն սկսել են ծանոթանալ դրանց և կից փաստաթղթերի ցանկին, իսկ բողոքի ընդունման պահը ֆիքսել են միայն ստուգումն իրականացնելուց հետո, ինչն էապես ձգձգել է հանձնման –ընդունման գործընթացը:

Վերը թվարկված բոլոր խնդիրներն արհեստաժին են և չնախատեսված օրենքով. հանձնաժողովներն իրավունք չեն ունեցել չընդունելու բողոքները: Բացի դրանից, ՏԸՀ-ները տարբեր պատճառաբանություններով արհեստականորեն ձգձգել են բողոքների ընդունման ժամանակը, ինչի արդյունքում մի քանի դեպքերում բողոքները գրանցվել են որպես սահմանված ժամկետից ուշ ներկայացված:

3.1.4. ՏԸՀ ՆԻՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- Մի շարք դեպքերում ՏԸՀ-ների կողմից դիմում-բողոքների քննության նիստի վերաբերյալ ծանուցումը կատարվել է հեռախոսազանգի միջոցով՝ նույն օրը (07.04.2017թ.) նիստի նշանակման ժամից 1-2 ժամ առաջ⁸²:

Թվարկված բոլոր տարածքային հանձնաժողովներում նիստերը նշանակվել են միևնույն ժամանակ 07.04.2017թ. ժամը 12.00-ին՝ 1-2 ժամ առաջ դիմողներին ծանուցելու միջոցով (բացառությամբ չորս ՏԸՀ-ների)⁸³: Կայանալիք նիստերի վերաբերյալ ծանուցելուց հետո նույն հեռախոսազրույցի ընթացքում դիմողների ներկայացուցչի կողմից միջնորդություններ են ներկայացվել նիստը հետաձգելու վերաբերյալ՝ դիտորդների մասնակցությունը նիստին ապահովելու հիմնավորմամբ, Երևան քաղաքից համապատասխան մարզ դիմողների ներկայացուցչների հասնելու համար նվազագույն ողջամիտ ժամանակ տրամադրելու անհրաժեշտությամբ: Այնուամենայնիվ, միջնորդությունները մերժվել են և նիստերը կայացել են առանց դիմումատուների մասնակցության՝ պատշաճ ծանուցման պահանջների խախտմամբ՝ զրկելով վերջիններին լավաճ լինելու և պատշաճ վարչարարության իրավունքներից: Դիտորդական կազմակերպությունների գնահատմամբ բոլոր այս գործողություններն իրականացվել են դիտորդների և նրանց ներկայացուցիչների մասնակցությունը նիստերին փաստացի բացառելու ուղղակի միտումով: Նշված հետևությունը հաստատվում է նաև նրանով, որ Երևան քաղաքում տեղակայված և դիմում-բողոքներ ստացած թվով 9 տարածքային ընտրական հանձնաժողովներից 7-ի կողմից կայացվելիք նիստերի վերաբերյալ դիտորդական կազմակերպությունները և վերջիններին դիտորդներն առհասարակե՛ն ծանուցվել (նկատի ունենալով, որ դիմումատուների ներկայացուցիչները գտնվում են Երևան քաղաքում, նրանց մասնակցությունը նույն քաղաքում կայանալիք նիստերին, անգամ նիս-

⁸² Թիվ 10, 12, 15, 16, 19, 23, 24, 29, 33 տարածքային ընտրական հանձնաժողովներ:

⁸³ Թիվ 10 ՏԸՀ-ի, որը 06.04.2017թ.-ի նիստը հետաձգելուց հետո՝ 07.04.2017թ. ժամը 10:15-ին կայանալիք նիստի վերաբերյալ ծանուցումը կատարել է նույն օրը ժամը 9:50-ին, ինչպես նաև թիվ 19 ՏԸՀ-ի, որը ժամը 16.00-ին կայանալիք նիստի վերաբերյալ ծանուցել է նույն օրը ժամը 13.00-ին: Թիվ 32 ՏԸՀ (ք. Գյումրի) 07.04.2017թ. ժամը 10.30 նշանակված նիստի վերաբերյալ ծանուցումը կատարվել է 06.04.2017թ. ժամը 22.00-ին, իսկ թիվ 38 ՏԸՀ (ք. Իջևան) ժամը 12.00-ին նշանակված նիստի վերաբերյալ ծանուցումը կատարվել է 06.04.2017թ. ժամը 22.49-ին

տից 1-2 ժամ առաջ ծանուցված լինելու պայմաններում, բացառված չէր լինի): Իսկ թիվ 10 ՏԸՀ կողմից⁸⁴ հետաձգված նիստի վերաբերյալ ծանուցումը կատարվել է նիստից 25 րոպե առաջ:

Երկու ՏԸՀ-ների նախագահների կողմից հաստատվել է այն փաստը, որ նիստերը բոլոր տարածքային հանձնաժողովներում նույն օրը նույն ժամին նշանակվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի թեւադրանքով⁸⁵:

- **Թվով 13 ՏԸՀ-ների կողմից առհասարակ նիստերի և/կամ դիմումների քննության վերաբերյալ որևէ ծանուցում դիմում-բողոքներ ներկայացրած անձանց չի կատարվել⁸⁶, չի կատարվել նաև ծանուցում որոշումների կայացման մասին.**

ՏԸՀ նիստերի մասին պատշաճ ծանուցում չապահովելու վերոնշյալ գործողությունները բացառել են համապատասխան հանձնաժողովներ ներկայացված դիմում-բողոքների քննության, ինչպես նաև որոշումների ընդունման վերաբերյալ որևէ տեղեկություն ստանալու, առավելևս, որոշումը ձեռք բերելու հնարավորությունը:

Որոշ դեպքերում ՏԸՀ-ներում նշանակված նիստերը, որոնց այնուամենայնիվ հասցրել են ներկայանալ ՔԴՆ-ի իրավաբանները, առանց որևէ պատճառաբանության հետաձգվել են կամ հայտարարվել է, որ դրանք չեն կայանալու, իսկ հետագայում այդ նիստերն արդեն կայացել են առանց ծանուցման (օրինակ՝ թիվ 1 ՏԸՀ-ն 08.04.2017թ. նիստը հետաձգել է հանձնաժողովի անդամներից մեկի վատառողջ լինելու պատճառաբանությամբ, իսկ ավելի ուշ ժամին նիստ հրավիրել առանց ծանուցելու, իսկ թիվ 5 ՏԸՀ-ում 07.04.2017թ. ժամը 12:00-ի նիստին ՏԸՀ ժամանած իրավաբանին հաղորդել են, որ նիստը չի կայանալու, սակայն այն հրավիրել են ավելի ուշ ժամի):

- **Ծանուցումների բացակայության և ոչ պատշաճ ու ոչ ժամանակին ծանուցումների, ինչպես նաև ՏԸՀ-ների կողմից ապատեղեկատ-**

⁸⁴ Թիվ 10 ՏԸՀ նիստը կայացել է 06.04.2017թ. դիմողների մասնակցությամբ, այնուհետև ներկայացված միջնորդությունների քննարկման նպատակով հետաձգվել՝ ողջամիտ ժամկետում պատշաճ ծանուցելու պայմանով, որը, սակայն, չի ապահովվել:

⁸⁵ Թիվ 2 և 29 ՏԸՀ ներկայացուցիչները ՔԴՆ-ի իրավաբանների հետ հեռախոսային խոսակցության ընթացքում հայտնել են, որ բոլոր ՏԸՀ-ներում դիմում-բողոքներով նիստերի օրերը և ժամերը համաձայնեցվել են ԿԸՀ հետ: Ապացույցներն առկա են:

⁸⁶ Թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 11, 13, 17, 34, 36, 37 տարածքային ընտրական հանձնաժողովներ

վության պատճառով դիմողների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել մասնակցելու թվով 10 ՏՀՀ-ներում կայացած նիստերին⁸⁷:

3.1.5. ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՈՒՄՆԵՐՈՎ ՏՀՀ ՆԻՍՏԵՐՆ ՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- Միշարք դեպքերում վարչական վարույթի հարուցման մերժումը ՏՀՀ-ների կողմից պատճառաբանվել է առանձին դիտորդների անունից լիազորագրեր ներկայացված չլինելու հանգամանքով:

Այդուհանդերձ, դիմումատուի ներկայացուցչի կողմից լիազորագիր չներկայացնելը պետք է հանգեցնի ոչ թե դիմում-բողոքի հիման վրա վարչական վարույթի հարուցման մերժմանը, այլ այն ողջամիտ ժամկետում ներկայացնելու հնարավորության ընձեռնմանը՝ դիմումին կից փաստաթղթերի ցանկի համալրման շրջանակներում⁸⁸: Այս պատճառաբանությամբ վարչական վարույթների հարուցման մերժումը ՏՀՀ-ների կողմից իրավաչափ չի եղել և հակասել է ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի և ՀՀ Սահմանադրության 61(1)-րդ և 78-րդ հոդվածների պահանջներին:

- Որոշ դեպքերում ՏՀՀ-ների՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու կամ բողոքը մերժելու մասին որոշումների⁸⁹ հիմքում դրվել են բացառապես համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների պարզաբանումները:

⁸⁷ Թիվ 9, 10 /առաջին նիստին/, 11, 14, 21, 26, 28, 31, 20, 22,

⁸⁸ Իրավական հիմքեր՝ ՀՀ Սահմանադրության 61(1)-րդ հոդվածի և իրավունքի սահմանափակման համաչափության սկզբունքը երաշխավորող 78-րդ հոդվածներ, ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության և երկրորդ մաս, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մաս,

⁸⁹ Թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովի 08.04.2017թ.-ի թիվ 8-Ա, 9-Ա, 10-Ա որոշումներ, թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ.-ի թիվ 18-Ա, 19-Ա որոշումներ, թիվ 16 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ.-ի 14-Ա, 15-Ա որոշումներ, թիվ 3 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 7-Ա որոշում, թիվ 20 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ.-ի թիվ 23-Ա և 25-Ա որոշումներ, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ.-ի թիվ 8-Ա, 9-Ա և 11-Ա որոշումներ, թիվ 2 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ.-ի թիվ 10-Ա որոշում, թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 9-Ա որոշում:

Մասնավորապես որոշումներով արձանագրելով, որ գրանցամատյանների ուսումնասիրությամբ պարզվել է, որ գրառումներ կատարելու պահանջ դիտորդների կողմից չի ներկայացվել այն դեպքում, երբ գրանցամատյանի ուսումնասիրությամբ հանձնաժողովը երբևէ չէր կարող փաստել խախտումը արձանագրելու պահանջ չներկայացնելու հանգամանքը: Որոշումներով նաև արձանագրվել է, որ ՏԸՀ-ները բանավոր հարցմամբ 90 համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներից պարզել են, որ դիտորդների կողմից պահանջի դեպքում յուրաքանչյուր անգամ կատարվել են գրառումներ, իսկ գրանցամատյաններում գրառումների բացակայությունը պատճառաբանվել է դիտորդների կողմից նման պահանջ չներկայացնելու հիմքով: Վերոգրյալի հիման վրա ՏԸՀ-ները որոշել են, որ դիմում-բողոքների պահանջներն անհիմն են, իսկ խախտման փաստերը բացակայում են: Այս պարագայում ՏԸՀ-ները դրսևորել են ակնհայտ կողմնակալ մոտեցում՝ դիտորդի կողմից գրանցամատյանում գնահատականը արձանագրելու պահանջի ներկայացված չլինելու հանգամանքը հաստատելով միայն համապատասխան հանձնաժողովի նախագահի բացատրություններով և հրաժարվելով այլ ապացույցներ ձեռք բերելուց, այդ թվում՝ այլ ականատես անձանց՝ վկաներից (վստահված անձ, դիտորդների, ՁԼՄ ներկայացուցիչներ, այցելուներ, հանձնաժողովի այլ անդամներ) բացատրություններ վերցնելու հնարավորությունից: Դրանով խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պահանջները: Այս փաստը վկայում է նաև այն մասին, որ իրականում հանձնաժողովների կողմից իրականացվել է վարչական վարույթ՝ առանց մի շարք դեպքերում վարույթի մասնակիցներին ծանուցելու, ինչի արդյունքում խախտվել են դիմում ներկայացրած անձանց լաված լինելու և պատշաճ վարչարարության իրավունքները: Այսինքն՝ ՏԸՀ-ները որոշել են ներկայացված բողոքներով վարչական վարույթ չհարուցել, այնինչ վերոհիշյալ գործողություններն ինքնին վարչական վարույթի բաղադրիչ են: Ավելին, վերոնշյալ հարցումներն ուղղվել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին, որոնց կողմից նշված խախտումների փաստերի ընդունումն ուղղակիորեն կհանգեցնեք վերջիններիս պատասխանատվությանը:

⁹⁰ Մեկ դեպքում հարցումը հանձնաժողովի նախագահից բացի ուղղվել է նաև նույն հանձնաժողովի քարտուղարին: Եզակի դեպքերում որոշումներով հղում է կատարվել տեղամասային հանձնաժողովների նախագահների գրավոր բացատրություններին:

- **ՏԸՀ-ները որոշել են, որ դիմում-բողոքներով վկայակոչված խախտումները չեն հանդիսանում քվեարկության կարգի խախտում կամ առհասարակ ընտրական օրենսգրքի խախտում .**

Որոշ դեպքերում ՏԸՀ-ների որոշումներով գնահատվել է վկայակոչված խախտման բնույթը և դիմում-բողոքները մերժվել են ներկայացված խախտումները որպես քվեարկության կարգի խախտում կամ առհասարակ ընտրական օրենսգրքի խախտում՝ չդիտարկելու պատճառաբանությամբ⁹¹ արձանագրելով, որ այդպիսի խախտումների վերաբերյալ տեղամասի գրանցամատյանում գրառում չկատարելը չի հանգեցրել դիտորդի իրավունքի խախտման⁹²: Օրինակ, թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովը թիվ 13-Ա որոշմամբ գտել է, որ դիտորդը չունի ընտրական փաստաթղթերը լուսանկարելու իրավունք (խոսքը վերաբերել է տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանին, որի լուսանկարման իրավունքը դիտորդի համար օրենքով սահմանափակված չէ), թեև հենց նույն որոշմամբ հանձնաժողովը արձանագրել է, որ դիտորդն օգտվել է Ընտրական օրենսգրքով սահմանված իր իրավունքից (քանի որ որոշ ժամանակ անց լուսանկարումը թույլատրվել է):

Թեև ՏԸՀ-ները որոշումներ էին կայացնում վարչական վարույթների հարուցումը մերժելու մասին դիտորդների և դիտորդական կազմակերպությունների իրավասությունների պատճառաբանությամբ, միևնույն ժամանակ նրանք երբեմն անդրադառնում էին դիմում-բողոքներով ներկայացված պահանջներին, մասնավորապես՝ ՏԸՀ-ները որոշումներով արձանագրում էին նաև, որ դիմումներով վկայակոչված փաստերը որևէ կերպ չեն կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա՝ որևէ կերպ չպատճառաբանելով, թե ինչպես են հանգել նման հետևության⁹³:

⁹¹ Թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ.-ի թիվ 9-Ա, 13-Ա, 14-Ա որոշումներ, թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ.-ի թիվ 6-Ա, 7-Ա և 9-Ա որոշումներ:

⁹² Թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողովը թիվ 7-Ա (հանձնաժողովը գտել է, որ տեղամասում ընտրություններին մասնակցող կուսակցությունների/դաշինքի հայտնի ներկայացուցիչների լուսանկարների փակցված լինելը չի կարող որակվել որպես քվեարկության կարգի խախտում), 9-Ա (հանձնաժողովը գտել է, որ ընտրակաշառքի բաժանումը չի հանդիսանում ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված քվեարկության կարգի խախտման դեպք, այլ իր մեջ պարունակում է արարք, որին կարող են բնորոշ լինել ՀՀ քրեական օրենսգրքի 1542-րդ հոդվածի հատկանիշները: Ուստի թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողովը այդ դիմումը քննության առարկա չի դարձրել, այլ ուղարկել է ՀՀ դատախազություն) որոշումներով,

⁹³ Օրինակ՝ թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից 06.04.2017թ. կայացված թիվ 8-Ա որոշումը:

- **ՏԸՀ-ները դրսևորում էին ձևական և կամայական մոտեցումներ դիմում-բողոքների ընդունելության և քննության կապակցությամբ.**

ՏԸՀ-ների կողմից անտեսվում էին ներկայացվող միջնորդությունները, կամ դրանք մերժվում էին ՏԸՀ նախագահի միանձնյա որոշմամբ:

Դեպքերից մի քանիսում ՏԸՀ-ները որոշում են կայացրել բողոքները մերժելու մասին, քանի որ դրանք ներկայացնող դիտորդները գրանցված չեն եղել տիր-ի գրանցամատյանում⁹⁴, հետևաբար չէին կարող դիտարկել որևէ խախտում: Այնինչ դիտորդները գտնվել են տեղամասերում և իրականացրել դիտարկում: Դիտորդներին չգրանցելու հանգամանքը կարող է վկայել միայն տեղամասային հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պարտականությունների ոչ պատշաճ կատարման մասին:

- **Թվով 6 դեպքերում ՏԸՀ-ների կողմից կայացվել են որոշումներ, որոնցով վերջիններս միջնորդել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուժը կորցրած ճանաչել թվով 9 տեղամասային հանձնաժողովների նախագահների՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները⁹⁵:**

Ընդ որում, 5 որոշումների դեպքում միջնորդությունները ներկայացվել են այն հիմքով, որ համապատասխան տեղամասային հանձնաժողովների նախագահները չեն ապահովել դիտորդների՝ քվեարկության կարգի խախտման վերաբերյալ գնահատականները տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջի իրավունքը (ընդ որում, դրանց թվում նաև քարոզչական նյութի առկայության վերաբերյալ գրառում կատարելու պահանջը), իսկ մեկ դեպքում՝ միջնորդության հիմքում դրվել է տեղամասային հանձնաժողովի նախապատրաստական նիստին մասնակցելու՝ դիտորդի իրավունքի սահմանափակումը:

⁹⁴ Թիվ 20 ՏԸՀ 20/22 տեղամասի դիտորդ Քրիստինե Սահակի Լազարյան, Թիվ 20 ՏԸՀ 20/17 տեղամասի դիտորդ Անի Հովհաննիսյան, Թիվ 20 ՏԸՀ 20/12 տեղամասի դիտորդ Աննա Վարդանյան:

⁹⁵ Թիվ 17 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 11-Ա որոշում, թիվ 19 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 12-Ա որոշում, թիվ 15 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 19-Ա որոշում, թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 9-Ա որոշում, թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 10-Ա որոշում, թիվ 26 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 10-Ա որոշում:

Հարկ է ընդգծել, որ անհասկանալի է, թե ինչ հիմնավորումներով և ուղենիշներով են առաջնորդվել ՏԸՀ-ները վերոթվարկյալ մի քանի դեպքերում համապատասխան տեղամասային հանձնաժողովների նախագահների որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու միջնորդություններ ներկայացնելիս այն դեպքում, երբ ներկայացված դիմում-բողոքների մեծ մասով տեղամասային հանձնաժողովների գրանցամատյանում դիտորդի գնահատականը գրառելու պահանջի մերժումն անգամ չի գնահատվել որպես դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտում և հենց այս հիմքով էլ մերժվել է այս բողոքներով վարչական վարույթների հարուցումը:

- **Հինգ դեպքում դիմում-բողոքները տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ուղարկվել են իրավապահ մարմիններին, իսկ համապատասխան խախտումները (ընտրակաշառքի բաժանում, ճնշումներ և սպառնալիքներ դիտորդների նկատմամբ) գնահատվել են որպես քվեարկության արդյունքների վրա ազդեցություն չունեցող⁹⁶ :**
- **ՏԸՀ-ների կողմից կայացված որոշումներով որևէ անդրադարձ չի կատարվել համապատասխան հանձնաժողովներին ներկայացված միջնորդություններին:**

Բոլոր դեպքերում, երբ դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել մասնակցելու ՏԸՀ-ների նիստերին, նրանք ներկայացրել են միջնորդություններ՝ 1) ՏԸՀ սպասարկման տարածքում տեղակայված համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները զննելու, 2) ՏԸՀ սպասարկման տարածքում տեղակայված համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեսաձայնագրությունների պատճեններն ստանալու և/կամ զննելու, 3) ապացույցները վարչական վարույթի նյութերին կցելու և զննելու⁹⁷, 4) համապատասխան տեղամասային հանձնաժողովների անդամներին, ինչպես նաև գրանցամատյաններում քվեարկության օրը քվեարկության սենյակում և

⁹⁶ Թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 12-Ա որոշում, թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 9-Ա որոշում, թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 10-Ա որոշում, թիվ 2 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 18-Ա որոշում, թիվ 5 տարածքային ընտրական հանձնաժողովի 8-Ա որոշում:

⁹⁷ Եզակի դեպքերում չի ներկայացվել ապացույցները գործի նյութերին կցելու վերաբերյալ միջնորդություն:

տեղամասային հանձնաժողովների նիստերին ներկա գտնված և գրանցամատյանի համապատասխան էջում գրանցված անձանց որպես վկա հրավիրելու վերաբերյալ: Թեև դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը հնարավոր չի եղել ապահովել թիվ 18 ՏԸՀ-ում, այդուհանդերձ աշխատակցի միջոցով նիստից առաջ հանձնաժողով են մուտքագրվել գրավոր միջնորդություններ⁹⁸ գրանցամատյանների ուսումնասիրության, ապացույցների ձեռքբերման և գննության, ինչպես նաև համապատասխան հանձնաժողովների անդամներին որպես վկա հրավիրելու վերաբերյալ: ՏԸՀ-ների որոշումներում որևէ անդրադարձ չի կատարվել ներկայացված միջնորդություններին, հանձնաժողովները հրաժարվել են այդ միջնորդությունները քննելուց, ինչի հետևանքով խախտվել են վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պահանջները, ինչպես նաև դիմումատուների իրավունքները⁹⁹:

- **ՏԸՀ-ների կողմից որոշումները կայացվել են այնպիսի ժամկետներում, որոնք բացառել են այդ որոշումների դեմ ներկայացված բողոքները ԿԸՀ-ի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը քննելու և արդյունքների ամփոփման շրջանակներում դրանք գնահատելու հնարավորությունը¹⁰⁰:**

Դիմող կազմակերպությունների և դիտորդների կողմից ներկայացված բոլոր դիմում-բողոքների վերաբերյալ որոշումները ՏԸՀ-ների կողմից, մի քանի բացառություններով, կայացվել են (թվագրվել են) **07.04.2017թ.:** Թիվ 1 և 8 ՏԸՀ-ների կողմից դիմում-բողոքների վերաբերյալ որոշումները կայացվել են (թվագրվել են) **08.04.2017թ.:** Թեև այս որոշումները թվագրված են եղել 07.04.2017թ. և 08.04.2017թ., դրանք շատ դեպքերում համապատասխան հանձնաժողովներում տեսանելի

⁹⁸ Գրավոր միջնորդություններ են մուտքագրվել նաև Երևան քաղաքում տեղակայված մի շարք տարածքային հանձնաժողովներ, սակայն, նկատի ունենալով, որ դիմողները ճշող մեծամասնությամբ չեն ծանուցվել Երևան քաղաքի տարածքային հանձնաժողովների նիստերի վերաբերյալ, հայտնի չէ անգամ, թե միջնորդությունների մուտքագրման դրությամբ դիմում-բողոքների քննարկում հանձնաժողովներում իրականացվել է թե ոչ:

⁹⁹ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ, 45-րդ, 75-րդ հոդվածներ, ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունք:

¹⁰⁰ Բացառությամբ չորս որոշումների, որոնք թեև կայացվել են ապրիլի 5-ին և 6-ին, սակայն դրանց մատչելիությունն ապահովվել է ավելի ուշ:

վայրում փակցվել կամ հասանելի են դարձել ավելի ուշ¹⁰¹: Ավելին, որպես կանոն, 08.04.2017թ.-ին և 09.04.2017թ.-ին ՏԸՀ-ների վարչական շենքերը փակ են եղել, քանի որ դրանք եղել են ոչ աշխատանքային օրեր՝ բացառելով այդ օրերին կայացված որոշումների հասանելիությունը:

• Սահմանված վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմում-բողոքներն առանց քննության թողնելու մասով.

Երեք ՏԸՀ-ների կողմից (թիվ 4, 11 /դիմումների մի մասով/, 13) ներկայացված դիմում-բողոքները գրությամբ վերադարձվել են առանց քննարկման՝ սահմանված վերջնաժամկետից 30-40 րոպե ուշ ներկայացված լինելու պատճառաբանությամբ այն դեպքում, երբ ուշացումը պայմանավորված է եղել այլ ՏԸՀ-ների կամ նույն հանձնաժողովի կողմից դիմում-բողոքներն ընդունելու հարցում արհեստական խոչընդոտների ստեղծմամբ:

Նշված դեպքերում որևէ ծանուցում դիմում-բողոքների քննարկման վերաբերյալ հանձնաժողովների կողմից չի կատարվել: Որոշ դիմում-բողոքներ 40 րոպե ավելի ուշ ներկայացնելու հանգամանքն անմիջականորեն պայմանավորված է եղել թիվ 5 տարածքային ընտրական հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողություններով, քանի որ դիմումատուների ներկայացուցիչը բողոք-դիմումներ է ներկայացրել նաև թիվ 5 ՏԸՀ՝ նախքան թիվ 4 տարածքային հանձնաժողով ներկայանալը: Թիվ 5 ՏԸՀ-ում, հանձնաժողովի անհիմն պատճառաբանություններով և ձևական խոչընդոտներով պայմանավորված, բողոք-դիմումներն ընդունվել են շուրջ 40 րոպե ուշացումով: Ապրիլի 5-ին դիմումատուների ներկայացուցչի կողմից թիվ 4 ՏԸՀ է ներկայացվել դիմում-բողոքները ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն՝ մատնանշելով սահմանված վերջնաժամկետից ուշ դիմում-բողոքները ներկայացնելու պատճառները: Միևնույն ժամանակ, նշված միջնորդությամբ արձանագրվել է, որ առկա են թիվ 5 ՏԸՀ-ում դիմում-բողոքներն ընդունելու գործընթացում արհեստականորեն ստեղծված խոչընդոտների վերաբերյալ ապացույցներ, որոնք ներկայացվել են ապրիլի 6-ին: Դրա հետ մեկտեղ, առաջարկվել է դիմումները թիվ 4 և 5 տարածքային հանձնաժողովներ առձեռն ներկայացրած անձին մասնակից դարձնել վարչական վարույթին՝ լրացուցիչ բացատրություններ տալու

¹⁰¹ Թիվ 1, 3, 9, 12, 15, 16, 19, 24, 29, 33, 34, 35 և 37 տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումներ:

նպատակով: Ս.թ. ապրիլի 6-ին թիվ 4 ՏԸՀ առձեռն ներկայացվել են համապատասխան ապացույցները (3 էլեկտրոնային կրիչով): Հիշյալ միջնորդությունը թիվ 4 Տարածքային հանձնաժողովի կողմից չի քննարկվել, և դիմում-բողոքները վերադարձվել են 05.04.2017թ. գրությամբ (դիմումատուների կողմից ստացվել 10.04.2017թ.-ին՝ փոստային առաքման միջոցով¹⁰²): Դիմում-բողոքներն առանց քննարկման վերադարձնելու հիմքում դրվել է ՀՀ ընտրական օրենսգրքի այն դրույթը, որի համաձայն՝ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ պատճառի նշմամբ: Արձանագրվել է նաև, որ ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված է «բաց թողնված ժամկետը հարգելի համարելու» ինստիտուտ: Մինչդեռ, ժամկետի վերականգնման հնարավորությունն ակնհայտորեն առկա է եղել այնքանով, որքանով ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթների նկատմամբ կիրառելի են նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Նույնանման իրավիճակ արձանագրվել է թիվ 13 ՏԸՀ-ի դեպքում: Այնուամենայնիվ, այլ դեպքերում նույն ընտրական օրենսգրքի նորմերը կիրառվել են տրամագծորեն հակառակ մեկնաբանությամբ: Այսպես, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 09.04.2017թ. թիվ 162-Ա որոշմամբ արձանագրվել է, որ չնայած այն հանգամանքին, որ այլ անձի փոխարեն քվեարկության վերաբերյալ դիմումը ներկայացվել է սահմանված ժամկետների խախտումով, այդուհանդերձ դիմումը քննարկվել է թիվ 33 ՏԸՀ կողմից, կայացվել է որոշում, որով փաստվել է, որ թիվ 33/39 ընտրական տեղամասի ընտրողների ցուցակի համապատասխան տողում նշված ընտրողի փոխարեն տեղի է ունեցել քվեարկություն այլ անձի կողմից: Երկակի չափանիշների կիրառման մասին է վկայում նաև այն դեպքը, երբ ՀՅԴ կուսակցության կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել դիմում, որը վերահասցեագրվել է թիվ 17 ՏԸՀ (ԿԸՀ 09.04.2017թ. թիվ 162-Ա որոշում) այն դեպքում, երբ նույն՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ իրավասու ընտրական հանձնաժողովը ներկայացված դիմում-

¹⁰² Թեև թիվ 4 տարածքային ընտրական հանձնաժողովի գրությունը թվագրված է 05.04.2017թ., այդուհանդերձ, գրությամբ վերադարձված փաստաթղթերում առկա է եղել դիմումատուների կողմից 06.04.2017թ. ապացույցները ներկայացնելու մասին գրությունը (գրության վրա առկա է հանձնաժողովի կողմից այն մուտքագրելու օրվա և ժամի մասին նշում), ինչից ակնհայտ է, որ թիվ 4 Տարածքային հանձնաժողովի կողմից դիմում-բողոքները վերադարձնելու մասին գրությունն իրականում կարող էր կազմված լինել միայն 06.04.2017թ.-ից հետո կամ նույն օրը, բայց ոչ՝ դրանից շուտ: Հետևաբար, գրությունը թվագրվել է հետին թվով:

բողոքները ենթակա են առանց քննարկման վերադարձման դիմողներին: Թիվ 11 ՏԸՀ դեպքում վերադարձվել է դիմումների մի մասը: Համապատասխան դիմումներն ստորագրված չեն եղել, և հանձնաժողովն առաջարկել է ապահովել դրանց ստորագրումը՝ դիմումներն ընդունելու ընթացքում այս թերությունն արձանագրելուց հետո: Աշխատակիցը չստորագրված դիմումները ներկայացրել է դիտորդական կազմակերպության գրասենյակ, սակայն ստորագրելուց հետո կարճ ժամանակ անց դիմում-բողոքները կրկին մուտքագրելուց հետո¹⁰³ պարզվել է, որ տարածքային հանձնաժողովը գնահատել է դրանք ժամկետանց:

3.1.6. ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽԱԽՏՄԱՆ ՓԱՍՏԵՐԸ (ՓԱՍՏԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ) ՈՐՊԵՏ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍՈՎ

Այն դեպքերում, երբ ՏԸՀ-ների կողմից կայացվել են դիտորդական կազմակերպությունների և դիտորդների դիմումների հիման վրա վարչական վարույթների հարուցումը մերժելու մասին որոշումներ, հանձնաժողովների մեծ մասը զուգահեռաբար կայացրել է նաև առանձին որոշումներ՝ սեփական նախաձեռնությամբ խախտման փաստերը (փաստերի մի մասը) որպես հաղորդում քննելու մասին¹⁰⁴: Հիշյալ որոշումներով վկայակոչված վարույթներին որևէ անգամ մասնակից չեն դարձվել դիմող կազմակերպությունները և դիտորդները: Նրանք նաև չեն ծանուցվել այդ որոշումների մասին: Միաժամանակ, համապատասխան խախտումների վերաբերյալ որևէ այլ աղբյուրից (ականատես դարձած դիտորդներ, ՁԼՄ ներկայացուցիչներ, վստահված անձինք, այցելուներ, հանձնաժողովների այլ անդամներ, ընտրողներ) ՏԸՀ-ները տեղեկատվություն չեն հայցել և վարույթներին մասնակից չեն դարձվել: ՏԸՀ-ների կողմից չեն ուսումնասիրվել նաև այդ տեղամասերում տեղադրված տեսախցիկների միջոցով կատարված տեսագրությունները:

¹⁰³ Արարատի մարզում գտնվող թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովը դիմումները վերստին ներկայացվել են 1 ժամ անց (ինչն անհրաժեշտ է եղել դիմումների մի մասը Երևան ետ բերելու, ստորագրումն ապահովելու և կրկին Արարատի մարզ ներկայացնելու համար):

¹⁰⁴ Ապրիլի 5-ին որոշում է կայացրել թիվ 37 ՏԸՀ-ն:
Ապրիլի 6-ին որոշումներ է կայացրել թիվ 13 ՏԸՀ-ն:
Ապրիլի 7-ին որոշումներ են կայացրել թիվ 3, 5, 7, 9, 10, 11, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 31, 33, 35, 36, 38 ՏԸՀ-ները:
Ապրիլի 8-ին որոշումներ են կայացրել թիվ 1, 2, 8, 14 ՏԸՀ-ները:

Սեփական նախաձեռնությամբ վարույթների հարուցումը հետապնդել է ձևական նպատակ՝ պարզապես ցուցադրելու, որ բոլոր վկայակոչված փաստերն ըստ էության քննարկվել են: Հիշյալ վարույթների և քննության ձևականության ու անարդյունավետության լավագույն վկայությունը հենց այդ որոշումներն են: Կայացված որոշումների ուսումնասիրությունը¹⁰⁵ վկայում է այն մասին, որ դրանք կայացվել են միայն վկայակոչված խախտումների՝ քվեարկության արդյունքների վրա ազդեցության բացակայության փաստն արձանագրելու նպատակով և եղել են ինքնանպատակ: Այդ որոշումները չեն համապատասխանել ոչ հիմնավորվածության, ոչ պատճառաբանվածության նվազագույն չափանիշներին: Բոլոր այս որոշումներով արձանագրվել է, որ ուսումնասիրված փաստական հանգամանքները չեն ազդել քվեարկության արդյունքների վրա: Մինևույն ժամանակ, ներկայացված ընտրախախտումների փաստերը ՏԸՀ-ները հեղքել են համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների բանավոր պատասխաններով, որոնք էլ դրվել են այս որոշումների հիմքում:

3.1.7. ՏԸՀ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍՈՎ

Դիմողների համար ՏԸՀ-ների որոշումների բողոքարկման իրավունքի իրացման տեսանկյունից լուրջ խոչընդոտ է հանդիսացել ինչպես ՏԸՀ-ների կողմից նիստերի նշանակման մասին պատշաճ ծանուցումների բացակայությունը, այնպես էլ որոշումների ընդունման մասին ծանուցման բացակայությունը, համապատասխան որոշումները ձեռք բերելու և հրապարակման պահից 3-օրյա ժամկետում բողոքարկելու¹⁰⁶ առումով:

ՏԸՀ-ների որոշումների ընդունման և շենքում փակցնելու պահը բացարձակ անկանխատեսելի է եղել դիմումատու կազմակերպությունների և դիտորդների համար: Նույնիսկ այն դեպքերում, երբ դիմողները ծանուցված են եղել նշանակված նիստերի մասին, չի երաշխավորվել այդ նիստերի ընթացքում որոշման ընդունված լինելու¹⁰⁷, ինչպես նաև որո-

¹⁰⁵ Որոշումները սովորաբար փակցվել են Հանձնաժողովների շենքերում

¹⁰⁶ ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

¹⁰⁷ Մի շարք դեպքերում նիստերը հետաձգվել են և որոշումները կայացվել են այլ նիստերով:

շումը փաստաթղթային տեսքով կազմելու և հանձնաժողովում փակցնելու պահի վերաբերյալ¹⁰⁸ (այսինքն, առնվազն հանձնաժողովի շենքում մատչելի դառնալու ժամանակի մասին) իմացությունը: Անհրաժեշտ է արձանագրել, որ տարածքային ընտրական հանձնաժողովների շենքերում որոշումը փակցնելու միջոցով մատչելիության ապահովման՝ օրենսդրի կողմից ընտրված եղանակը, բողոքարկման խիստ սահմանափակ ժամկետների հաշվառմամբ, չի հանդիսացել իրավաչափ նպատակ հետապնդող և համաչափ միջոց այնդեպքում, երբ այս որոշումները կարող են ընդունվելուց և կազմվելուց հետո տեղադրվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում (ինչպես օրինակ, քվեարկության արդյունքներին առնչվող ՏԸՀ որոշումները): Սահմանված իրավակարգավորումը ենթադրում է, որ դիմում ներկայացրած անձն օրացուցային օրերով հաշվարկվող անիրատեսականորեն սեղմ բողոքարկման ժամկետը բաց չթողնելու նպատակով պետք է հերթապահի (նաև գիշերի) որոշման ընդունումից հետո (եթե որոշումն ընդունվի նշանակված նիստի ընթացքում) առնվազն 24 ժամ համապատասխան ՏԸՀ-ում՝ որոշումը ձեռք բերելու և օրենքով սահմանված 3-օրյա ժամկետից արդեն պակաս ժամանակահատվածում այն բողոքարկելու հնարավորությունը չկորցնելու համար: Ակնհայտ է, որ նախատեսված իրավակարգավորումները ոչ միայն չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներից բխող իրավական որոշակիության սկզբունքին, այլև Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի, 48-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածով (համակցված 13-րդ հոդվածով) սահմանված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի չափանիշներին: Ավելին, ապրիլի 7-ին հաջորդող երկու օրերը եղել են ոչ աշխատանքային օրեր, ուստի այն վարչական շենքերը, որտեղ տեղակայված են եղել տարածքային ընտրական հանձնաժողովները, որպես կանոն, փակ են եղել, իսկ որոշումներն՝ անմատչելի: Ինչ վերաբերում է որոշումը դիմումատուներին ուղարկելու պարտականությանը, ապա ընտրական հանձնաժողովը վարչական ակտն ընդունե-

¹⁰⁸ ՏԸՀ ընդունած վարչական ակտը փակցվում է տարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում, ակտն ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում: 25.05.2016թ. ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքով ՏԸՀ որոշումը հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում փակցնելուց հետո վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին կարճ հաղորդագրություն ուղարկելու պարտականություն **այլևս չի նախատեսվում**՝ ի տարբերություն 26.05.2011թ. ՀՀ ընտրական օրենսգրքի:

լուց հետո եռօրյա ժամկետում, ուղարկում է այն վարչական վարույթի մասնակիցներին՝ առաքման անդորրագիրը կցելով գործին: Այսինքն, որոշումն անգամ ուղարկելու պահի դրությամբ բողոքարկման ժամկետը կարող է լրացած լինել, ուստի այս կարգավորումը ևս չի երաշխավորում բողոք բերելու իրավունքի իրացումը:

3.1.8. ԿԸՀ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԸԸՀ ԵՎ ՏԸՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

ՏԸՀ-ՆԵՐԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Բացի նրանից, որ ՏԸՀ որոշումների հիմնավորումները գրեթե տառի ճշտությամբ նույնական են (ինչն անհնար է եթե այդ որոշումները մեկ կենտրոնից չեն կայացվում), մեկ դեպքում (թիվ 30 ՏԸՀ կողմից ընդունված երկու որոշումներով) արձանագրվել է տարածքային հանձնաժողովների համար նախապես մշակված՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումների ձևանմուշի առկայության փաստը, որն ամենայն հավանականությամբ նախատեսված է եղել բոլոր ՏԸՀ-ների համար (քանի որ մի քանի տեղերում հաստատված որոշումների մեջ տարածքային հանձնաժողովի համարի և դիմողի անուն ազգանվան փոխարեն նախատեսված են եղել բազմակետեր¹⁰⁹: Բացի դրանից, սահմանվել են նաև հիմնավորումներ՝ դիմումատու հասարակական կազմակերպության առկայության վերապահումով, ինչը նույնությամբ պահպանվել է հաստատված որոշման տեքստում): Նշված փաստերը վկայում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համակարգմամբ դիտորդների և նրանց ներկայացուցիչների՝ դիմում-բողոքների քննությանը մասնակցելու արհեստական խոչընդոտների ստեղծման, խախտման փաստերի իրական քննություն և դրանց ազդեցության գնահատում իրականացնելու նպատակի, ինչպես նաև տարածքային ընտրական հանձնաժողովների անկախության բացակայության մասին:

ՏԸՀ-ներում դիմում-բողոքների քննությունը կրել է զուտ ձևական բնույթ, հանձնաժողովներն արդեն իսկ ունեցել են նախապատրաստված որոշումների նախագծեր, որոնք պարզապես ընթերցվել են նիստերի ընթացքում և առանց որևէ փոփոխության ընդունվել: Որևէ գոր-

¹⁰⁹ Թիվ 30 ՏԸՀ կողմից 05.04.2017թ. կայացված թիվ 5-Ա և 6-Ա որոշումները:

ծողություն չի ձեռնարկվել դիմում-բողոքներով մատնանշված փաստական հանգամանքներն ըստ էության քննելու ուղղությամբ: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ներկայացված միջնորդությունները վկաներ հրավիրելու, գրանցամատյանները գննելու, տեղամասերի տեսագրությունները ուսումնասիրելու, ինչպես նաև ներկայացված ապացույցները գննելու վերաբերյալ¹¹⁰ մերժվել են հանձնաժողովների կողմից և/կամ չեն ընդունվել՝ որակվելով որպես նոր բողոքներ: Միջնորդությունների վերաբերյալ անդրադարձ չի կատարվել նաև կայացված որոշումներում ենթադրաբար այն պատճառով, որ որոշումների նախագծերը նախապես պատրաստ են եղել և փոփոխության այլևս չեն ենթարկվել: Թեև որոշ նիստերին հնարավոր է եղել ապահովել նաև դիտորդների մասնակցությունը, որոնք բացատրություններ են ներկայացրել իրենց կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ, այնուամենայնիվ դրանք որևէ կերպ չեն արտացոլվել անգամ հանձնաժողովների որոշումներում:

3.1.9. ԿԸԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մինչև 09.04.2017թ. ՀՀ ԿԸԸ-ի կողմից Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների ամփոփման նիստը դիտորդական կազմակերպություններին հաջողվել է ձեռք բերել ՏԸՀ որոշումների մի մասը և 67 բողոք ներկայացնել 18 ՏԸՀ-ների (2, 5, 9, 10, 11, 14, 18, 20, 21, 22, 23, 25, 26, 27, 28, 30, 31, 32, 36) կողմից կայացված որոշումների¹¹¹ դեմ (բողոքների մի մասը ներկայացվել է ապրիլի 8-ին, իսկ մյուսը՝ ապրիլի 9-ին):

Մի շարք ՏԸՀ-ների որոշումներ հնարավոր չի եղել ձեռք բերել ՏԸՀ նիստում հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում, և դրանք բողոքարկվել են ԿԸԸ բողոքաբերների համար հասանելի դառնալուց հետո եռօրյա ժամկետում՝ հաշվի առնելով այն, որ այդ ուշացումները տեղի են ունեցել բողոքաբերների կամքից անկախ պատճառներով, իսկ որոշումներն ուշ ստանալով պայմանավորված դրանցով թույլ տրված խախտումների մասին ենթադրությունների և վերացական դատողությունների հիման վրա բողոքներ բերվել չէին կարող: Այնուամենայնիվ, ԿԸԸ-ի

¹¹⁰ Մի դեպքում միայն իրականացվել է ներկայացված ապացույցի ոչ լիարժեք գննություն:

¹¹¹ Տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացված դիմում-բողոքները միավորվել են և որոշումները կայացվել են միանգամից մի շարք դիմում-բողոքների վերաբերյալ:

կողմից վարույթ չեն ընդունվել և համապատասխան գրություններով վերադարձվել են թիվ 1, 3, 9, 12, 15, 16, 19, 24, 29, 33, 34, 35, 37, 38 ՏԸՀ-ների որոշումների դեմ բերված դիմում-բողոքները¹¹²: ԿԸՀ-ն պատճառաբանել է վերադարձը ժամկետից ուշ ներկայացնելու հանգամանքով: Այնուամենայնիվ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրաժարվել է ընդունել ներկայացված դիմում-բողոքները դրանք ոչ աշխատանքային օր ներկայացնելու պատճառաբանությամբ (չնայած նույն օրը հանձնաժողովի կողմից ամփոփվել են ընտրությունների արդյունքները), ուստի դիմում-բողոքները վերստին ներկայացվել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 10.04.2017թ: Դրան հաջորդող օրերին ՏԸՀ-ների որոշումները հասանելի դառնալուն համընթաց Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել **ևս 42 բողոք**: ԿԸՀ ներկայացված դիմում-բողոքները քննվել են երեք նիստերի ընթացքում՝ մայիսի 2-ին, 4-ին և 6-ին: 2017թ. մայիսի 2-ին ժամը 10.09-ին հեռախոսակապով դիմումատուների ներկայացուցիչները ծանուցվել են նույն օրը ժամը 18.00-ին ՀՀ ԿԸՀ ներկայացված թվով 12 տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննության վերաբերյալ: Դիմողների ներկայացուցիչների (որոնք հանդիսանում են նաև մյուս բոլոր տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքներով դիտորդների և դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչները) կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել միջնորդություն նիստը հետաձգելու

¹¹² ԿԸՀ դիմում-բողոքների ներկայացման ամսաթվերը՝ ըստ տեղամասերի՝

թիվ 1 - 18.04.2017

թիվ 3 - 11.04.2017 (ի լրումն նյութեր են ներկայացվել 12.04.2017)

թիվ 9 - 10.04.2017 (ներկայացվել է տեղամասային հանձնաժողովի անգործության դեմ, ԿԸՀ-ն վերադարձի որոշման մեջ գտել է, որ անհրաժեշտ էր այս բողոքը ներկայացնել ՏԸՀ, այլ ոչ թե ԿԸՀ)

թիվ 12 - 14.04.2017

թիվ 15 - 13.04.2017

թիվ 16 - 18.04.2017

թիվ 19 - 18.04.2017

թիվ 24 - 13.04.2017

թիվ 29 - 14.04.2017

թիվ 33 - 14.04.2017

թիվ 34 - 18.04.2017

թիվ 35 - 14.04.2017

թիվ 37 - 12.04.2017

թիվ 38 - 15.05.2017 (այս որոշումը հասանելի է դարձել միայն 12.05.2017թ. , երբ ՏԸՀ-ն ի պատասխան մեր գրավոր պահանջի ուղարկել է որոշումները փոստով)

վերաբերյալ՝ հաշվի առնելով ծանուցման ժամկետի անողջամիտ լինելու հանգամանքը, ինչպես նաև դիմում-բողոքների քննարկմանն անմիջականորեն դիտորդների մասնակցությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով դիմումներ ներկայացրած դիտորդների թիվը, ինչպես նաև այն հանգամանքը, որ շատ դիտորդներ բնակվում են ՀՀ տարբեր մարզերում: Ներկայացված միջնորդությունը մերժվել է ԿԸՀ-ի կողմից ժամը 18.00-ին նշանակված նիստի ընթացքում՝ որևէ փաստական հանգամանքի հաստատման անհրաժեշտության բացակայության պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԸՀ նիստերի ընթացքում դիմողների ներկայացուցիչների կողմից ներկայացվել են հետևյալ միջնորդությունները. 1. տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքում տեղակայված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները զննելու, 2. համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովներում կատարված տեսաձայնագրությունների պատճեններն ստանալու և/կամ զննելու, 3. տեղամասային հանձնաժողովների անդամներին, գրանցամատյաններում քվեարկության օրը քվեարկության սենյակում և տեղամասային հանձնաժողովների նիստերին ներկա գտնված և գրանցամատյանի համապատասխան էջում գրանցված անձանց՝ որպես վկա հրավիրելու, 4. ներկայացված¹¹³ էլեկտրոնային կրիչի վրա տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքում ընդգրկված տեղամասերում դիտորդների կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ ապացույցները գործին կցելու և հանձնաժողովի նիստի ընթացքում զննելու վերաբերյալ: Բոլոր այս միջնորդությունները մերժվել են, ըստ էության, առանց որևէ պատճառաբանության: Ավելին, ամեն տարածքային հանձնաժողովի որոշումների դեմ ներկայացված բողոքի քննությունն սկսելուն պես ներկայացված միջնորդությունները մերժվում էին ի սկզբանե մինչև տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված բոլոր դիմում-բողոքների քննությունը:

Բողոքների քննությունը ԿԸՀ-ում կրել է ձևական բնույթ, ավելի ստույգ գործընթացն իրենից չի ներկայացրել բողոքի քննություն, նիստերի ընթացքում հանձնաժողովի կողմից ընթերցվել են որոշումների նախագծերը և միաձայն ընդունվել, ամբողջությամբ անտեսվել են նիստերի ընթացքում դի-

¹¹³ Տարածքային ընտրական հանձնաժողովներին վերաբերող ապացույցները ներկայացվել են միասնական՝ երկու էլեկտրոնային կրիչների վրա:

տորդների ներկայացուցիչների կողմից արված հայտարարությունները և տրված պարզաբանումները: Եզակի դեպքերում ԿԸՀ-ի կողմից անվավեր են ճանաչվել տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների առանձին մասեր¹¹⁴ (ԿԸՀ որոշումները կայացվել են թիվ 8 ՏԸՀ-ի մասով՝ մայիսի 6-ին, թիվ 22 ՏԸՀ-ի մասով՝ մայիսի 4-ին, թիվ 7 ՏԸՀ-ի մասով՝ մայիսի 6-ին), սակայն դրանք հետագայում ՏԸՀ-ների կողմից մերժվել են նույնաբովանդակ պատճառաբանություններով, իսկ դրանց կապակցությամբ բողոքներն իրենց հերթին մերժվել են ԿԸՀ կողմից: Մի դեպքում ԿԸՀ-ի կողմից նիստում ընդունված որոշումը եզրափակիչ մասով տարբերվել է հետագայում կայքում հրապարակված որոշումից¹¹⁵. Մասնավորապես՝ նիստի ընթացքում որոշվել է անվավեր ճանաչել ի տորդներից մեկի դիմումով՝ ՏԸՀ-ի որոշումը, սակայն հրապարակված որոշման ուսումնասիրությունից պարզվել է, որ տվյալ դիտորդի դիմում-բողոքի հիման վրա վարչական վարույթի հարուցումը մերժվել է: Ներկայացված դիմում-բողոքների ճշող մեծամասնությունը մերժվել է նույնաբովանդակ պատճառաբանություններով, որոնք դրվել էին ՏԸՀ-ների որոշումների հիմքում: Դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտման փաստերի բացակայության վերաբերյալ ԿԸՀ-ի կողմից կատարվել են որոշակի հստակեցումներ: Մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված դիմում-բողոքներում մատնանշված «Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում» ձևակերպումը հարմարավետորեն և յուրովի մեկնաբանվել է՝ գնահատելով այն որպես դիտորդի կողմից իր գնահատականը գրանցելու պահանջի բացակայության մասին վկայող արտահայտություն: Հենց նշված ոչ իրավաչափ մեկնաբանությունն էլ կամայականորեն դրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ դիմում-բողոքները մերժելու որոշումների հիմքում: Մինչդեռ, ՏԸՀ-ներ ներկայացված դիմում-բողոքներում առկա «*Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում*» արտահայտությունը նշանակում է հենց այն, որ գնահատականը արձանագրելու պահանջը յուրաքանչյուր դեպքում դիտորդի կողմից ներկայացվել է համա-

¹¹⁴ 2017թ. մայիսի 4-ին թիվ 208-Ա որոշմամբ ԿԸՀ-ն մասով անվավեր է ճանաչել թիվ 22 ՏԸՀ թիվ 7-Ա որոշումը, իսկ 06.05.2017թ. կայացրած թիվ 224-Ա, 218-Ա, 219-Ա, 220-Ա համապատասխանաբար մասով անվավեր է ճանաչել թիվ 7 ՏԸՀ 11-Ա, թիվ 8 ՏԸՀ 8-Ա, 9-Ա, 10-Ա որոշումները: Համաձայն ԿԸՀ դիրքորոշման բոլոր այս որոշումները անվավեր են ճանաչվել այն պատճառաբանությամբ, որ ՏԸՀ-ները խախտել են ՀՀ ԸՕ 47-րդ հոդվածը և համապատասխան մասով պետք է քննեին գործը:

¹¹⁵ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 02.05.2017թ. թիվ 200-Ա որոշում

պատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, սակայն գնահատականը չի գրանցվել դրա պահանջը ներկայացնելուց հետո, հակառակ դեպքում դրա չգրանցման հանգամանքը պարզապես չէր շեշտվի, չէր դիտարկվի որպես դիտորդի իրավունքի խախտում և չէր վիճարկվի: Ավելին, մի շարք դեպքերում ՏԸՀ-ների կողմից նշված արտահայտությունը մեկնաբանվել է հակառակ կերպ՝ դիտարկելով այն որպես դիտորդի կողմից խախտման/խախտման գնահատականի գրանցման պահանջ ներկայացնելու փաստի և իրավունքի խախտման մասին վկայող հանգամանք: Իսկ երկու դեպքերում ՏԸՀ ներկայացված դիմում-բողոքներում առկա վերոգրյալ նույնական ձևակերպումը հիմք է հանդիսացել երկու տեղամասային ընտրական հանձնաժողովների (26/38, 26/42) նախագահների ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու վկայականները ուժը կորցրած ճանաչելու միջնորդությամբ ԿԸՀ դիմելու համար: Ընդ որում, որոշման (թիվ 26 ՏԸՀ 07.04.2017թ. թիվ 26-Ա որոշում) հիմքում դրվել է բացառապես դիմում-բողոքներում նշված նույնական ձևակերպմամբ արտահայտությունը և գրանցամատյանում համապատասխան գրառումների բացակայությունը: Ավելին, թիվ 7 ՏԸՀ-ի համար դիմում-բողոքներում առկա նույնական ձևակերպումը հիմք է հանդիսացել համապատասխան տեղամասային հանձնաժողովների նախագահներին՝ դիտորդների իրավունքների խախտման փաստը ստուգելու նպատակով հարցումներ կատարելու համար: Ավելին՝ երբ առաջին անգամ դիմում-բողոքի մերժման վերոգրյալ պատճառաբանությունը հնչեցվել է ս.թ. մայիսի 2-ին ՀՀ ԿԸՀ նիստի ընթացքում¹¹⁶, դիմողների լիազորված ներկայացուցիչները նիստերի ընթացքում իրենց վստահորդների անունից հայտարարություններով են հանդես եկել առ այն, որ դիտորդները իրենց կողմից դիտարկված բոլոր խախտումների կապակցությամբ տեղամասային հանձնաժողովների նախագահներին ներկայացրել են դրանք գրանցամատյանում արձանագրելու պահանջ, որը, սակայն, չի կատարվել: Այնուամենայնիվ, այս հայտարարությունները ևս ուղղակիորեն անտեսվել են ԿԸՀ կողմից և որևէ անդրադարձ նշված հայտարարություններին որոշումների մեջ չի կատարվել: Ավելին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հակասելով ինքն իրեն, ցուցաբերել է ակնհայտ երկակի մոտեցում, մի դեպքում՝ «խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում» արտահայտությունը մեկնաբանելով որպես դիտորդի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամա-

¹¹⁶ Բացառությամբ թիվ 9 ՏԸՀ-ի, որի նիստի ընթացքում դիտորդների ներկայացուցիչ կողմից տրվել են անհրաժեշտ պարզաբանումներ, որոնք, սակայն, որևէ կերպ հաշվի չեն առնվել կայացված որոշումներով:

տյանում գրառում կատարելու պահանջ ներկայացնելու իրավունքի իրացման արդյունք և հետևանք, իսկ այն դեպքերում երբ դիտորդի գնահատականը գրանցված չի եղել գրանցամատյանում, ենթադրություն է կատարել այդպիսի պահանջ չներկայացնելու մասին:

ԿԸՀ-ի կողմից մայիսի 2-ին, 4-ին և 6-ին կայացված որոշումները հրապարակվել են (հասանելի են դարձել) հանձնաժողովի պաշտոնական կայքում ընդունումից հետո երկրորդ օրն այն դեպքում, երբ օրենքով նախատեսված է որոշումների բողոքարկման եռօրյա ժամկետ, որը հաշվարկվում է ԿԸՀ-ի նիստում որոշումների հրապարակման պահից: Թեև դրանով պայմանավորված՝ ավելի են կրճատվել որոշումների բողոքարկման սեղմ ժամկետները, դիտորդական կազմակերպությունների և դիտորդների ներկայացուցիչների կողմից ԿԸՀ որոշումները բողոքարկվել են ՀՀ վարչական դատարան: Ներկայացվել է ընդհանուր առմամբ 96 հայց:

3.1.10. ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՅԵՐԻ ՄԱՍՈՎ

ՔՂՆ-ի կողմից ներկայացվել է թվով 96 հայցադիմում, որոնցից 65-ը վարչական դատարանի կողմից ընդունվել են վարույթ, 28 գործով ներկայացվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից 13-ը բավարարվել են: Բողոքներից 5-ը բերվել է պետական տուրքի հաշվարկման որոշումների դեմ: Երեք վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է և ներկայացվել են վճռաբեկ բողոքներ: Միևնույն ժամանակ, ՀՀ վերաքննիչ դատարանը բավարարել է թվով 20 վերաքննիչ բողոք:

3.1.11. «ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵՉ» ԱԿՈՒՄԲԻ»՝ ՈՐՊԵՍ ԶԼՄ-Ի՝ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունը դիմում էր ներկայացրել ԿԸՀ՝ խնդրելով սույն թվականի ապրիլի 2-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունները լուսաբանելու նպատակով որպես ԶԼՄ հավատարմագրել «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության կողմից հիմնադրված

երկու լրատվամիջոցների՝ «Ասպարեզ» օրաթերթի (գործում է 2011թ.) և asparez.am լրատվական կայքի (գործում է 2004թ.) ներկայացուցիչներին՝ ընդամենը 1000 (հազար) հոգի: ԿԸՀ-ն 11.03.2017թ. թիվ 90-Ա որոշմամբ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության դիմումը մերժվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունները:

ՔՐՆ-ի իրավաբանական թիմը, համարելով, որ հիշյալ սահմանափակումները չեն բխում ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 42-րդ և 78-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներից, Կոնվենցիայի 10-րդ հոդվածից, ինչպես նաև իրավունքի սահմանափակման համաչափության, որոշակիության և հիմնական իրավունքների էության անխախտելիության սկզբունքներից, ԿԸՀ-ի որոշման դեմ բողոքով դիմել էր վարչական դատարան (վարչական գործ թիվ ՎԴ/2506/05/17): Սակայն 29.03.2017թ. կայացված վճռով հայցադիմումը մերժվել էր: Այնուհետև ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով սահմանված խոսքի ազատության իրավունքի պաշտպանության նպատակով դիմում էր ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան և Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

26.12.2017թ. ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է կայացրել «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ պարբերության 2-րդ նախադասության մեջ ամրագրված *միայն մեկ զանգվածային լրատվության միջոց և այդ զանգվածային լրատվության միջոցի ոչ ավելի, քան 50 ներկայացուցիչների* դրույթը ճանաչելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի, 51-րդ հոդվածի 2-րդ մասի, 75, 78, 79, 80 հոդվածների և 81-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

**3.1.12. ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ)
ԳՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ**

«Իրավունքի Եվրոպա միավորում» ԻՀԿ-ի հարցմանը՝ ՀՀ գլխավոր դատախազության 11.09.2017թ. պատասխանի համաձայն 02.04.2017թ.

Ազգային ժողովի ընտրությունների սպասարկման նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում ձևավորված աշխատանքային խումբը ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում ստուգման առարկա է դարձրել 923 ընտրական իրավախախտումների վերաբերյալ ՋԼՄ-ների հրապարակումներ և ՀՀ ոստիկանության տա-րածքային բաժիններում ստացված նույն բնույթի ահազանգեր:

Նշված 923 հաղորդումներից 68-ը միացվել են նույն դեպքի վերաբերյալ մամուլի հրապարակումների եւ ստացված ահազանգերի հիման վրա նախապատրաստվող նյութերին եւ ընթացքը լուծվել է համատեղ: Մնացած 855 հաղորդումներից 835-ով քրեական գործի հարուցումը մերժվել է: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների դեմ բերվել է 7 բողոք, որոնք մերժվել են վերադաս դատախազի կողմից: Երկու դեպքում բողոք է բերվել դարարաններ:

20 դեպքերով հարուցվել է քրեական գործ¹¹⁷, որոնցից՝ 1-ը նախաքննության ընթացքում միացվել է մեկ այլ քրեական գործի, 6-ով քրեական գործի վարույթը կարճվել է: Մեկ քրեական գործ մեկ անձի վերաբերյալ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան, 12 քրեական գործ 13 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

3.1.13. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍՈՎ

Դիտորդական կազմակերպությունների, դիտորդների և մի խումբ քաղաքացիներին հանունից ս.թ. ապրիլի 14-ին դիմում է ներկայացվել ՀՀ Սահմանադրական դատարան 02.04.2017թ. Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների վիճարկման վերաբերյալ:

¹¹⁷ ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածի (մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու փորձ), 154-րդ հոդվածի (քվեարկության գաղտնիությունը խախտելը), 149-րդ հոդվածի (լրագրողի, դիտորդի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը) եւ 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի (թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), հանրաքվեի քարոզչական նախաձեռնությունների կողմից ընտրողներին կաշառք տալը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը) հատկանիշներով

«Սահմանադրության 3-րդ, 48-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածների դրույթներին և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածին համահունչ մեկնաբանությունից բխում է, որ օրենսդիր մարմին ընտրելու իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի (յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի) վրա (հասցեակա-նություն և արդյունավետություն): Հետևաբար, ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուրանձի, այդ թվում՝ ընտրողներին, դիտորդներին և դիտորդական կազմակերպու-թյուններին ընտրությունների արդյունքները վիճարկելու իրավունքից զրկելը կհանգեցնի այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի բացառմանը, ապա Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցի-այի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված՝ օրենս-դիր մարմին ընտրելու իրավունքի և ի վերջո ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի խախտման: Ելնելով վերոգրյալից՝ դիմողները պնդել են, որ դիմումը ներկայացրած սուբյեկտները, ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպա-նության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի դրույթների անմիջական գործողության, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվա-ծի՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ, 48-րդ հոդվածների դրույթներին համահունչ մեկնաբանության շրջանակներում, իրավասու են դիմե-լու ՀՀ Սահմանադրական դատարան Ազգային ժողովի ընտրություն-ների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման հարցով և այդ իրավունքի ապահովման միակ առյանը ՀՀ Սահմանադրական դատարանն է: Այնուամենայնիվ, դիմումը վերադարձվել է առանց քննարկման՝ ոչ իրավասու սուբյեկտի կողմից ներկայացված լինելու պատճառաբանությամբ: Այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանի նախագահին ներկայացված բողոքը մերժվել է նույնաբ-նույթ պատճառաբանություններով:

3.1.14. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՈՒՑԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՄԱՍՈՎ

2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների շրջանակներում ընտրական վեճերի հարուցմամբ հանդես են եկել «ԵԼՔ», «ՕՐՕ» և ՀԱԿ-ՀԺԿ դաշինքները:

23.03.2017թ. «Ելք» դաշինքը դիմել է ԿԸՀ՝ խնդրելով դիմել դատարան՝ ՀՀԿ պատգամավորի թեկնածու Առաքել Մովսիսյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով: ՀՀ ԿԸՀ-ի կողմից 25.03.2017թ. ընդունվել է թիվ 135-Ա որոշումը, որով մերժվել է դիմումն այն պատճառաբանությամբ, որ առկա չէ որևէ հիմնավորում կամ ապացույց առ այն, որ Ա. Մովսիսյանի կողմից կատարված խախտումը կարող է ազդել ընտրությունների արդյունքների վրա:

28.03.2017թ. փոստային ծառայության միջոցով «Ելք» դաշինքը ներկայացրել է հայցադիմում ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով վերացնել ԿԸՀ թիվ 135 որոշումը և պատգամավորի թեկնածու Ա. Մովսիսյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչել: ՀՀ վարչական դատարանն իր 01.04.2017թ. որոշմամբ կարճել է թիվ ՎԴ/2702/05/17 վարչական գործի վարույթը:

28.03.2017թ. «Ելք» դաշինքի կողմից ներկայացվել է դիմում ԿԸՀ՝ պահանջելով վերջինից դիմել վարչական դատարան՝ ՀՀԿ ցուցակն ուժը կորցրած ճանաչելու պահանջով: ԿԸՀ-ն հայտարարել է, որ դիմումի քննության ընթացքում ուսումնասիրել են տնօրենների բացատրությունները որպես վարչական վարույթի նյութ¹¹⁸ (հետայսու՝ Բացատրություն-

¹¹⁸ ԿԸՀ-ն ձեռք է բերել «բացատրություններ» վերնագրված փաստաթղթեր, որոնք վերագրում է վիճահարույց ձայնագրությունների մասնակից տնօրեններին: Վարչական վարույթի նյութերում բացակայում է որևէ ապացույց առ այն, որ ստուգվել է հիշյալ բացատրությունների հեղինակների ինքնությունը: Չկա որևէ փաստաթուղթ բացատրությունների հեղինակների կարգավիճակի վերաբերյալ, չկա որևէ բացատրություն, թե ով, որտեղ և հր օրն է բացատրություններ վերցնելու որոշում կայացրել, ինչպես է այն ծանուցվել բացատրությունների հեղինակներին, ինչպես են դրանք հայտնվել ՕՐՕ Դաշինքի դիմումի հիման վրա հարուցված վարույթի նյութերում, ինչու նույն փաստաթղթերը՝ բնօրինակներով հանդիսանում են երկու տարբեր վարչական վարույթների նյութեր և գտնվում 2-րդ վարչական գործի թղթապանակում:

ներ): Տնօրենների՝ ուսուցիչների, աշակերտների ծնողների վրա ազդեցության 2 դեպք ԿԸՀ-ն ընդունել է (Խոզնավար և Գյումրի):

31.03.2017թ. ԿԸՀ-ն կայացրել է թիվ 146-Ա որոշումը, որով «Ելք» դաշինքի բողոքը մերժվել է: 01.04.2017թ. 146-Ա որոշման դեմ ներկայացվել է հայցադիմում ՀՀ վարչական դատարան, որով պահանջվել է մերժել թիվ 146-Ա որոշումը և ՀՀԿ ցուցակը ճանաչել ուժը կորցրած: Գործն ընդունվել է վարույթ և ստացել թիվ ՎԴ/2886/05/17 համարը: 02.04.2017թ. որոշմամբ գործի վարույթը կարճվել է:

«ՕՐՕ» դաշինքը 04.04.2017թ. ներկայացրել է բողոք ԿԸՀ՝ պահանջելով, որպեսզի Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության դիտորդական առաքելության և իրենց մասնագետների անմիջական մասնակցությամբ ընտրական տեղամասերում ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքավորումներով ձեռքբերած մատնահետքերը միավորվեն մեկ ընդհանուր բազայում և անցկացվի համեմատական վերլուծություն՝ պարզելու, թե արդյոք կան մատնահետքերի համընկնումներ: 08.04.2017 թ. ԿԸՀ-ի կողմից կայացվել է թիվ 157-Ա որոշումը, որով բողոքը մերժվել է:

11.04.2017թ. թիվ 157-Ա որոշման դեմ ներկայացվել է հայցադիմում ՀՀ վարչական դատարան, որը նույն օրն ընդունվել է վարույթ: Գործին տրվել է ՎԴ/3175/05/17 համարը: 14.04.2017թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանը մերժել է ներկայացված հայցադիմումը:

Ընտրությունների արդյունքները վիճարկել է միայն ՀԱԿ-ՀԺԿ դաշինքը՝ բողոքներ ներկայացնելով ԿԸՀ և ՀՀ Սահմանադրական դատարան: ՀՀ Սահմանադրական դատարանը ընտրությունների արդյունքներով վեճի կապակցությամբ **28.04.2017թ.** որոշում է կայացրել (ՍԴՈ-1364):

3.1.15. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 28.04.2017 Թ. ՈՐՈՇՈՒՄ

Թեև ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ ուժի մեջ է թողել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թ. ապրիլի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 163-Ա որոշումը, սակայն որոշմամբ ընտրական համակարգի հիմնախնդիրներին տեսանկյունից կարևոր իրավական դիրքորոշումներ է արտահայտել:

Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը կարևորել է նաև դիմողի և միջազգային ու տեղական դիտորդական առաքելությունների կողմից բարձրացվածմի շարք մտահոգիչ հանգամանքներ:

ՀՀ Սահմանադրական դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետության հանրային իշխանությունների առաջնահերթ խնդիրն է հաղթահարել այն մտահոգությունները, որոնք հայտնեցին միջազգային և տեղական դիտորդական առաքելությունները, մասնավորապես՝ ընտրական գործընթացում քաղաքական կոռուպցիայի դրսևորումների առնչությամբ:

Դրա արմատախիլ անելը պետական քաղաքականության և երկրի իրավական անվտանգության ամրապնդման օրակարգի առաջնահերթություն պետք է դիտվի: Խնդրի լուծումը համալիր մոտեցում է պահանջում, այդ թվում՝ ՀՀ ընտրական օրենսգրքի ու ընտրակարգի հետագա բարեփոխումների ճանապարհով, որով հնարավոր կլինի հաղթահարել ընտրական գործընթացում քաղաքական կոռուպցիայի հնարավոր դրսևորման իրավական ռիսկերը:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանը գտել է, որ խնդրի արմատական լուծումը պահանջում է առավել ակտիվ ու հետևողական քայլերի իրականացում տնտեսական, վարչական և քաղաքական ներուժի սերտաճումը հաղթահարելու, «գործատու-վարձու աշխատող» փոխհարաբերություններն իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներին համապատասխան որակապես նոր աստիճանի բարձրացնելու և այդ փոխհարաբերություններում վարձու աշխատողին լիարժեք ու իրավական առումով հուսալիորեն պաշտպանված իրավասություններ դարձնելու, ընտրական գործընթացի բոլոր փուլերում քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը հաղթահարելու ուղղությամբ:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանն հղում կատարելով իր 10.06.2007թ. ՍԴՈ-703, 08.03.2008թ. ՍԴՈ-736, 14.03.2013թ. ՍԴՈ-1077 որոշումներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, որի համաձայն՝ իրավական պետության համար ելակետայինն ընտրական գործընթացներում հասարակության քաղաքական շահերի գերակայության օրենսդրական ու կառուցակարգային այնպիսի երաշխիքների ապահովումն է, որը «... կբացառի առաջնային մանդատով օժտված իշխանության ներկայացուցչական մարմինների ձեւավորման գործում քաղաքական եւ գործարար շահերի անմիջական միահյուսման

որել է հնարավորություն»: Սահմանադրական դատարանը վերահաստատել է, որ Հայաստանի քաղաքական համակարգի համար այս խնդրի լուծումը շարունակում է հրատապ մնալ՝ մասնավորապես պահանջելով նաեւ օրենսդրական առավել հստակ կարգավորում:

Սահմանադրական դատարանը գտել է, որ լուրջ ուշադրության առարկա պետք է դառնան նաև դիմողի և դիտորդական առաքելությունների արտահայտած այն մտահոգությունները, որոնք վերաբերում են բաց քվեարկության, խմբային քվեարկության, ուղղորդված քվեարկության դեպքերին և ընտրող կամ դիտորդ չհանդիսացող այլ անձանց ներկայությանը տեղամասերում, ինչպես նաեւ հանրային պաշտոնյաների կամ նույնիսկ մասնավոր ընկերությունների կողմից տեղ գտած ճնշումներին: Հավասարապես կարևորելով նաև նման բոլոր դեպքերով օրենքով նախատեսված կարգով ընտրական իրավունքի պաշտպանության գործընթացի նախաձեռնումը, որով նաև սահմանադրաիրավական անհրաժեշտ ու լիարժեք նախադրյալներ կստեղծվեն Սահմանադրական դատարանում ընտրության արդյունքների արդյունավետ քննության և գնահատման համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ որքան էլ որ դիմողի կողմից ներկայացված այդ դեպքերը, թեկուզ և ամբողջությամբ, չգնահատվեն որպես հավաստի, միևնույն է, նվազեցնում են հանրային վստահությունն ընտրական գործընթացի ու սահմանադրական բարեփոխումների արդյունքում երկրում ժողովրդավարական զարգացումների ուղղությամբ ձեռնարկված հետևողական քայլերի առնչությամբ: Ուստի ոչ մի ընտրախախտում չպետք է անուշադրության մատնվի: Խնդիրը պետք է վերաբերի դրանց իսպառ վերացմանը, իրավախախտների նկատմամբ օրենքով նախատեսված պատասխանատվության անխուսափելիությանը եւ դրանց հետ կապված՝ հնարավոր շահարկումների հաղթահարմանը:

Գործի քննության արդյունքներով Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ ընտրական գործընթացում առկա խնդիրների բացահայտման ու դրանց նկատմամբ հանրային անհանդուրժողական մթնոլորտ ձեւավորելու առումով առավել հետեւողական են գործել քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Միայն նրանց ու լրատվամիջոցների օգնությամբ է հնարավոր եղել բացահայտել Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացում դեռեւս առկա որոշակի բացերն ու խնդիրները:

Սահմանադրական դատարանը նաեւ գտել է, որ չնայած ՀՀ նոր ընտրական օրենսգիրքն ընդունվել է քաղաքական լայն փոխհամաձայնության պայմաններում, գործնականում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ձայների 3/4-ից ավելի մեծամասնությամբ, այսուհանդերձ, դրանում տեղ գտած առանձին լուծումներ լիարժեք չեն իրացնում իրավական որոշակիության սկզբունքի սահմանադրական պահանջը և լայն հայեցողության հնարավորություն են թողնում: Մասնավորապես, դա վերաբերում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու ինստիտուտի ոչ բավարար հստակությամբ իրավակարգավորմանը, Ազգային ժողովի ընտրված լինելու, պատգամավորներին մանդատների հանձնման և առաջին նստաշրջանի գումարման ժամկետների հստակեցմանը, ինչը հայեցողական մեկնաբանությունների առարկա է դարձել, ինչպես նաեւ կուսակցությունների համապետական և տարածքային ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուներից ընտրության արդյունքներով պատգամավորական մանդատ ստանալու հարցում հնարավոր քաղաքական հայեցողության հետագա դրսեւորումների բացառմանը: Հետագա բարելավման անհրաժեշտություն ունի նաև վարչական վարույթների իրականացման ու տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից բողոքներին սահմանված կարգով ու ժամկետներում ընթացք տալու համակարգը:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2017 թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների ընթացքում լիարժեք չեն ապահովվել քաղաքացիների կամքի ազատ ձևավորման, արտահայտման և պատշաճ արձանագրման իրավունքները, ինչպես նաև ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության իրավունքը:

4.1. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ընտրական օրենսդրության մեջ և գործընթացներում առկա խնդիրների էպիզոդիկ, մակերեսային և սահմանափակ, ինչպես նաև ոչ մասնակցային (մասնագիտական և փորձագիտական սահմանափակ ռեսուրսի ներգրավմամբ) անդրադարձը վկայում է ընտրական իրավունքի, որպես ժողովրդավարական պետության անկյունաքարի, ապահովման ուղղությամբ պետական քաղաքականության և քաղաքական կամքի բացակայության մասին: Ընտրական օրենսդրության փոփոխությունները, այն էլ՝ էական, գրեթե առանց բացառության տեղի են ունենում ընտրություններին նախորդող այնպիսի կարճ ժամանակահատվածում, որն էական նվազեցնում է օրենքը կիրառող մարմիններին, ինչպես նաև ընտրողներին՝ փոփոխված ընտրական գործընթացի լիարժեք ուսուցումն ու ընկալումը, ինչն իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է լուրջ խնդիրների: Իսկ ոչ իշխանական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության սահմանափակ մասնակցության պայմաններում օրենսդրական փոփոխությունները կատարվում են միայն պետական մարմինների և բացարձակ մեծամասնությամբ իշխող կուսակցության դիտանկյունից:

Միաժամանակ, երբ կատարվում են որոշակի փոփոխություններ, որոնք առաջին հայացքից դրական են, ընտրական գործընթացի վրա դրանց դրական ազդեցությունը չեզոքացվում է ավելի քողարկված և լայն հանրության համար անտեսանելի փոփոխություններով: Որոշ փոփոխություններ ակնհայտորեն միտված են ընտրական հանձնաժողովների աշխատանքի թերությունների սրբագրմանը և ընտրական իրավունքի հարցերով բողոքարկման գործընթացի խրթինացմանը՝ հնարա-

վոր դիմում-բողոքների բացառման կամ դրանց քանակի արհեստական նվազեցման նպատակով:

Չնայած նրան, որ իշխանությունը լայնորեն գովազդում է նոր ընտրական օրենսգիրքը և հատկապես այն, որ որոշ փոփոխություններ իրականացվել են ընդդիմադիր կուսակցությունների և քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչների ցանկությամբ, այդուհանդերձ, նոր ԸՕ-ում դեռևս մնացել են լրջագույն խնդիրներ: Ի հեճուկս այն բանի որ դրանց մասին բարձրաձայնում էին հասարակական կազմակերպությունները, մասնագիտական համայնքը և ընդդիմադիր քաղաքական ուժերը և առաջարկում լուծումներ, դրանք անտեսվեցին:

Ընտրական համակարգի մասով.

«Կայուն մեծամասնության» համակարգի ներդրումը և դրա շրջանակներում ԱԺ ընտրությունների երկրորդ փուլի կառուցակարգն ու բռնուսային համակարգը ոչ միայն չեն նպաստում ժողովրդավարության կայացմանն, այլև էապես սահմանափակում են իրական քաղաքական մրցակցությունը:

Համամասնական ընտրակարգի շրջանակներում տարածքային ընտրական (ռեյտինգային) ցուցակների ներմուծումը ձախողեց լիարժեք համամասնական ընտրակարգի ներդրման հոչակված նպատակը՝ բացառելով իրական քաղաքական ծրագրային պայքարը ընտրություններին մասնակցող կուսակցությունների միջև և նպաստելով հիմնականում իշխող կուսակցության անդամների ֆինանսական, վարչական և այլ ազդեցությունների անմնացորդ ներդրմանը:

Քաղաքական գործիչների և որոշ հանրային ծառայողների համար նախընտրական քարոզարշավին մասնակցելու սահմանափակումների փոփոխությունը (վերացումը) նպաստեց վարչական ռեսուրսի առավել լայն և արդյունավետ չարաշահմանը առավելապես հոգուտ իշխանական Հանրապետական կուսակցության:

Քաղաքական համակարգի և կուսակցությունների կայացվածության մասով.

Ըստ ԿԸՀ-ի 2017 թվականի ապրիլի 9-ի թիվ 163-Ա որոշման՝ ընտրված պատգամավորների թվից 23-ն ինքնաբացարկ են հայտնել, այսինքն՝ ԱԺ պատգամավորների գրեթե 1/4-ը¹¹⁹: ԿԸՀ որոշմանը նախորդող

¹¹⁹ http://res.elections.am/images/dec/17.201_A.pdf

փուլում ՋԼՄ հրապարակումների համաձայն՝ ինքնաբացարկի դիմում էր ներկայացրել 35 պատգամավոր: Այնուհետև մեկ այլ հրապարակման համաձայն՝ 12 պատգամավոր հայտարարել է, որ ինքնաբացարկի դիմում չի ներկայացրել: Վերոհիշյալը վկայում է նրանց նկատմամբ ճշումների, կամ նրանց անունից կեղծիքներ կատարելու, կամ վերջիններիս քաղաքական պատասխանատվության բացակայության և ինքնուրույն քաղաքական գործոն չհանդիսանալու մասին: Միևնույն ժամանակ, հիշյալ երևույթի նման մեծ մասշտաբը վկայում է կուսակցությունների ներսում ժաղովրդավարական ինստիտուտների անարդյունավետության մասին:

Այս հարցին անդրադարձ է կատարել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր 28.04.2017թ. ՍԴՈ-1364 որոշմամբ (տես՝13-րդ պարբերությունը):

Հանրային վերահսկողության սահմանափակումների մասով.

ՋԼՄ-ների նկատմամբ կիրառված օրենսդրական սահմանափակումների արդյունքում «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունը, որի անունից տարածվում է երկու լրատվամիջոց՝ «Ասպարեզ» օրաթերթ (գործում է 2011թ.) և asparez.am լրատվական կայք (գործում է 2004թ.), զրկվեց այդ լրատվամիջոցների 1000 (հազար) ներկայացուցիչներին հավատարմագրելու և նրանց միջոցով ԱԺ ընտրությունները լուսաբանելու հնարավորությունից (սույն զեկույցի 3.1.11. բաժինը):

Միաժամանակ խնդրահարույց են տեղամասային ընտրական հանձնաժողովների նոր լիազորությունները տեղամասում գտնվող դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների իրավունքների սահմանափակման հնարավորության առումով:

4.2. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՄԻԱՀՅՈՒՄՈՒՄ (ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՄԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ)

Հայաստանի հանրապետական կուսակցությունն իր կողմից պետական իշխանական լծակների տնօրինման բերումով դրանք Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ ծառայեցրել է կուսակցության շահերին և նպատակներին: Հանրապետական կուսակցության ձեռքում

է կենտրոնացված գրեթե ողջ գործադիր (սկսած Հանրապետության Նախագահից) և օրենսդիր (պարզ մեծամասնություն) իշխանությունը:

Ժողովրդավարության առջև ծառայած ամենավտանգավոր և ընտրական իրավունքի ապահովման համար առաջնային խոչընդոտը Հայաստանում միակուսակցական համակարգի հաստատման կայուն միտումն է: Այս երևույթի անհրաժեշտ նախապայմանն, ինչպես նաև ցուցիչն է կուսակցական և պետական գործառույթների միաձուլումը/միահյուսումը, ինչն առավել ակնհայտորեն և բացահայտ այս ծավալով դրսևորվել է հենց այս ընտրությունների ընթացքում:

4.3. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԿԱՄՔԻ ԱԶԱՏ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ (ՔԿԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՍԻ ԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ)

Ամենայն հավանականությամբ նոր ԸՕ-ով սահմանված հանրային վերահսկողության նոր մեխանիզմները, հատկապես՝ ընտրողների կողմից ստորագրված ցուցակների հրապարակման օրենսդրական պահանջը, նպաստել են խախտումների այնպիսի կոպիտ տեսակների նվազմանը, ինչպիսիք են ահաբեկումներն ու բռնությունները քվեարկության գործընթացի մասնակիցների կամ քվեարկությանընթացքում հանրային վերահսկողություն իրականացնող սուբյեկտների (ԶԼՄ ներկայացուցիչներ, դիտորդներ) նկատմամբ, քվեատուփի լցոնումը և այլն: Սակայն դրանց իրական ազդեցությունը, ինչպես նաև թերություններն ու բացերը լիարժեք բացահայտված չեն ներդրված ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքավորումների տվյալների անմատչելիության, ընտրողների էլեկտրոնային ռեգիստրի և ընտրողների ստորագրված ցուցակների լիարժեք ուսումնասիրության կատարված չլինելու պայմաններում:

Քվեարկությանը նախորդող ժամանակահատված (նախընտրական քարոզչություն), Վարչական ռեսուրսի չարաշահում (սույն գլուխի 2.4.1. բաժին).

Քվեարկությանը նախորդող ժամանակահատվածում, այդ թվում՝ նախընտրական քարոզչության փուլում արձանագրվել են վարչական

ռեսուրսի համատարած օգտագործման և ընտրակաշառքի բաժանման բազմաթիվ դեպքերի վերաբերյալ հաղորդումներ:

Արձանագրվել է պետական և համայնքային միջոցների՝ պետական բարձրաստիճան և այլ պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ոլորտի ծառայողների՝ դպրոցների տնօրենների և մանկապարտեզների վարիչների, ներգրավվում նախընտրական քարոզչության մեջ առավելապես հօգուտ Հանրապետական կուսակցության:

ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ՀՀ արդարադատության նախարար Արփիինե Հովհաննիսյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը և վարչապետ Կարեն Կարապետյանը հանրապետության ողջ տարածքով մեկ մասնակցել են քարոզարշավի և քարոզչություն իրականացրել ՀՀԿ-ի օգտին: Իսկ ՀՀ և ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանը ՀՀԿ օգտին քարոզչություն է իրականացրել զինվորականների շրջանում պաշտոնական հանդիպումների միջոցով:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների պաշտոնատար անձանց՝ ընտրողների վրա ազդեցությունը զուգակցվել է ընտրողների անձնական տվյալների, այդ թվում՝ անձնագրային, հավաքմամբ և ցուցակագրմամբ: Դրանք այնուհետև հանձնվել են մարգպետարաններին և տեղական ինքնակառավարման մարմիններին, Հանրապետական կուսակցության կենտրոնական ընտրական շտաբին, ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորների թեկնածուների ընտրական շտաբներին:

Վերոնկարագրյալն ակնհայտ է դարձնում, որ գործել է համակարգված և կենտրոնացված մեխանիզմ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների/աշխատակիցների ներգրավմամբ, որի միջոցով, օգտագործելով այդ ռեսուրսի ազդեցությունը, ձևավորվել են ՀՀԿ-ի օգտին քվեարկողների ցուցակներ՝ կենտրոնացնելով դրանք իշխանական կուսակցության՝ ՀՀԿ-ի տնօրինման ներքո: Այս ամենի արդյունքում փաստացի իրականացվել է ազդեցություն և հսկողություն ինչպես այդ ընտրողների՝ քվեարկությանը մասնակցության, այնպես էլ՝ նրանց կամքի ձևավորման և արտահայտման նկատմամբ:

Ֆինանսական ռեսուրսի առավելությունը, ռեսուրսի կենտրոնացում.

Մեկ այլ, ուշադրության արժանի հանգամանք է այն, որ ընտրություններին մասնակցող իշխող Հանրապետական կուսակցության հայտա-

րարագրած նախընտրական հիմնադրամի միջոցները մի քանի անգամ գերազանցում էին մյուս մասնակիցների միջոցները:

Ըստ հայտարարագրված տվյալների՝ Հանրապետական կուսակցության նախընտրական հիմնադրամն ամենամեծն է եղել՝ հասնելով մոտ 400 միլիոն ՀՀ դրամի, իսկ մյուս կուսակցությունների և դաշինքների նախընտրական հիմնադրամների միջոցները միասին վերցրած կազմել են մոտ 481 միլիոն ՀՀ դրամ¹²⁰:

Թեև այս հանգամանքը ըստ օրենքի չի հանդիսանում խախտում և վարչական ռեսուրսի չարաշահում, այն հստակ ցուցիչ է նրա, որ տևական ժամանակահատված ՀՀԿ-ի իշխող կուսակցություն լինելու հանգամանքը խթանել է գործընթացներ, որոնք հանգեցրել են այդ կուսակցության և դրա անդամների ֆինանսական ռեսուրսի անհամամատ գերազանցմանը մյուս բոլոր կուսակցությունների համեմատ:

Հիշյալ հանգամանքը հստակ ցուցիչ է քաղաքական բազմակարծության, ռեսուրսների մատչելիության, ընտրությունների ֆինանսավորման և հավասար մրցակցության, ինչպես նաև առհասարակ քաղաքական կուսակցություններին տրամադրվող պետական օժանդակության համակարգի և մեխանիզմների անկատարության և անարդյունավետության կամ այդ ուղղությամբ պետության քաղաքականության բացակայության:

Ընտրակաշառքի բաժանման դեպքեր.

Նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում տարբեր աղբյուրների (ԶԼՄ հրապարակումներ, նախընտրական հանրահավաքների մասնակիցներ և հանրահավաքների դիտարկումներ) համաձայն՝ ընտրակաշառքի բաժանումը կրել է համատարած, շարունակական և համակարգված բնույթ, ինչի մասին է վկայում նաև բաժանվող ընտրակաշառքի միասնական չափի սահմանումը՝ 10.000 ՀՀ դրամ:

Այս դեպքերի մասին տրվել են բազմաթիվ հաղորդումներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, պատգամավորության թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ԶԼՄ-ների կողմից, սակայն դրանց կապակցությամբ որևէ արդյունավետ միջոց չի ձեռնարկվել ոչ ընտրական վարչարարություն իրականացնող մարմինների և ոչ էլ քրեական հետապնդման մարմինների կողմից: Ավելին, բարձրաստի-

¹²⁰ <http://res.elections.am/images/audit/02.04.17m.pdf>

ճան պաշտոնյաների և իշխող ՀՀ-ում քաղաքական բարձր պաշտոններ զբաղեցնող գործիչների կողմից դրանք ոչ միայն չեն դատապարտվել, այլև խրախուսվել և արդարացվել են կամ հայտարարվել է դրանց դեմ պայքարի պետության անկարողության մասին, ինչի հետևանքով նման դեպքերը ստեղծված անպատժելիության և թողտվության պայմաններում ավելի մեծ թափ են առել և տարածում ստացել՝ դառնալով անթաքույց և համատարած քվեարկությանը նախորդող օրերին և հատկապես քվեարկության օրը:

ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է վերոգրյալ խնդիրներին իր 28.04.2017թ. որոշմամբ (ՍԴՈ-1364)՝ պետական քաղաքականության եւ երկրի իրավական անվտանգության ամրապնդման օրակարգի առաջնահերթություն ճանաչելով ընտրական գործընթացում քաղաքական կոռուպցիայի դրսևորումների արմատախիլ անելու անհրաժեշտությունը:

Քվեարկությանը մասնակցության վրա ազդեցություն, քվեարկության գաղտնիության և այլ խախտումներ.

ՀՀ Սահմանադրության 2-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված ազատ ընտրության իրավունքի խախտումներն իրականացվել են լավ մշակված և համակարգված մեկ ամբողջական շղթա կազմող, մեկը մյուսին շարունակող, ընտրողի կամքի ձևավորման փուլից սկսվող և մինչև յուրաքանչյուր ընտրողի քվեարկության ավարտն իրականացվող գործողություններով, որոնցից առաջինն ընտրողի կամքի ձևավորման վրա ազդեցությունն է (վարչական ռեսուրսի չարաշահում, ընտրակաշառք, սպառնալիք, հարկադրանք, այդ թվում՝ մասնավոր ոլորտում աշխատող-գործատու հարաբերություններով պայմանավորված ազդեցություն), իսկ մյուսներն այդ միջոցների ազդեցության արդյունավետությունն ապահովող միջոցներ (քվեարկության նպատակով տեղամաս տեղափոխել, տեղամասում քվեարկության նկատմամբ հսկողություն՝ ուղղորդումների, քվեարկության գաղտնիության խախտման տարբեր միջոցներով): Որպես հիշյալ ազդեցության ավարտական և այս միջոցի արդյունավետության ամենակարևոր բաղադրիչ՝ այդ շղթայի վերջին օղակ, քվեարկության սենյակներում ապահովվել է քվեարկության նկատմամբ անմիջական հսկողություն կամ այդպիսի հսկողության առկայության վերաբերյալ բարձր աստիճանի հանդիչ պատրանք այդ հանցավոր շղթայի տեղում գտնվող անդամ «պատասխանատուի», այդ թվում՝ տարբեր դիտորդներին միջոցով: Վերոնկարագրյալի արդյունքում

քվեարկության սենյակում նունիսկ այն դեպքերում, երբ անմիջականորեն և ուղղակիորեն տեղի չի ունեցել քվեարկության գաղտնիության խախտում, ընտրողների մոտ տիրել է այն համոզմունքը, որ ամբողջ տեղամասը գտնվում է բացարձակ և արդյունավետ հսկողության ներքո, և իրենց կոնկրետ քվեարկությունը ևս վերահսկելի է:

Փաստացի գործել է ազատ կամքի ձևավորման և կամաարտահայտման նկատմամբ վերը նկարագրված ազդեցության միասնական և կենտրոնացված համակարգ, մեխանիզմ, այդ թվում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմամբ, որի նպատակն է եղել նախ՝ արդյունավետ ազդեցություն գործել ընտրողների կամքի ձևավորման ազատության վրա, ապա՝ ընտրական իրավունքի սահմանադրական երաշխիքների խախտման միջոցով հսկել այդ կամքի ցանկալի արտահայտման գործընթացը: Հիշյալ դրսևորումները կրել են համատարած բնույթ և անտեսվել են ընտրական հանձնաժողովների կողմից և/կամ իրականացվել են վերջիններիս թողտվությամբ:

Ընտրողների՝ թե ընտրություններին մասնակցության, թե կամքի վրա ազդեցության տեսանկյունից լրացուցիչ վկայություն է հոգեբուժարաններում, քրեակատարողական հիմնարկներում և զինծառայողների մասնակցության ընդհանուր ցուցանիշից էապես բարձր, գրեթե հարյուր տոկոսի հասնող ցուցանիշը, ինչպես նաև քվեարկության արդյունքը (սույն զեկույցի 2.4.8. բաժին):

Հիշյալ դրսևորումների ազդեցության աստիճանն ու ծավալը պարզելու և գնահատելու ուղղությամբ ոչ մի քայլ չի իրականացվել: Այդ կապակցությամբ տեղեկություններն ու հաղորդումները պատշաճ քննության և գնահատման չեն ենթարկվել ընտրական վարչարարություն իրականացնող մարմինների կողմից: Ավելին, տարբեր պաշտոնատար անձանց կողմից հիշյալ գործողությունները որակվել են որպես օրենքով չարգելված:

Ընտրակաշառքի բաժանման, հանրային ոլորտի ծառայողների և մասնավոր ոլորտում աշխատանքային հարաբերություններով պայմանավորված ճնշումների ազդեցությունը ընտրությունների վրա և դրա հետևանքով հանրային վստահության պակասն ակնհայտ է եղել նաև միջազգային ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության դիտորդների համար (սույն զեկույցի 2.4.1. բաժին):

Ընտրողների կամքի վրա ազդեցության բացառման հիմնահարցերին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանն իր 28.04.2017թ. որոշմամբ¹²¹ (ՍԴՈ-1364, 11-րդ և 13-րդ պարբերություններ): Վերջինս արձանագրել է նաև առավել ակտիվ ու հետետողական քայլերի իրականացման անհրաժեշտությանը տնտեսական, վարչական եւ քաղաքական ներուժի սերտաճումը հաղթահարելու, «գործատու-վարձու աշխատող» փոխհարաբերություններն իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներին համապատասխան ապահովելու ուղղությամբ:

4.4. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ

Ստորագրված ցուցակների մատչելիության վերաբերյալ.

20.10.2016թ. ընտրական օրենսգրքում փոփոխություններով նախատեսված քվեարկությունից հետո ընտրողների կողմից ստորագրված ցուցակների սկանավորման և ԿԸՀ կայքում տեղադրման օրենսդրական պահանջի նախատեսումը կրկնաքվեարկությունների և այլ անձանց փոխարեն քվեարկությունների բացառմանն ուղղված չափազանց կարևոր նախադրյալ էր: Սակայն, ինչպես ցույց տվեց իրավակիրառ պրակտիկան, անհրաժեշտ բայց ոչ բավարար, քանի որ առանց որոնման համակարգի այդ ցուցակների արդյունավետ վերլուծության և խախտումների բացահայտման տեսանկյունից վերահսկողությունն այն աստիճան ռեսուրսատար էր, որ ըստ էության անհնարին էր դարձնում դրանց ժամանակին և արդյունավետ օգտագործումը:

Բացի դրանից, ցուցակների հրապարակման կապակցությամբ օրենսդրական փոփոխության հետ միաժամանակ նախատեսված այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելու համար քրեական պատասխանատվությունը, ընդ որում՝ ինչպես դիտավորյալ, այնպես էլ անփութությամբ գործելիս, ակնհայտորեն սահմանափակում է ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման արդյունքում բացահայտված տվյալ տեսակի ընտրակեղծիքի

¹²¹ <http://concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1364.pdf>

վերաբերյալ հաղորդումների ներկայացման հնարավորությունը՝ ըստ էության չեզոքացնելով ցուցակների հրապարակման դրական ազդեցությունը հանրային վերահսկողության տեսանկյունից:

Ընտրողների ռեգիստրի և ցուցակների հետ կապված խնդիրներ.

Ընտրողների էլեկտրոնային ցուցակների, քվեարկության մասնակիցների տվյալների և այդ սարքավորումներ մուտքագրված տվյալների ստուգման, իրական և պրակտիկ վերահսկողության հնարավորության բացակայության պայմաններում ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության բարձրացման նպատակը չապահովվեց (սույն զեկույցի 2.4.3., 2.4.4. բաժիններ):

Դիտարկվել են տեխնիկական սարքավորումների խափանման, սարքավորումների էլեկտրոնային և ընտրողների ստորագրվող թղթային ցուցակների անհամապատասխանության դեպքեր: Արձանագրվել է ընտրողների անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու մեծ թիվ՝ 229.757 (ըստ ԿԸՀ պաշտոնական տվյալների):

ՔԴՆ-ի վերլուծական խմբի կողմից հնարավոր ռիսկերի բացահայտման ուղղությամբ կատարված հետազոտությունների, այդ թվում՝ ընտրողների ցուցակների ուսումնասիրության արդյունքում, արձանագրվել է ընտրողների կրկնվող անունների բավական մեծ թիվ: 06.12.2015թ. սահմանադրական հանրաքվեի և 02.04.2017թ. Ազգային ժողովի ընտրությունների ՀՀ ոստիկանության հրապարակած ընտրողների վերջնական ցուցակների համեմատության արդյունքում վեր է հանվել շուրջ 106.000 ընտրողի հասցեների անհամապատասխանություն:

Չիրականացվեց 20.10.2016թ. ԸՕ փոփոխություններով ստեղծված համատեղ հանձնաժողովի պատվիրած ընտրողների նույնականացման քարտերի և անձնագրերի շտեմարանի աուդիտը, ինչը չափազանց էական էր էլեկտրոնային սարքավորումների ներմուծման կապակցությամբ հանրային վստահության ապահովման տեսանկյունից:

Ընտրությունների նկատմամբ հանրային վստահության մակարդակի վրա էապես ազդեց նաև ընտրողների գրանցման սարքավորումներ ներմուծված քվեարկությանը մասնակցած ընտրողների մատնադրոշմների հնարավոր համընկնումները բացահայտելու նպատակով անհրաժեշտ

համեմատական վերլուծություն իրականացնելու պահանջի մերժումը թե ԿԸՀ, թե վարչական դատարանի կողմից (սույն զեկույցի 3.1.14 բաժին):

Միայն թվով 1500 տեղամասերում տեղադրվեցին տեսախցիկներ: Ավելին՝ որոշվեց դրանց միջոցով ձայնագրառում և ձայնի հեռարձակում չիրականացնել, ինչը էապես նվազեցնում է այդ միջոցի արդյունավետությունն ու ապացուցողական նշանակությունը: Տեսախցիկների տեսանյութերի մատչելիությունը ևս առանձին խնդիր է, որը ևս էապես նվազեցնում է այդ գործիքի արդյունավետությունը, ընտրությունների նկատմամբ հանրային վստահության բարձրացման հնարավորությունը: Տեսանյութերի հեռարձակումը քվեարկության արդյունքների ամփոփումից հետո դադարեցվել է և դրանք լայն հանրությանն այլևս հասանելի չեն, իսկ այն սուբյեկտների համար որոնց ըստ օրենքի դրանք տրամադրվում են ևս բավարար մատչելիություն ապահովված չէ: Հաշվի առնելով արտասահմանյան երկրների փորձը (որտեղ ևս գործում է ընտրական գործընթացի տեսանկարահանման կարգավորում, ընդ որում՝ նաև ձայնագրառում) չափազանց էական է տեսանյութերի հետընտրական մատչելիությունն առավել խորքային վերլուծությունների համար՝ ընտրական գործընթացի հետագա բարելավման տեսանկյունից:

4.5. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԱՍԻՎ

Ընթացակարգեր.

Ընտրական իրավունքի պաշտպանության համար առկա են լրջագույն խոչընդոտներ, սահմանափակումներ, որոնք էապես դժվարացնում և սահմանափակում են կամ անհնար են դարձնում ընտրական իրավունքի արդյունավետ իրացումը, պաշտպանությունն ու վերականգնումը: Այդ սահմանափակումների բնույթը, դրանց նախատեսման համար իրավաչափ նպատակի բացակայությունը հանգեցնում է միայն մեկ հետևության այն մասին, որ դրանց իրական նպատակն է եղել բողոքարկման ընթացակարգերն էապես բարդացնելու միջոցով նվազեցնել բողոքների ներկայացման իրական հնարավորությունն ու բողոքների քանակը:

Ընտրական վարչարարություն իրականացնող մարմինների կողմից օրենքի կամայական և երկակի ստանդարտներով կիրառման պատճառով բացակայում է ընտրական իրավունքի պաշտպանության որևէ արդյունավետ և պիտանի միջոց:

Դատարանի մատչելիություն.

Ընտրական վեճերով դատական պաշտպանության դիմելու ընթացակարգերը և ժամկետները (դատարանի մատչելիության իրավունքի) ևս սահմանափակվեցին: Հատկապես դատարանի մատչելիության իրավունքի էական սահմանափակում է պետական տուրքի մասին օրենքի կամայական մեկնաբանությունը և այնպիսի բարձր պետական տուրքերի հաշվարկը, ինչը գործնականում գրեթե անհնար է դարձնում դատական պաշտպանության դիմելը:

Թեև ընտրական հանձնաժողովներ բողոքների ներկայացման ժամկետները որոշ չափով երկարաձգվեցին, նախատեսված մյուս ընթացակարգերի հաշվին բացառվեց դրանց գործնական արդյունավետությունը (սույն զեկույցի 3-րդ բաժին):

Բոլոր առկա փաստերը վկայում են իրավասու ընտրական հանձնաժողովների կողմից ընտրությունների վերաբերյալ ներկայացված բողոքները սահմանված ժամկետներում քննելուց հրաժարվելու կամ խուսափելու, ինչպես նաև բողոքարկման համակարգի բացարձակ անարդյունավետության և հանձնաժողովների ինքնուրույն և անկախ գործելու անկարողության մասին: Հիշյալն ուղղակիորեն վկայում է ընտրական հանձնաժողովների ընտրական իրավունքի պաշտպանության առումով անարդյունավետ առյուծ չլինելու մասին: Իսկ դիմում-բողոքների վերաբերյալ որոշումների կայացման արհեստական ձգձգումները ուղղակիորեն վկայում են այդ որոշումների դեմ բողոքները կամ դրանց քննությունը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը բացառելու, ընտրական իրավունքի ձախողման նպատակի մասին:

4.6. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԸՀ-Ի ԴԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍՈՎ

ՏԸՀ-ների ինքնուրույնության և անկախության բացակայության, ինչպես նաև որակավորման անհամապատասխանության մասին փաստերը.

ՏԸՀ անդամների որակավորման ցածր մակարդակը շարունակում է խնդրահարույց մնալ:

2017 թվականի ապրիլի 2-ի ՀՀ ազգային ժողովի ընտրությունների շրջանակներում հետընտրական գործընթացների ժամանակ արձանագրվել են ՏԸՀ գործունեությանը ԿԸՀ միջամտության և ՏԸՀ-ների անկախության բացակայության, ինչպես նաև ՏԸՀ-ների որոշումները մեկ կենտրոնից կայացվելու մասին փաստեր (օրինակ՝ դիմում-բողոքներով նշանակվող նիստերի օրվա և ժամի ԿԸՀ-ի կողմից նշանակման հանգամանքը, ինչն արձանագրվել է ՏԸՀ անդամների ուղիղ խոստովանությունների միջոցով

Հիշյալ խնդիրներն անխուսափելիորեն հանգեցնում են մի իրավիճակի, երբ ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգում բացակայում է հանձնաժողովների ինքնուրույնությունն ու միմյանցից անկախությունը, այն սերտաճած է և ունի մեկ կառավարման կենտրոն՝ ԿԸՀ, իսկ մյուս ստորադաս հանձնաժողովները՝ տարածքային և տեղամասային, հանդես են գալիս որպես կատարողներ և զուրկ են ինքնուրույն և անկախ որոշումներ կայացնելու իրական լիազորությունից: Այս իրավիճակն անխուսափելիորեն հանգեցնում է ընտրական իրավունքի պաշտպանության իրական միջոցի բացակայության, հատկապես վերադասության կարգով բողոքները ևս չեն կարող նման իրավիճակում համարվել որպես արդյունավետ միջոց:

Ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակը պայմանավորված է նաև ընտրական հանձնաժողովների, նրանց անկախության և անկողմնակալության նկատմամբ անվստահությամբ:

Ընտրախախտումների կանխարգելման, բացահայտման և արդյունավետ քննության ապահովման տեսանկյունից ընտրական հանձնաժողովների անարդյունավետ գործունեությունն արձանագրված է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներով:

4.7. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

• Տեղական դիտորդական առաքելություններ.

2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրություններին հավատարմագրված դիտորդական կազմակերպություններից շատերը երբևէ որևէ կերպ հայտնի չեն եղել մարդու իրավունքների պաշտպանությանը կամ ժողովրդավարության խթանմանը միտված իրենց գործունեությամբ, ինչը կասկա-

ծի տակ է դնում նրանց դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակը: Այդ կազմակերպությունների բազմաթիվ դիտորդներ աչքի են ընկել ընտրողների ուղղորդման և քվեարկության նկատմամբ հսկողության «առաքելություն» իրականացնելիս՝ վայելելով հանձնաժողովների հանդուրժողականությունը: Այսպիսով շարունակում է խնդրահարույց մնալ դիտորդական առաքելությունների անկողմնակալության և դիտորդական առաքելության շղարշի ներքո այլ խնդիրներ հետապնդող կազմակերպությունների և դիտորդների բացահայտման հարցը:

49 տեղական դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպություններից և 28.021 դիտորդներից առավելապես «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության և «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի շրջանակներում հանդես եկող կազմակերպություններն ու դիտորդներն են եղել առավել ակտիվ, դիտարկել են առավել մեծ թվով ընտրախախտումներ և նպաստել դրանց հանրայնացմանը, միևնույն ժամանակ ձեռնամուխ եղել ընտրական իրավունքի (ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ՝ օբյեկտիվ) պաշտպանության, այդ թվում՝ իրավական գործընթացներ նախաձեռնելով: Հենց այս դիտորդական առաքելությունների դիտարկած և հրապարակած խախտումների վրա են էապես հենված եղել ընտրություններին մասնակցող քաղաքական կազմակերպությունների հարուցած ընտրական վեճերը: Այս հանգամանքներին անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր 28.04.2017թ. որոշմամբ¹²² (ՍԴՈ-13642, պարբերություններ՝ 11, 12)՝ ընդգծելով «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դերը:

Միջազգային դիտորդական առաքելություններ.

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ԿԸՀ-ն նախապես մերժել է ՀՀ ԸՕ-ով սահմանված կարգով հրավեր ուղարկել մի շարք միջազգային դիտորդական կազմակերպությունների՝ Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմին (EPDE - European Platform for Democratic Elections) և Ընտրությունների մոնիտորինգի կազմակերպությունների եվրոպական ցանցին (ENEMO – European Network of Elections Monitoring Organizations), ինչն ուղիղ ցուցիչ է նրա, որ հայաստանյան իշխանությունը սահմանափակում է ընտրությունների նկատմամբ առավել լայն անկողմնակալ հանրային վերահսկողությունը, ինչը բացասաբար է անդրադառնում նաև ՀՀ միջազգային հեղինակության վրա:

¹²² <http://www.concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1364.pdf> (ՍԴՈ-1364, 12-րդ պարբերություն)

ՔԴՆ դիտորդական առաքելության կազմակերպական և մեթոդաբանության մասով.

• Արդյունավետությունը

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը ընտրությունների առավել արդյունավետ դիտարկման նպատակով ստեղծված հարթակ է, որը նպատակ ունի ապահովելու դիտորդական կազմակերպությունների, ինչպես նաև ՋԼՄ-ների հնարավորինս լայն և սերտ համագործակցությունը: ՔԴՆ հնարավորություն է տալիս նաև ստեղծել դիտորդական թիմ յուրաքանչյուր տեղամասում, ինչն էպես մեծացնում է դիտորդական աշխատանքի արդյունավետությունը: ՔԴՆ նպատակներից է ապահովել դիտորդական առավել լայն, փորձառու և մասնագիտացած համայնքի ձևավորումը, ընտրական գործընթացի և օրենսդրության խնդիրների առավել խորքային և հետևողական վերլուծությունն ու աշխատանքի ապահովումը, ինչպես նաև միասնական տեղեկատվական առավել լայն հասանելի հարթակի ձևավորումը :

• Խնդիրները

Հիմնական խնդիրներից են մեծածավալ դիտորդական առաքելության դեպքում որակյալ դիտորդական ռեսուրսի (մարդկային ռեսուրսի) ընտրության և որակյալ նախապատրաստման արդյունավետությունը, ինչը պայմանավորված է ժամանակի սղությանմբ:

Ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում ընտրական ծրագրերի համար դրամաշնորհներ չեն տրամադրվում, ինչը բացասաբար է անդրադառնում դիտորդական առաքելությունների կարողությունների ձևավորման շարունակականության վրա:

Հիմնականում ֆինանսական աջակցությունը ստացվում է միջազգային կազմակերպությունների դրամաշնորհների տեսքով, ընտրություններին նախորդող կարճ ժամանակահատվածում, ինչն իր հերթին սահմանափակում է որակյալ, վստահելի և արդյունավետ դիտորդների նախապատրաստման և ընտրության հնարավորությունը:

Ամփոփում.

Կարելի է փաստել, որ ընտրական օրենսդրության փոփոխությունները և ձեռնարկված այլ միջոցները չճառայեցին Սահմանադրության 2-րդ հոդվածով սահմանված ազատ ընտրության իրավունքի իրականացման և դրա երաշխիքների ապահովման մակարդակի բարձրացման, ինչպես նաև հանրային վստահության բարձրացման հայտարարված նպատակին:

2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների ընթացքում ի հայտ եկան ավելի խորքային խնդիրներ, որոնք լրջագույն մարտահրավեր են ընտրությունների միջոցով ժողովրդի իշխանության իրացման երաշխավորման և ապահովման հարցում՝ ազատ և արդար ընտրական իրավունքի ապահովման, պաշտպանության՝ ընտրախախտումների և ընտրական վեճերի կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու համար:

Որևէ առաջընթաց չի գրանցվել նաև բողոքարկման սահմանված գործընթացների և դրանց կիրարկման պրակտիկայի ոլորտում. դրանց անարդյունավետությունը փաստացի անհնարին է դարձնում ընտրական վեճերը իրավական ճանապարհով լուծելը և ընտրական իրավունքի պաշտպանությունը:

Ընտրական օրենսդրությունը պարունակում է կարգավորումներ, որոնք հակասության մեջ են ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հետ, չեն բավարարում իրական որոշակիության սկզբունքի չափանիշներին: Միևնույն ժամանակ, ընտրական օրենսդրությունն ունի էական բացեր ընդհանուր, հավասար, ազատ և գաղտնի ընտրական իրավունքի երաշխավորման տեսանկյունից: Էական են նաև ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության օրենսդրական երաշխիքների թերությունները:

Առավել ցայտուն կերպով արտահայտվեց իշխող կուսակցության կողմից իշխանության գրեթե բոլոր ճյուղերի նկատմամբ այնպիսի արդյունավետ հսկողությունը, որի պայմաններում պետական և կուսակցական գործառույթների վտանգավոր ծավալի միախլուսումն ամբողջովին պայմանավորում է ընտրությունների և ընտրախախտումների կապակցությամբ քննության արդյունավետությունը և ընտրական վեճերի ելքը:

5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանադրությամբ հռչակված՝ համընդհանուր, հավասար, ազատ, գաղտնի և ուղղակի ընտրական իրավունքի իրականացման արդյունքում ընտրությունների միջոցով ներկայացուցչական ժողովրդավարության հաստատման և ժողովրդի կողմից հանրային իշխանության ձևավորման նպատակով անհրաժեշտ է առկա առանցքային խնդիրների հիմնավոր և համապարփակ լուծում, որը հնարավոր է միայն շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կառույցների մասնակցությամբ և հնարավորինս լայն հանրային քննարկումների և լայն հանրային կոնսենսուսի միջոցով:

Անհրաժեշտ է ապահովել ՀՀ Սահմանադրական դատարանի 28.04.2017թ. ՍԴՈ 1364 որոշմամբ վեր հանված օրակարգային խնդիրների խորքային քննարկում և լիարժեք լուծման մեխանիզմների մշակում:

5.1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Համամասնական ընտրակարգի լիարժեք ապահովման նպատակով անհրաժեշտ է ապահովել իրական քաղաքական ծրագրային մրցակցություն կուսակցությունների միջև՝ բացառելով քաղաքական և գործարար շահերի վտանգավոր միահյուսման հնարավորությունները:

Անհրաժեշտ է մշակել պետական/վարչական ռեսուրսի օգտագործման (չարաշահման) բացառման արդյունավետ օրենսդրական լուծումներ՝ հավասարակշռելով դրանք արդյունավետ և համաչափ պատասխանատվության միջոցներով:

Կուսակցությունները պետք է գործադրեն ավելի մեծ ջանքեր՝ ընդլայնելու ընտրական օրենսդրության և գործընթացների վերաբերյալ իրենց վստահված անձանց գիտելիքները և առավել պատշաճ կազմակերպեն ընտրական գործընթացների վերահսկողությունը:

5.2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ

Անհրաժեշտ է կիրառել այնպիսի լուծումների համալիր, որը թույլ կտա.

- Ապահովել բոլոր մակարդակի հանձնաժողովների ձևավորման թափանցիկության բարձր մակարդակ և այդ հանձնաժողովներում անկախ շրջանակների և մասնագետների ներգրավման հնարավորինս լայն խողովակներ:
- Ձևավորել ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգում հակակշիռների և փոխադարձ զսպումների արդյունավետ մեխանիզմ՝ ապահովելով իրական անկախություն և ինքնուրույնություն և բացառելով միջամտությունը նրանց գործունեությանը:
- Ունենալ հանձնաժողովների ձևավորման այնպիսի համակարգ, որը կապահովի նրանց պարբերական թարմացումը և կբացառի սերտաճման բացասական երևույթները:
- Ստեղծել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմի առաջադրման և ձևավորման այնպիսի համակարգ, որը կապահովի թեկնածուների հնարավորինս լայն շրջանակի առաջադրման հնարավորություն, մասնավորապես՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ:
- Ապահովել հանրային իրական և արդյունավետ վերահսկողության առավել լայն և ընդգրկուն մեխանիզմներ թե՛ ՏԸՀ-ների և թե՛ ԿԸՀ-ի գործունեության նկատմամբ:
- Երաշխավորել օրենսդրության մակարդակով պատասխանատվության այնպիսի միջոցներ, որոնք կհավասարակշռեն ընտրական գործընթացների մասնակիցների բոլոր իրավունքները և կբացառեն իրավունքների խախտմամբ արատավորված անձանց ներգրավումը ընտրական հանձնաժողովներում:

5.3. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ

- Ներդնել ընտրողների ռեգիստրի և բնակչության ռեգիստրի համապատասխանության ստուգման արդյունավետ և ընտրական գործընթացում ներգրավված բոլոր սուբյեկտներին հասանելի մեխանիզմ և հնարավորություն, ինչը կբացառի դրանց ուռճացման որևէ հնարավորություն:
- Տարանջատել քվեարկության օրը (առնվազն ԸՕ-ով սահմանված քվեարկության օրվան նախորդող ժամանակահատվածում ճշտված ցուցակների հրապարակման պահին) Հայաստանում գտնվող և Հայաստանից բացակայող ընտրողների ցուցակները:
- Ներդնել ընտրողների ստորագրված ցուցակների որոնելի համակարգ, որը հնարավորություն կտա սեղմ ժամկետներում արդյունավետորեն իրականացնել անհրաժեշտ ստուգումները, որի արդյունքները հնարավոր կլինի օգտագործել ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակներում:
- Ապահովել ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքավորումներ մուտքագրված տվյալների մատչելիություն և դրանց ստուգման արդյունավետ և ընտրական գործընթացում ներգրավված բոլոր սուբյեկտներին հասանելի վերահսկողության մեխանիզմ:

5.4. ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՈՒՄ

Անհրաժեշտ է վերացնել նոր ԸՕ-ով ներմուծված՝ դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների իրավունքները սահմանափակող կարգավորումները, բացառելով նաև խտրական կարգավորումները:

Միջազգային հասարակական կազմակերպություններին հրավիրելու իրավասությունը պետք է վերապահել ոչ միայն պետական, այլև հասարակական կառույցներին:

5.5. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

Ընտրական իրավունքի պաշտպանության, ընտրական վեճերով արդյունավետ քննության իրականացման և ընտրությունների արդյունքների վրա ազդեցությունների արդարացի գնահատման երաշխավորման և ապահովման նպատակով անհրաժեշտ են համակողմանի և համակարգված միջոցառումներ, ինչպես օրենսդրական, այնպես էլ՝ իրավակիրառ դաշտում: Մասնավորապես.

- Վերլուծել և վերանայել ընտրական իրավունքի պաշտպանության հասանելի և արդյունավետ միջոցների երաշխավորման և ապահովման հարցերը ընտրական վարչարարության մարմինների, դատարանների և ՍԴ-ի առջև:
- Վերանայել ընտրական վեճերով դիմում-բողոքների ներկայացման ընթացակարգերի և ժամկետների, դրանց քննության ընթացակարգերի և ժամկետների օրենսդրական կանոնակարգումները արդյունավետ քննության համար անհրաժեշտ երաշխիքների ձևավորման և ապահովման տեսանկյունից:
- Օբյեկտիվ ընտրական իրավունքի պաշտպանության նպատակով բողոքարկման իրավունք վերապահել ընտրողներին և դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպություններին:
- Նախատեսել բողոքարկման սուբյեկտների առավել լայն շրջանակ, այդ թվում՝ դիտորդական կազմակերպություններին վերապահել իրավունք իրենց հավատարմագրած դիտորդների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև:
- Ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովման նպատակով անհրաժեշտ է վերանայել և երկարաձգել արդյունքների վերջնական ամփոփման ժամկետները:
- Ընտրական վեճերի առանձնահատկությունների և ժամկետների սղության հաշվառմամբ անհրաժեշտ է էապես պար-

զեցնել բողոքներին առաջադրվող ձևական պահանջները՝ բացառելով դրանցով պայմանավորված սահմանափակումները և երաշխավորել իրավունքի պաշտպանության դիմելու մատչելիությունը առավել լայն շրջանակի համար:

- Ընտրական վեճերով ապահովել ընտրական հանձնաժողովների հետ պաշտոնական էլեկտրոնային կապի միջոցներով հաղորդակցության և փաստաթղթաշրջանառության հնարավորությունը:

5.6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐ

Օրակարգային հարցեր պետք է դարձվեն արձանագրված բոլոր խախտումներն ու խնդիրները, որոնք պետք է վերլուծվեն ընտրական օրենսդրության և պրակտիկայի շրջանակներում, բացահայտվեն և վերացվեն մատնանշված համակարգային խնդիրները:ս

- քաղաքացիները պետք է կարևորեն դիտորդական առաքելության դերն ու նշանակությունը, մասնակցեն միջազգային ստանդարտներին համապատասխանող ազատ և արդար ընտրական համակարգի ստեղծման նկատմամբ հանրային պահանջի ձևավորմանն ու ստանձնեն որոշակի անձնական պատասխանատվություն ընտրական գործընթացները վերահսկելու ուղղությամբ.
- միջազգային կառույցները պետք է վերանայեն իրենց մոտեցումը և ընտրական օրինագծերի տեքստերի կամ ընտրությունների վերաբերյալ իրենց գնահատականները հիմնավորեն օբյեկտիվ փաստարկներով՝ ձեռնպահ մնալով հապշտապ եզրակացություններից ու քաղաքական կոնյունկտուրային տեքստերից:

